891.99
Ռ — 71

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ Библиотека
ՀՍՍՀ - ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

98 19 NOV 20

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ԿՅԱՆՔԸ
ՀԻՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1933

14241-57

22.04.2013
31356

Պատասխանատու խմբագիր՝ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
Տեխնիկական խմբագիր՝ ՏԱՃԱՏ ԽԱՉՎԱՆՔՅԱՆ



***

Մայրս գնում է գոմ՝ կովը կթելու:

Գնում է և երկա՜ր ժամանակ չի վերադառնում:

— Քա՛, աղջի՛, հարսն ի՞նչ յեղավ,— հանկարծ բացականչում է հորաքույրս,— գոմ գնաց ու չեկավ:

Վազում են գոմ, տեսնում են մորս՝ կովի մոտ նըստած, գրկում — մի կապուտաչյա յերեխա:

Այդ յերեխան յես եյի:

* *

Մայրիկս ինձ գրկել էր, կանգնել կտուրի վրա և կանչում էր.

— Լուսինկա՛ պապա, լուսինկա՛ պապա, եկո՛, եւ չա՛ր տղան տա՛ր...

Յես նայեցի մորս կանչած ուղղությամբ և տեսա լուսինը, որ մանիշակագույն մթնշաղում, մուգ կապույտ լեռան վրա նստել էր: Այնքա՜ն մեծ էր այդ լուսինը: Դրանից հետո յես յերբեք չտեսա այդքան մեծ լուսին: Նայելով և հրճվելով նրա բոցագույն փայլից՝ մի ձեռքով բռնեցի մայրիկիս մազերը, կախվեցի առաջ — ուզում եյի ավելի մոտ լինել լուսնին — և մյուս ձեռքով յե՛ս էլ սկսեցի կանչել: Մայրիկս նայեց ինձ և հանկարծ սղմեց ինձ կրծքին — այնպե՜ս պինդ, այնպես գորովալից: Թեև յես կորցրի լուսինը, բայց դուրեկան էր ինձ համար մորս սղմումը, ինձ դուր էր գալիս մորս բուրումը:

Առաջին անգամն էր, որ յես այդքան բարձրից դիտում եյի շրջապատը — ընդարձակ և զմրուխտյա մի դաշտ՝ կապույտ լեռների շղթայով յերիզված: Մայրիկիս թևի վրա նստած՝ մի ձեռքով բռնած մորս մազերը, յես ինձ նետում եյի առաջ, ուզում եյի թռչել դեպի զմրուխտյա դաշտերը. ինձ այնպես էր թվում, որ յեթե մայրիկս թողնի՝ յես պիտի կարողանամ ցատկել դիմացի կտուրը և այդ կտուրից էլ դեպի դաշտը: Հարևան կտուրը բարձրացավ մի կին և, տեսնելով լիալուսինը, խաչակնքեց և մեզ դառնալով, ասաց.

— Ջոճուխը տեներն*) ես հանեք...

— Հա...

— Քա՛. ինչքա՜ն գիրցեր է, աչք չիտամ...

Մայրիկս քնքույշ կմշտեց իմ ամենափափուկ տեղը:

Յես այլևս չլսեցի թե ինչ խոսեցին, ինձ հափշտակել էր ընդարձակ և անդորր տարածությունը: Դաշտում իմ աչքին խփում եյին մինարեները և կաղամախիները, յերկուսն էլ դեպի յերկինք եյին թռչում, յերկուսն էլ

*) կտուր

որորվում եյին մթնշաղում: Կտուրից յես սկսեցի տեսնել և տները, հենց առաջին անգամ տեսա մեր տունը: Մինչև այդ ինձ միայն փողոցի դուռն եյին հանում կամ շատ շատ լուսամուտի առաջ կանգնած բռնում եյին, որ դիտեմ, յես տեսել եյի մեր դիմացի տունը և նրա ձևը, մեր տունը դեռ չեյի տեսել. չեյի տեսել այնպիսի կետից, որ կարողանայի ամբողջականապես ըմբռնել նրա ձևը: Յերբ մայրիկս ինձ տարավ կտուրի մյուս ծայրը, յես ներքև նայեցի և տեսա մեր պարտեզը. տեսա ավազանը, որ փոքրացել էր, տեսա Գոգոյին, որ ծաղիկներն էր ջրում, նա էլ կարճացել էր, թխենու մեծ ծառերն անգամ թզուկացել եյին: Դարձա մայրիկիս զարմացած, մայրիկս չէր փոքրացել:

Մթնշաղի մանիշակագույն մշուշում սուրում եյին ծիծեռնակներ, բյուրավոր ծիծեռնակներ, վորոնցից վոմանք իմ գլխի վրայով, շատ մոտիկից, սուր ճիչ արձակելով՝ անցնում եյին: Յերբ յես հետևում եյի նրանցից մեկն ու մեկի թռիչքին և պատկերացնում եյի նրա թռիչքի գիծը իբրև թել, իմ առաջ գծվում էր խառնված թելի մի կույտ:

Մայրիկիս գրկում յես այնքան խաղացի և թռչելու փորձեր արի, որ հոգնեցի, փաթաթվեցի մայրիկիս վզով, կամաց-կամաց գլուխս կախվեց ստինքների վրա, շրթներս հպան նրա ջերմ պտուկներին: Միայն առավոտյան աչքերս բացի: Արև էր: Մայրիկս քնած էր, կուրծքը բաց: Վեր կացա, մոտեցա նրան, գլուխս թաղեցի նրա կրծքի մեջ: Մայրիկս, առանց աչքերը բանալու, մի թևով պինդ գրկեց ինձ:

Ա

Հայրս կալվածատեր եր և մեր գավառում պետական բարձր պաշտոնատար:

Բայց յես պետք ե սկսեմ նրա մահից:

Նա մահվան պատրաստվեց այնպես, ինչպես նորափեսան ե պատրաստվում իր հարսանիքին:

Մեռնելուց մի ամիս առաջ (դեռևս վոտի վրա յեր և բավականին առույգ, բայց գիտեր, վոր հաղթում ե մահվան վորդը) կանչեց հյուսնին, միասին ջոկեցին յերկար ընկույզե տախտակներ:

— Ես տախտակին վրա վոստ կա,—ասաց հայրս և մեկդի նետեց տախտակը, փոխարինելով մի ուրիշ մաքուր տախտակով:

Ապա պառկեց հատակին, պարսկական քիրմանշահ գորգի վրա, հյուսնը վերցրեց նրա հասակի չափը:

— Ձինարի բոյ ունիս, Հաջի եֆենդի,—ասաց հյուսնը՝ չափը վերցնելուց հետո:

Հայրս ժպտաց անտարբեր:

Յեվ հորս ներկայության, նրա խստագույն ցուցմունքների և հրահանգների համաձայն՝ հյուսնը շինեց հորս դագաղը...

Մայրս, առանձին սենյակում, վողբում եր աղիողորմ, մինչդեռ հյուսնը, հորս հետ կատակելով, պատմություններ պատմելով և մեկ-մեկ ողի ծնկելով, չափում եր ընկույզե տախտակը, կտրում, հղկում, ագուցում և փայլեցնում:

— Ուստա Մարգա՛ր, հեչ գամ չիպտի գործաես,— պատվիրում էր հայրս:

— Գլխո՛ւս վրեն, հաջի էֆենդի:

Իսկ յես միամտորեն, թեթևացույն հոգով, դիտում էյի ուստա Մարգարի աշխատանքը: Կարծում էյի, վոր հայրս պատրաստվում էր ճամբորդության, գնալու յեր Ստամբուլ կամ ավելի հեռու քաղաքներ և ինձ նվերներ էր բերելու:

Ամեն անգամ յերբ նա վերադառնում էր ճանապարհորդությունից՝ վողողում էր տունը նվերներով:

Ուստա Մարգարը շինեց դագաղը, վերջացավ: Կարծես մի սեղան շինեց կամ մի պահարան: Այնքա՜ն անտարբեր:

— Հաջի էֆենդիիս պատմեմ, ավելի քան տարի առաջ...— պատմում էր ուստա Մարգարը, ծիծաղում և հղկում տախտակը:

Բայց յերբ հայրս ընտանիքի բոլոր անդամներին դուրս հանեց, վորպեսզի դագաղի մեջ պառկի վերջին անգամ ստուգելու՝ ուստա Մարգարն էլ դուրս յեկավ սենյակից սարսափով:

— Ղուրբա՛ն ըլլիմ աստծո զորության, ալլահի ջիգեր ունի,— ասաց ուստա Մարգարը:

Դուրսը բոլորն էլ լաց էյին լինում, բոլորն էլ մտանկցում էյին մորս վողբին:

Իմ աչքերն էլ լցվեցին արցունքով:

Իմ հոգու թեթևությունը փոխվեց մի մթին ծանրության: Ականջիս շշուկ ընկավ, վոր հայրիկը շուտով պետք է մեռնի՜...

Ինձ պատեց մի վախ: Այդ վախը գնալով աճեց: Մինչև յերեկո նա տիրեց ամբողջ իմ հոգուն:

Սկսեցի վախենալ տան բոլոր իրերից, մանավանդ դուռը բաց թողնված պահարանից, ջրհորից, սանդուխների տակը դրված մեծ սնդուկից, վորի մեջ յերբեմն մենք պահվում էյինք խաղի համար:

Յերբ հայրս դուռը բաց արավ, վո՜չ վոք չգնաց մոտը, բացի ինձանից:

Գնացի, փաթաթվեցի նրան, գլուխս խրեցի նրա կրծքի մեջ, խո՛րը, խո՛րը շնչեցի նրա շապկի հոտը:

Այդ հոտը աքացրեց ինձ, փարատեց իմ սարսափը:

Հայրս դրկեց ինձ, նայեց աչքերիս մեջ:

Յես տեսա արցունքի կաթիլներ նրա աչքերում:

Մորս արցունքները շատ էյի տեսել, բայց հորս արցունքները—յերբեք:

Առաջին անգամ տեսա այրող արցունքը:

— Յավրում, մավի գյոզլի յավրում*),— շշնջաց նա ու ինձ վողողեց համբույրներով:

Հետղհետե բոլորն էլ յեկան, շարվեցին հորս առաջ: Նա նստած էր իր անկողնի վրա, յես՝ նրա գրկում:

Գլուխը վեր բարձրացրեց, նայեց շուրջինններին և, տեսնելով լացից ուռած աչքերը, բարկացավ:

— Ի՞նչ եք դեմս կայնել, հեռացե՛ք:

Նրանք հեռացան:

Ծառան դագաղը շալակեց և տարավ դուրս:

Հայրս գլուխը հակեց իմ վրա, ինչպես մի մթին և ծանր ամպ:

Քիչ անց՝ յեկավ ուստա Մարգարը:

Հայրս գովեց նրա աշխատանքը, վճարեց և մի քանի բաժակ օղի ավեց:

Ուստա Մարգարը բարձրացրեց առաջին բաժակը:

— Շնորհակալ եմ, հաջի՛ էֆենդի, բարով... հանկարծ լռեց և ապշահար կանգ առավ: Բաժակը վեր բարձրացրած՝ մնաց օդում:

— Վնաս չունի, խմե՛,— ասաց հայրս և ժպտաց:

* * *

Յերկու որ անց՝ մտա փայտանոցը:

Սպիտակ սավանով փաթաթված յերկար մի բան էր

*) Տղաս, կապուտաչյա տղաս

դրված պատն՝ի վեր: Մոտեցա: Բաց արի—հորս դագաղն եր:

Սարսափով վազեցի դուրս:

Հանդիպեց մայրս: Մի ակնթարթ նայեց աչքերիս և անմիջապես փակեց իր ձեռքերով և ինձ սեղմեց կրծքին: Ո՞վ ե իմանում, ի՞նչ եր տեսել նա իմ աչքերում: Դողում եյի ամբողջ մարմնով, կարծես մերկ թողնված եյի ցուրտ քամու առաջ:

Մայրս վոչինչ չհարցրեց ինձ: Յերևի նա զգաց, վոր հորս դագաղն եյի տեսել:



* * *

Հայրս պաշտոնատեղին եր գնում բարձր, սպիտակ և ռեհվան*) եշի վրա նստած, վորի թամբը զարդարված եր արծաթյա աստղերով և փիրուզյա քարերով: Եշը փողոցի քարերից կայծեր եր թռցնում վազելիս: Ծառան վազում եր նրա հետևից հևիհև, վորպեսզի պաշտոնատեղին հասնելուն պես, մի ձեռով սանձը բռնի և մյուս ձեռով ել՝ ասպանդակը, վոր հայրս ցած իջնի:

*) Քայլքի տեսակ

Ծառան եշը տուն եր բերում առանց նստելու: Յեվ վո՛չ վոքի ել թույլատրված չեր այդ: Յե՛րեկոյան նորից եր տանում, վոր հայրս վերադառնա: Յեվ ամեն օր միևնույնը:

Մենք մի ձի եյինք պահում, վորպեսզի յերբ ազգականներից և բարեկամներից մեկն ու մեկը գար և ասեր թե՝

«Հայրս բարև ըրավ, ըսավ քի՝ եշը թող տան, գեղ գնամ գամ», եշի փոխարեն՝ ձին տայինք:

Հայրս չեր սիրում, վոր իր եշի վրա ուրիշն եր նստում: Յեվ դժվար թե ինքը՝ եշը թույլ տար, վոր, բացի հորից, վորևե մեկը նստեր վրան: Նստողի գլխակով անպայման մի փոս կլցներ:

Հորս արիստոկրատիզմից շատ բան եր անցել եշին, նրա հոգեբանությունը նույնպես զարգացել եր այդ ուղղությամբ:

Հորս տուն վերադառնալուց առաջ՝ ամբողջ տունը շարժման մեջ եր—ընտանիքի ամեն մի անդամը մի բան եր անում, դարսում, սրբում, դասավորում, տեղափոխում: Տունը պետք ե լիներ խստագույն կարգապահության մեջ—կոշիկները դարսված, պահարանների դռները փակ, այգու ծաղիկները ջրած, յերեխաները սանրված, ընտանիքի բոլոր անդամների շորերը փոխված, ջրի բաժակը ջրամանի մոտ՝ կոթը վոչ դեպի պատը դարձված, ավելն իր անկյունը, շորերի կախարանի նրա՛ վերարկույի մեխը բոլորովին ազատ:

Դռան առաջ նա իջնում եր եշից: Մի պահ սպասում եր, մի սիգարեթ եր այրում, վորպեսզի ամբողջ տունն իմանա, վոր յեկել ե:

Նրան կարիք էլ չկար, վորովհետև փողոցի անկյունից ճիչը սկսում էր գալ և հայտարարել ժամանումը:

Մայրս հանդիպում էր նրան բակում, միասին բարձրանում վեր: Մեզանից վո՛չ վոք նրա մոտ չէր գնում, նա ինքը բոլորին կանչում էր հատ–հատ, համբուրում, շոյում, կշտամբում և ճանապարհ գցում:



⁂

Կիրակի օրերը նա գնում էր ագարակ և մինչև կես գիշեր մնում այնտեղ: Մարմարյա ավազանի յեզրին ողի յեր խմում, տնից հատուկ ուղարկված ընթրիքն անում: Այդ ընթրիքը մոտավորապես պատրաստված էր լինում տաս մարդու համար—մի զույգ հանկարծակի հյուրեր հայտնվեյին:

Կես գիշերին վերադառնում էր եշով:

Յեթե յերեք որ էլ ուշանար—մայրս անքուն պետք է սպասեր նրան, մի քանի խոսք փոխանակեր և ապա գնար քնելու:

Իմ մանկությունն անցել է այդ ագարակում, մարմարյա այդ ավազանի յեզրին, անցել է աղավնու սպիտակ թևերի վրա:

Գիշերը՝ կապույտ յերկնքից այնքա՛ն աստղեր եյին թափվում նրա պայծառ, աստղասարսուռ խորության մեջ:

Ցերեկն արեգակը լողում էր նրա մեջ, կարծես զովանում էր նրա ցուրտ ջրերում, իսկ գիշերը տիեզերական էր, խորհրդավո՛ր, խորի՛ն, խորի՛ն...

Գիշերը սպիտակ հատակը կապտանում էր, ջուրը մուգանում և աստղե՛ր, բյուրավո՛ր աստղեր: Լռությո՛ւն, անսահման լռությո՛ւն: Ուռիները կռանում եյին ավազանի վրա, ամբողջ ագարակի ծառերը շշնջում եյին, հանկարծ մի ասուպ ճեղքում էր ավազանը և կորչում: Համատարած, մե՛ծ–մե՛ծ թևերով գիշեր, յերկա՛ր, համասփյո՛ւռ մի յերազ, կապույտ, մուգ–կանաչ և վերևում սպիտակ ամպեր: Կապույտը յերկնքից կարծես կաթկթում էր շիթ առ շիթ, յեղնիկի արցունքների նման, անիմանալի մի բան, դողի նման, սարսուռի նման ծայր էր առնում, տարածվո՛ւմ, տարածվո՛ւմ և տիեզերանո՛ւմ:

Մրգե՛ր, մրգե՛ր, մրգե՛ր, վոր գույն եյին ճչում, խոտը հրավառ կանաչ, կանաչի մեջ կարմիր կակաչներ: Սարալանջ, վոր ներկվում էր արևային արյունով, սարալանջի յետևը կապույտ լեռներ, այդ լեռների գրկում, բարձր, ջի՛նջ, փիրուզյա մի լիճ, կարծես բյուրավոր մանկական աչքեր եյին քթթում:

Խաղողի հատիկները կախվում եյին ինչպես մանկական պայծառ ջի՛նջ աչքեր: Կարմիր, սև, դեղին և սպիտակ խաղողի վողկույզները ծծում եյին արևից լույս, գույն և քաղցրություն, կարծես հենց արևն էր խտացած, կաթիլ–կաթիլ մզված, ապա լերդացած և կլորացած:

Աշնան այդ ագարակը ծոցվորվում էր, հողը կարծես պատռվում էր իր սեռային անզուսպ կատաղությունից, հորդում էր միրգը, վարարում լեռներից հոսող ջրերի նման, հնձանը լցվում, խաղողը փրփրում, վա-

գում, լցվում կարտոնների մեջ երբեմ հողի ուրախություն, երբեմ արևի ճիչ, երբեմ արևի և հողի հզոր և միստիկական յերգ:

Յես ել ուզում եյի յերգել, յերգել լիահնչյո՛ւն, արևալի՛ց և արևակո՛ծ:

***

Աշնան այդ լիառատ օրերին հայրս պատրաստվում եր գնալ Ստամբուլ:

Ասում եյին, վոր Ստամբուլում մի կին դյութել ե նրան:

Բայց այդ մասին այն ժամանակ, յերբ կանեմ մորս պատմությունը:

***

Ճաշում ենք—լո՛ւռ:

Լռությունը դաժանագույն պայման եր, վո՛չ մի ծիծաղ, վո՛չ մի խոսք—այսպես եր պահանջում հայրս:

Մայրս դեմ եր այդ լռության, նա սիրում եր, վոր ճաշն անցներ ճիչերով, ծիծաղով, թեև անկարգ, բայց ուրախ կանչերով, մեկը փրթկացներ, պատառը բերանում, մյուսների յերեսը (այսպես եյինք ճաշում, յերբ հայրս բացակա յեր), բայց յերբ հայրս ներկա յեր, մայրս եր, վոր լռության եր հրավիրում բոլորին, վորովհետև այդպես եր ամուսնու կամքը:

«Ծիծաղ և խոսակցություն ճաշից առաջ և հետո, բայց յերբեք—ճաշի ժամանակ»—այս եր հորս փիլիսոփայությունը:

Յերբեմն փորձում եյինք չուռ տալ կարգը, հայրս սաստում եր.

— Ծո՛, ձանե՛գ...

***

Տարին յերկու անգամ հայրս հագնում եր նշանազգեստը, հագնում եր հայհոյելով, վորովհետև այդ զգեստով դժվար եր նստել եշի վրա: Այդ նշանազգեստը յերկար, սև սյուրտուկ եր, առաջը վերից վար կոճկված, բարձր օձիքով՝ վրան սրմայով բանված, ծոպավոր, վոսկեհուռ ուսադիրներ, կրծքի վրա աջ ուսից չեղակի իջնում եր ալիքավոր լայն կանաչ ժապավենը: Գնում եր պետական պարադի, վերադառնում տուն և անմիջապես հանում, կրկնելով. «օ՛ֆ օ՛ֆ օ՛ֆ, օ՛ֆ, ազատվա»:

Այդ որն ամբողջ տունը լուռ եր, տոնական խաղաղություն, տան բակի սալահատակն այնքան մաքրված եր լինում, վոր աղոտորեն անդրադարձնում եր վրան քայլող մարդկանց ստվերները: Տան փասադը զարդարված եր լինում թրքական մահիկազարդ դրոշակներով, դուռը կամարված կանաչ ուռու ճյուղերով, վորոնց մեջ կախվում եյին գույնզգույն լապտերներ գիշերվա համար:



***

Ամառը հայրս անցկացնում եր յերկար ժամեր տան պարտեզում, ջրհորի մոտ, մի մեծ վարդենու կողքին:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Առավոտվանից Ջրհորն էյին իջեցնում մի փոքրիկ կողով: Այդ կողովում մի փոքրիկ շիշ ողի, կանաչի և մրգեր: Հորս նստելն ու Ջրհորի կողովը վեր բարձրացվելը մեկ էր լինում: Կողովի բովանդակությունը մայրս ինքը դարսում էր վարդենու տակ դրված սեղանի վրա:

Քույրերիցս մեկը հանում էր հորս կոշիկը, փոխարինելով հողաթափով:

Մեկ-մեկ յերկարում էր հայրս, բռնում վարդենու ճյուղը, մոտեցնում քթին և հոտոտում մութ-կարմիր, մեծ վարդը:

Այդ անեացած աշխարհի կապույտ մոխրում այժմ էլ, զգում եմ, կաթում է այդ վարդենու արյունը, կաթում է արցունքի նման, ցողի նման, կաթում է յեղևնու խեժի նման:

Այդ բոլորի վրա փլվեց կապույտ յերկնակամարը, փլվեց ինչպես հին տաճարի փիրուզյա գմբեթ յերկրաշարժից:

* * *

Նոր տարու գիշերը, յերբ մենք՝ մանուկներս, սպասում էյինք Ձմեռ-պապիին, վոր մեզ բերեր Նոր Տարու նվերներ, մեր դուռը բաղխեց մահը, բռնեց հորս ձեռքը, սեղմեց ջերմագին և նրանք, մահն ու հայրս, թևանցուկ դուրս յեկան տնից, քայլեցին սպիտակ ձյունի վրայով:

Գնացին և է՛լ չեկան:

Բ

Յես կարծում եմ, վոր աշխարհում յեղել են յերկու քրիստոնյա: Մեկը ինքը՝ Քրիստոսը, հրեա, իսկ մյուսը՝ մայրս, հայ:

Նա միայն մի գիրք էր կարդում—ավետարանը: Ամբողջ որը նա ջանում էր միայն մի բան անել—իրագործել ավետարանի պատվերները: Աղքատների հետ ճաշի յեր նստում, բարեգործություններ էր անում, պայմանով, վոր վո՛չ վոք չիմանա և....աղոթում էր:

Խոնարհ էր այդ կինը մինչև վոսկորների ծուծը: Նրա խոնարհությունն որգանական էր, վորովհետև այդ խոնարհության համար խոր տարաձայնություններ էյին ստեղծվել նրա և հորս միջև:

Մի կին, վոր պատրաստ էր ամուսնու ամեն ուզածն անել—թեկուզ վոճիր, բայց չէր կարող ազատվել խոնարհությունից: Խոնարհության գերին էր այդ կինը: Թող բոլորն անգոսնեյին իրեն, թքեյին և մրեյին—նա տանում էր միայն խոնարհությամբ—այդպես էր պատվիրում ավետարանը:

Հայրս պահանջում էր, վոր մայրս դառնա խանում, նստի դահլիճի վերի կողմը, ստինքների պես ուռած բարձերով շրջապատված, վոչ մի բանի չխառնվի և, գլխավորը, վո՛չ մի քահանա չհյուրասիրի տանը: Որգանական ատելություն էր զգում դեպի քահանաները:

Մայրս ամբողջ որը լաց էր լինում և լուռ, խոնար-

հությամբ, բայց աներևակայելի համառությամբ, պայքարում եր հորս այս աղայական փիլիսոփայության դեմ:

Գաղտնի, բոլորից պատվիրելով, վոր հորս լուր չտան՝ նա գնում եր և լվացարարուհուն ոգնում, ավլում եր տունը, աղախինների հետ հատակն եր սրբում, փոշու մեջ կորած, ճաշ եր յեփում, կրակ վառում, վերջապես անում եր այն, ինչ մի գավառացի կին առհասարակ անում ե:

Առանց այդ աշխատանքի՝ մեռած եր այդ կինը:

Բայց յերբ եշը ճանապարհ եր ընկնում դեպի հորս պաշտոնատեղին, փոխվում եր ամեն ինչ:

Մայրս և բոլորն ել հագնում եյին այնպես, վոր կարծես պետք ե հարսանիք գնան:

Հորս աչքերից չեր խուսափում, սակայն, մորս արիստոկրատիզմի սահմաններից դուրս գալը:

— Նորե՛ն,—խստությամբ շշնջում եր:

Մայրս խոնարհությամբ ժպտում եր, բռնում հորս ձեռքը, սեղմում եր յերեսին և լռում:

Հայրս ել լռում եր, ընկճվում եր նրա գգվանքի տակ, բայց ներսում զայրույթի փոթորիկը ծայր եր առնում, բարձրանում եր առանձնասենյակը և յերկար մտածում:

Յերկուսն ել համառ եյին:

Հայրս համառ արիստոկրատ եր:

Մայրս՝ համառ դեմոկրատ:

Մինչև վերջն ել հայրս չկարողացավ հաշտվել մորս դեմոկրատիզմի և մայրս ել՝ հորս արիստոկրատիզմի հետ:

* * *

Մայրս գիտեր, վոր հայրս Ստամբուլում «դոստ» ունի: Բայց այս մասին մորս հոգին խաղաղ եր:

Դա բխում եր վո՛չ թե նրա անտարբերությունից

դեպի ամուսինը, այլ խորախոր սիրուց: Սիրելով նրան՝ սիրում եր և նրա հանցանքը:

— Երիկ մարդ ե,—ասում եր մայրս,—սիրտը դադար չունի:

Հիշում եմ, վոր յերբ հայրս մեռավ և մեծ յեղբայրս սկսեց ճանապարհորդություններ կատարել դեպի Ստամբուլ կամ սև-ծովյան նավահանգիստներ՝ մայրս հանձնեց նրան ճոխ նվերների մի կապոց, վորպեսզի Ստամբուլում հանձնի իր ամուսնու սիրուհուն:

Հիշում եմ նաև, վոր մայրս կապոցը հանձնեց արցունքների մեջ խեղդված վո՛չ թե Ստամբուլի կնոջ պատճառով, այլ նրա համար, վոր հայրս չկար այլևս:

— Թող սաղ ըլլեր, հազարը սիրեր,—ասում եր նա:

Մայրս ցանկանում եր, վոր հորս նվիրական հիշատակներից մեկը, Ստամբուլի կինը, հարգված լինի:

Ստամբուլի կինն ել մորս կապոցն ընդունել եր արցունքներով:

Հորս մահվան մասին նա առաջին անգամ լսել եր մեծ յեղբորիցս:

Յերկու կանայք լաց եյին լինում մի տղամարդու համար, այն տղամարդու, վոր այդ յերկու կնոջ հոգին ել լցրել եր սարսուռով, ծծել եր յերկուսի շուրթերից ել սիրո արյունը:

Մեծ յեղբայրս պատմեց, թե ինչպես եր գնացել այդ կնոջ մոտ—Ստամբուլում: Կինն անմիջապես ճանաչել եր յեղբորս, գրկել եր, համբուրել և լաց յեղել:

— Բոյով-բուսով կնիկ եր, բարակ, յերկար մազերով, ընկույզի գույն աչքերով, հունական քթով, կոկորդի վրա սև խալ:

Մայրս հրճվանքով լսում եր յեղբորս պատմությունը և լաց լինում:

— Մեսումը*) վորբ մնաց,—ասում եր մայրս արցունքների միջից:

Մինչև այժմ ել չեմ կարողանում ընդգրկել մորս սիրո խորությունը: Յերբ փորձում եմ նայել այդ խո-

*) Խեղճ, անոգնական, վորբ:

րությանը մեջ՝ գլխապտույտ եմ ունենում և սիրտս դողում է այդ խորությունից:

Մայրս կրթված կին չէր, նրա ուսումն ավետարանից դենը չանցավ, բայց հզոր սիրո ազդեցության տակ՝ նա հասել էր հոգու անսահման խաղաղության:

Կինը, յեթե սիրի, յերան ծանրություն կարող է կրել իր հոգում:

* * *

Ինչպես ասացի, մորս գերագույն մխիթարությունն եր ամեն յերեկո կամ կիրակի ցերեկները ծալապատիկ նստել սենյակի մի անկյունը և ավետարան կարդալ, առաջ մեռած հորս հոգու, իսկ վերջերն էլ՝ պանդուխտ յեղբայրներիս համար:

— Գեորգիս համար գլուխ մը ավետարան կարդամ,—ասում եր նա և մի եջը բաց անում: Բանալուց հետո, նախքան սկսել կարդալը՝ նրա պայծառ և չարգանակագույն աչքերը լցվում եյին արցունքի կաթիլներով:

Մի գլուխ կարդալուց հետո՝

— Գլուխ մ'ըլ Լեվոնիս համար կարդամ:

Մենք բոլորս լցվում եյինք խոր և դողահար յերկյուղածությամբ, անծանոթ մի սարսուռ պատում եր մեր հոգին և մայրիկը դառնում եր մեր աչքին բոլորովին կերպարանափոխված մի կին: Ընթերցումից հետո՝ յուղին աղոթք եր անում:

Ամեն անգամ, յերբ ավետարանի անցքերի և անձնավորությունների մասին հարցեր եյինք տալիս նրան՝ նա բացատրում եր յուրահատուկ հասկացողություններով:

Մի որ յես պառկել եյի սադիրի*) վրա և կիսաքուն մրձակում եյի: Մայրս կարով եր զբաղված, իսկ մեծ հարսն ավետարան եր կարդում բարձրաձայն: Հանկարծ հարսն իր ընթերցումն ընդհատեց և մայրիկիս դառնալով՝ ասաց.

— Մայրի՛կ, քըզի բան մի տի հարցնեմ: Աստվածաշնչի մեջ գրված է, վոր ոձը խաբեր է Եվան, ոձի խոսքովը խնձոր կերեր է, վերջը ան խնձորեն Ադամին ըլ կերցուցեր է, աստված յերկուքին ըլ պատժեր է ու դրախտեն վռնտեր է, աս գլուխը հե՛չ չիմ հասկանար...

— Քա՛, հարս,—ընդմիջեց մայրս,—սուս, չոճուխը**) կլսե:

Մայրս ինձ եր ակնարկում: Մինչև այդ՝ յես կիսաքուն եյի, կարող եյի բոլորովին քնել, բայց մորս զգուշավորությունը լսելով, բոլորովին զարթնեցի:

— Չոճուխը քնացեր է,—պատասխանեց հարսը:

Մայրս հաստատ լինելով, վոր քնել եմ, սկսեց բացատրել ոձի պատմությունը:

— Հարսնո՛ւկ, ողո՛ւլ, յերկու հատ զավակ ունիս, ամմա դահա չատ ջահել ես, բան չես գիտեր,—սկսեց

---

*) Սադիր թախտ:

**) Չոճուխ—յերեխա:

մայրս:—Ինչո՞ւ համար է, որ կնիկներուն երես չեն տար, ժամուն մեջ չեն թողուր, որ կնիկները խորան ելլեն, կնիկ ըսվածը շատ մեղքեր ունի, աշխըրքիս շատ մեղքը կնիկներուն վզին է: Ես քըզի ըսեմ ատ պատմությունը, դուն մարդու բան մի՛ ըսեր: Եվան չափան ոյինի*) հաներ է, աստուծո խոշին չի եկեր, ինչու որ դահա աստված պսակի հրաման չեր տվեր, Եվան չի համբերեր, գացեր մտեր է Ադամին ծոցը, աստված ըլ բարկացեր է, անիծեր ու դրախտեն դուրս քշեր: Ոձը կնկան միջի կրակն է, քա՛, հեչ տեսե՞ր ես, որ երիկ մարդը կնկա ձեռք դպցնի, մինչև կնիկը պոչը չխաղցնե: Աչքը քոռնա Եվային, առանց պսակի չափան ոյինի հանեց և մեզ ըլ ձգեց աս կրակին մեջ, թո՛ղ քիչ մըլ համբերեր, աստված պսակի հրաման կուտար, էն ատենը թող մըտնար երկան ծոցը, զաթեն ուրիշ կինիկ ըլ չի կար, որ ձեռքեն առներ, մեկ մը ինք, մեկ ըլ Ադամն էյին ամբողջ աշխըրքի մեջ:

Հարսը միայն մի բացականչություն արավ.

— Քա՛...

— Եվան աննամուս կնիկ է եղեր, խոսքը մեջերնիս,—վերջացրեց մայրս:

* * *

Մինչև հիմա էլ չեմ մոռանա այն սարսափը, որ յես պատճառեցի իմ բարի մորը:

Ամառ էր: Տապից փախած՝ գնացել էյի մեր տան մութ խզենը**) և պառկել էյի հովանալու համար: Զգիտեմ ինչքան էյի քնել, յերբ մեկն սկսեց իջնել ցած: Յես աչքերս բաց արի և սկսեցի դիտել, հանկարծ ներքև իջնողը սարսափելի ճիչ արձակեց և փռվեց գետին: Յես ցատկեցի անմիջապես, դրսից վրա հասան ընտանիքի մյուս անդամները:

*) Ամուսնությունից առաջ հղիանալ:

**) Խզեն—ներքնահարկ:

Գետին փռվողը մայրս էր: Գրկեցինք և տարանք ննջարանը: Ջանազան կաթիլներով հազիվ կարելի յեղավ զարթեցնել: Ամբողջովին ուժգունել էր, նայում էր վախեցած աչքերով, մեկ՝ մեկին էր հառում, մեկ՝ մյուսին—պարզապես հորս էր փորձում: Վրա հասավ մեծ յեղբայրս (մեծ յեղբայրս 13 տարով փոքր էր մորից), անմիջապես գրկեց մորս գլուխը և հարցրեց.

— Ի՞նչ յեղավ:

Մորս լեզուն բացվեց:

— Խզենը սատանա կար,—շշնջաց մայրս,— աչքերը բոցի պես կփայլեյին:

Մեծ յեղբայրս կարծես ցնցվեց: Նա կարծեց թե մայրիկին մի բան էր պատահել, խելքին մի արատ էր հասել, բայց յես անմիջապես գլխի ընկա, մոտեցա մայրիկիս, գլուխս դրի նրա անուշաբույր կրծքի վրա և լացով ասացի.

— Խզենը պառկողը ե՛ս էյի, սատանա չէր:

Մեծ յեղբայրս ուզեց պատժել ինձ, բայց մայրս թույլ չտվեց: Շրթունքների վրա, այնքան սարսափից հետո, ծաղկեց մի թեթև ժպիտ, գրկեց ինձ և ասաց.

— Սատանայի աչքեր ունիս:

Յեվ գուրգուրանքով շոյեց նա իմ վոսկեգույն մազերը:

* * *

Գիշերը յես վեր կացա իմ անկողնից և գնացի մայրիկիս մոտ:

Տակավին իմ հոգին չեր հանդստացել նրա պատճառած սարսափից: Մինչև առավոտ յես քնեցի նրա անկողնում վզովը պինդ փաթաթված:

Առավոտյան յերբ նայեցի մայրիկիս աչքերին և հոգով ընկղմվեցի նրանց պայծառության մեջ՝ նրա ժպիտըն որորեց իմ հոգին:



* * *

Մայրս առողջ էր, ժիր և սիրուն։

Մորս հիշելիս՝ յես միշտ հիշում եմ նաև մեր պարտեզի նռենին։ Նրան շատ էր նման։

Նա բռնում էր ջրով լցված տաշտը, վեր էր բարձրացնում և, առանց ճիգի, միայն դաստակների ուժով, թափում էր։ Մի վորևէ սեղան, մի ծանր առարկա տեղափոխելիս՝ չէր կանչի վո՛չ վոքին ոգնության։ Բոլորը ինքն էր անում, անում էր թեթև, կարծես մի փոքրիկ ճյուղ էր տեղափոխում։

Ծննդաբերությունից միայն կես ժամ առաջ նա հրաժարվում էր աշխատելուց, դեմքի վրա հազիվ նշմարվում էր ցավագին ինչ վոր ծամածռություն, ապա ժպտում էր ջի՛նջ, գնում, առանձնանում, բռնում կողերը և ահա ծնված էր լինում մեզանից մեկն ու մեկը։ Ասում եյին, վոր մեզանից մեկ յերկուսը դեռ ամբողջովին լույս չտեսած, վոտները մորս մարմնի մեջ, սկսել են ճչալ։ Անզուսպ, առողջ մանուկներ, վորոնց արյունն այնքան շատ էր լինում յերբեմն, վոր վախենում եյին խեղդվելուց։ Մեզանից մեկն այդպես էլ խեղդվել էր մեկ-յերկու ամսական յեղած ժամանակ։

Մորս կաթը լինում էր հորդահոս։ Գնում եյինք, խնդրում կաթ չունեցող մայրերից, վորպեսզի իրենց լղար յերեխաները տան մորս կերակրելու։

Յես պայծառորեն հիշում եմ, դեռևս 3–4 տարեկան, վոր նստում եյի մորս գիրկը և սկսում եյի ծծել կաթը։ Մայրս մի մատով սեղմում էր ստինքը, վորպեսզի քթիս փոքրիկ ծակերն ազատվեն շնչելու։ Ծծում եյի անհագ

և փախստացնելով, ամբողջ հագագս լցվում էր թանձր կաթով։

Հիշում եմ մորս ստինքները, սպիտակ, մաքրամաքուր և բուրումնավետ, թուխ և ժիր պտուկներով։ Այդ ստինքների հաճույքը ըմբոշխնել եյին մի քանի տղամարդ—յես և յեղբայրներս։

Մա՛յր, հիշում եմ քո յերջանկությունը, մայրական բերկրանքը, յերբ յես և յեղբայրներս ըմպում եյինք կաթը քո մարմնի արևային խորությունից։

Մա՛յր, հիշում եմ քո խարտյաշ աչքերի զայրույթը, յերբ նոր բուսած սուր ատամներով ցավացնում եյինք ստինքներիդ պտուկները։

Նստել եմ շատ գրկեր, բայց վո՛չ մի գիրկ, մա՛յր, չի օրորել ինձ այնպիսի հեշտանքով, ինչպես քո գրկի քնարը։

Մայրը—դա հավիտենական, մշտաթարմ և մշտադալար լիրիքան է, դա վոսկյա ծառն է յերկնքի կապույտ դաշտում բուսած։

Ամենամռայլ թախիծն է պատում ինձ այժմ, յերբ հիշում եմ, վոր մի քանի անգամ կաթկթել են մորս արցունքներն իմ անառակությունների պատճառով։

Յես ուզում եմ, վոր այժմ մեկն ինձ դաժան կերպով խոշտանգի այդ անառակությունների համար, վորպեսզի հանգստանա իմ թշվառ հոգին, վորպեսզի խաղաղի մշտնջենական վողբն իմ վողբագին հոգում։

Իջնում է թանձրակարմիր և մեծաթև մի վերջալույս իմ ճակատի վրա։

Կոծում են հողմերը։ Աշխարհը ցուրտ է։

Փակեցե՛ք դուռը աշխարհի դեմ։

Բայց մայրս ժպտում է մեր կապույտ լեռներից բարձրացող արևի միջից, տեսնում եմ նրա ծամերը արևի շողերին խառնված և լսում եմ նրա շողերի ձայնը․

«Տուր թախիծդ ինձ, մանո՛ւկ իմ, յե՛րգն իմ կողերի, ցնծա գարնան մեջ, գարո՛ւն իմ ցնծագին, վազի՛ր բաց և դալար դաշտերում, իմ յեղնի՛կ թեթևասույր, սուրա՛ փրփրադեզ ալիքների վրա, ժպտա՛ ինձնից

ծծած կաթի մաքրությամբ, ջերմագին է աշխարհը, իմ զավա՛կ, իմ ծա՛ռ յերկնասլաց, իմ խնդությո՛ւն, իմ սե՛ր»:

Յեվ բացվում է մի մե՛ծ առավոտ, վորի թևերը վոսկեզօծում են իմ հոգու մռայլ ափունքները:

Սավառնում է տիեզերական ցնծությունը:

Արևի միջից լսում եմ նրա ձայնը:

Արևը՝ ինքը՝ մայր է խարտյաշ աչքերով և վոսկյա մազերով: Թափվում է կանաչների վրա նրա վոսկեհնչյուն յերգը:

Վողջ դալարն է սարսռում, մի ջերմագին մոր սիրտըն է շշնջում բոլոր պարտեզների բոլոր ծաղիկների բաժակներում:

Ըմպում եմ վարդի բույրը, թանձր, ինչպես մորս կաթը:

Իջնում է նորից գիշերը, խաղա՛ղ, զովագին և աստղասարսուռ, անհո՛ւն մի գիշեր:

Մայրս գնաց արևի հետ:

Սպասում եմ առավոտին, սպասում եմ, վոր մայրս ճչա նորից արևի հակինթյա սրինգով:

Գ

Այստեղ անմիջապես պետք է հիշեմ պապիս—մորս հորը:

Հակառակ մորս հեզահամբույր բնավորության՝ պապս խստաբարո մի մարդ եր: Կռվում եր ամենքի հետ, քառասուն տարով քեն եր պահում, բոլորին ծույլ եր անվանում, բայց ինքը, ամբողջ կյանքում, բացարձականպես վո՛չ մի աշխատանք չեր կատարել, կերել եր իր հոր հարստությունը, մեծագույն մասը փաստաբաններին եր կերցրել իր մի խոսքը անելու համար, և յերբ հոր հարստությունը մսխել, վերջացրել եր, վորդիներն եյին մեծացել և նրանց հաշվին եր ապրում:

Պապիրոսի թղթի վրա առավոտյան գրում եր թե՝ յեթե բազար գնա (յեթե գնա) ի՛նչ պիտի առնե: Այդ ցուցակը յերեք կամ չորս բանից եր բաղկացած լինում—2 օխա չաքար, 25 դրեմ զենջեֆիլ, մեկ շիշե քացախ և հաց—բայց այդ համարում եր աշխատանք:

— Կըսեն քի գործ չեմ ըներ, եսի գործ չե՞... հարց եր տալիս մեկն ու մեկին և ցույց տալիս պապիրոսի թղթի վրայի ցուցակը:

Ջին նստել և այգի գնալ գալն աշխատանք եր համարում, վորովհետև պահապանին մի քանի հայհոյանք տված կլիներ: Ցեկեղեցի գնալը, աղոթք անելը և տերտերին հայհոյելն էլ աշխատանք եր և գերաշխատանք, յեթե սկանդալը մեծ եր լինում:

Իր հարազատներից և ծանոթներից վո՛չ վոքին իսկական անունով չէր կանչում—«չունը, քեռփակը, սև կատուն, փոթոն, աղվեսի պոչը, սատանի քիթը, քեչը, փիսը, թուլ բերանը, կախ կոկովը, փաթլախը, «քոռը»—և այսպես անվերջ ածականներ: Որինակի համար իմ մասին խոսելիս՝ ասում էր.

— Մեր կապոտ չունը:

Յեկեղեցում, յերբ քահանան տեսներ, վոր հաջի Առաքել աղան յեկեղեցումն է, վոչ մի աղոթք չէր կըրճատում, վորովհետև պապս, նույն հաջի Առաքել աղան, իր կանգնած տեղից բարձրաձայն շարունակում էր կըրճատված աղոթքը: Պատահեց մի անգամ, վոր քահանան գիտենալով հանդերձ, վոր հաջի Առաքել աղան յեկեղեցումն է, կրճատեց մի աղոթք, պապս շարունակեց, քահանան ականջ չկախեց, պապս ավելի բարձրաձայն և ավելի համառորեն շարունակեց՝ խանգարելով քահանայի մտադրությունը՝ այդ որը մի քիչ ավելի շուտ վերջացնելու ժամերգությունը: Բայց սրանով չվերջացավ, պապս սպասեց, վոր քահանան դուրս գա յեկեղեցուց:

— Եկեր պատարագիչ չըլլեյիր, վոտիս տակը կառնեյի քեզ, շո՛ւն շան վորդի:

Ապա ժամկոչին նկատողություն էր անում, վոր զանգը քիչ տվեց, լուսարարին հայհոյում էր, վոր յեկեղեցու մեջտեղի կանթեղը շուտ պրծավ և այլն:

Տուն վերադարձին, տան բոլոր անդամների բերաններից հոտ էր քաշում թե պատարագից առաջ բան կերե՞լ են: Ամեն մեկին կանչում էր թե՝

— Հո ըրե:

«Հո» էյինք անում և ուտում ապտակը, ո՞վ կարող էր բան չուտել մինչև պատարագի վերջը:

Մենք կաղամբը հում էլ ուտում էյինք, վորովհետև քաղցր էր լինում, ճիշտ մրգի նման բերում էյին սեղան, ջարդված:

Մի անգամ ծառան շուկայից կաղամբի մի գլուխ էր բերել: Մորեղբայրներից մեկը՝ Պարթևը՝ ճանկեց կա-

ղամբը և ուզեց մի կտոր պոկել: Պապս նրան սաստեց, վոր «մինչև սեղան չի գա, չի պտի ուտես»:

Բացի սաստելուց՝ նրա թաթիկին մի հատ էլ խփեց, բայց յերբ կաղամբը ջարդեցին և բերին սեղան, Պարթևը հրաժարվեց ուտելուց: Պապս հրամայեց նրան ուտել, նա համառորեն հրաժարվեց: Այս անգամ պապս բռնի մի կտոր կոխեց նրա բերանը և սկսեց խփել գլխին:

— Ստակես նէ՝ տ՛ուտես:

Պարթևը ցավից սկսեց լաց լինել և ճչալ կաղամբի խոշոր կտորը բերանում:

— Հաջի՛ աղա, կուտե, Հաջի՛ աղա, կուտե,—աղաչում էր տատս, բայց հաջի աղան խփում էր Պարթևին և գոռում...

— Ուտելու խշրտոցը տի լսիմ...

Յեվ Պարթևը հարվածներից ազատվելու համար՝ սկսեց կես լաց լինել և կես ուտել, և պապս հանգստացավ՝ լսելով կաղամբի ատամների տակ տրորվելու յուրահատուկ խշրտոցը:

Պապիս բեխերն այնքան յերկար էյին, վոր հասնում էյին մինչև ականջները: Նա խորագույն հպարտությամբ դիտում էր այդ բեխերը հայելու մեջ—ամեն անգամ ամեն մի պոչը յերեք-յերեք անգամ շոյում էր և հեռանում հայելուց:

Սովորություն ուներ նա, վոր յերբ Ամերիկայից նամակ էր ստանում՝ անպայման ծրարը պետք է մկրատով կտրեր բանալու համար: Տատս անհամբերությամբ, և յերբեմն արցունքոտ աչքերով, սպասում էր իր պանդուխտ վորդիներից մեկի նամակի ընթերցման, բայց պապս անասնական համառությամբ չէր բաց ա-

նում, մինչև մկրատը գտներ, իսկ յեթե մկրատն որերով չգտներ, որերով չեր բաց անում: Բանալուց հետո էլ՝ յերկար բարակ ակնոցն եր մաքրում, սիկարեթը փաթթում, մուխրամանը բերում, դնում եր առաջը, մի ողի յեր ճնկում, հազում եր, թքում և ապա սկսում եր կարդալ: Սկսում եր կարդալ վոչ թե բարձրաձայն, այլ իր համար, ինչպես ինքն եր ասում կարդում եր թիվ, վորպեսզի «պարունակության վերահասու ըլլա» և հետո դարձնի ընտանիքի մյուս անդամների սեփականություն:

Յերբ տատս կենում և սպասում եր, վոր վերջապես վերջանան այդ դաժան գործողությունները՝ պապս ասում եր.

— Գնա կերակուրդ յեփե, վերջը եկո՛:

Տատս փափուկ, սպիտակ ձեռներով, փոքրիկ մի կին եր, խոշոր, սև աչքերով, միշտ ժպտուն, միշտ հեզահամբույր և չափազանց մաքրասեր: Նրանից միշտ մենք առնում եյինք մաքուր սպիտակեղենի գլխիչ հոտը: Խոսում եր մանտր-մանտր, ախորժելի և խելոք:

Ամառը նա սիրում եր նստել պատշգամբը, վորի առաջը փռվում եր աստիճանավոր պարտեզը, պարտեզի տակով անցնում եր անվերջ ջրվեժներով մեծ առուն: Առուն գալիս եր բարձրից և խոր ձորերով գնում եր դեպի զմայլելի դաշտը: Յերբ ծառերի տերևները շարժվում եյին և Խուրայի սարից փչում եր զով քամին, տատս մանրիկ բերանով մրմնջում եր.

— Ո՜խ, ակդ սիրեմ:

Այս յերկու հակադրությունների ինչպե՞ս եյին ապրել իրար հետ վողջ 41 տարի—ահա այն դարավոր գաղիր որենքի գաղտնիքը, վոր հրամայում ե «կի՛ն, յեղի՛ր հնազանդ քո ամուսնուն»:

Մի գիշեր պապս յերազ եր տեսել, վոր մառանի հատակին, մի արշին խորության, ապուպապերից թաղված ե յեղել մի կճուճ լիքը վոսկի: Այդ յերազից հետո զարթնեց և զարթեցրեց բոլորիս և կարգադրեց, վոր մառանի ճիշտ մեջտեղը փորենք: Սկսեցինք փորել սարսափելի կարծր հատակը և իսկապես մոտավորապես մի արշին խորությունից յերևաց կճուճը: Հենց, վոր պապս կճուճը տեսավ՝ ուրախությունից ուշաթափվեց: Տասը հոգով հազիվ կարողացանք նրան բարձրացնել վերև հարկի ննջասենյակը: Հիշում եմ, մի թեր յես եյի բռնել, վորպեսզի կախ չընկնի և այդ թեն անգամ ծանր եր ինձ համար: Առավոտյան ուշքի յեկավ: Ուշքի գալուն պես՝ կճուճն ուզեց: Բերին: Կճուճը բոլորովին դատարկ եր: Յերբ տեսավ, վոր դատարկ ե՝ նորից ուշաթափվեց, և այս անգամ տևեց յերկար: Հարկ յեղավ բժիշկների միջամտությունը՝ ուշքի բերելու համար:

Պապս, իր ամբողջ կյանքում, չընդունեց վո՛չ մի սխալ: Հավատում եր, վոր ինքը յերբեք սխալ չեր գործել: Յերբ տատս հիշեցնում եր նրան իր անվերջ դատավարությունները, փուճ համառությունը՝ պապս պատասխանում եր.

— Եկեր նորեն աշխարք գամ, նորեն տի ենեմ:

Վո՛չ վոքից խորհուրդ չեր հարցնում, բայց ինքը պահանջում եր, վոր ամեն մի ծանոթ գա և իրեն խորհուրդ հարցնի: Պապս ի՞նչ հիմք ուներ այս բոլորի համար: Խելո՞ք եր: Վո՛չ: Պարզապես Հաջի Առաքել աղան եր: Ուրիշ վոչինչ: Իսկ այդ Հաջի Առաքել աղան ի՞նչ բան եր: Կատարյալ վոչինչ: Իբրև նախկին հարուստի զավակ՝ ստացել եր այդ անբարտավանությունը և տրադիցիայով շարունակում եր այդ վոսկեզօծ ամբարտավանությունը:

Յեթե մեկն ու մեկը պատահաբար խորհուրդ տար նրան, թեկուզ մի հասարակ բանի համար, և յեթե մինչև անգամ ինքն էլ ներքուստ համոզված լիներ, վոր խորհուրդը ճիշտ ե և օգտակար—չեր լսի: Ի՞նչպես, Հաջի Առաքել աղան ուրիշին լսի՛...

Լավ հիշում եմ, մի որ պապս բարձրացել եր սանդուղների վրա և ուզում եր մի մեծ մեխ խփել պատին: Ինչ վոր մի բան եյին ուզում կախ տալ: Տատս ցանկանում եր, վոր մեխն ամուր խփվի, բայց վորպեսզի ամուր խփել տա՝ ներքևից պապին խորհուրդ տվեց մեխը

թույլ խփել: Պապս, հակառակն անելու համար, ամբողջ ուժով խփեց մեխին և մեխը գրեթե թաղվեց պատի մեջ, այսպիսով՝ տատս անել տվեց իր ցանկացածը և քթի տակ մանրիկ ժպտաց:

Յեթե տատս ցանկանար գնալ մի վորևե ամառանոց, ձմեռվանից սկսում եր դեմ խոսել այդ ամառանոցին:

— Եդ ըլ տե՞ղ ե, վոր կերթան, տաք, մարդ կը խաշի:

Յերբ ամառը գալիս եր, պապս տատիս տանում եր այն ամառանոցը, վորի դեմ տատս ձմեռը խոսում եր:

Այդպիսով կատարվում եր տատիս ցանկությունը:

Յեվ տատս վո՛չ միայն այս բանում, այլև ամեն բանում, կիրառում եր այս մեթոդը և կոտրում պապիս պողպատյա կամքը:

Դ

Յես ունեյի մի պառավ հորաքույր:

Նա ամեն տեղ եր—մեռելատանը, հարսանիքներում, կռվի ու բամբասանքի մեջ, շուկայում, տանիքի վրա, աղբյուրը, պարտիզում, հիվանդի գլխի վրա, տղացկանմոր վոտների տակ, ժառանգությունների բաժանման մեջ, նշանտուքի և խոսկապի մթին ցանցերում:

Նա մի կին եր, վոր յերբեք չեր սիրել:

Նրա արտահայտությունը նման եր այն եգ կատվին, վոր մայիսն առանց արու կատվի անցկացնելուց հետո, ման եր գալիս կտուրներն ու տան անկյունները քաղցած վագրի հայացքով, փայփլուն աչքերով և ամեն մի առիթից պատրաստ փշտացնելու և ցցելու սանվները:

Հորաքույրս անց եր կացրել վո՛չ թե մի մայիս այլ 65 մայիս առանց արույի, և ման եր գալիս մեր տանը և փողոցներում դառնացած, որերի, իրերի և մարդկանց դեմ չարացած:

Պարտված այս եգը թշնամի յեր ընտանեկան խաղաղության:

Մարմնի բոլոր մասերը ճչում եյին դառնություն:

Նա ձմեռները կաղ եր, ամառները՝ առողջ:

— Ի՞նչպես ե, մայրիկ, վոր հորաքուրիս վոսկորներն ամառները կշտկին և ձմեռները կծռին,— մի որ հարցրի մորս:

— Ձմեռը ջղերը ցուրտեն կքաշվին,—պատասխանեց մայրս,—ամառները կթուլնան:

Ջիղը—ահա իմ հորաքրոջ եյությունը:

Ջիղը միայն սրունքների վրա չեր, վոր ապրում եր, ջիղն եր, վոր կառավարում եր նրա մարդկային վողջ կյանքը:

Սև, չորացած մարմին ուներ, գլխի վրա կարճ և նոսրացած մազերով, աչքերը խավարակուռ գիշերվա նման խոր, մատները յերկար, լղար և ուռած յերակներով, ճակատը ծուռ, կուրծքը ներս ընկած, փորը—բայց փոր չուներ, կրծքի անմիջապես տակից սկսում եյին նրա սրունքները, վորոնք այնքան ել յերկար վար չեյին վազում, չուտով հասնում եյին գետին: Ուսերի վրա ցցվում եր սրածայր գլուխը՝ առանց վզի, քթի վերևը, աչքերի սրածայրությունից սեղմված, քիթը— վերևում բռնադատված լինելով նեղանալու՝ ներքևում ընդարձակվում եր, վորի գագաթն ամեն ամիս կարմրում եր, ուռչում, դեղնում և հուսկ ապա՝ պայթում:

Դժվար թե կարելի լինի նկարագրել նրա բերանը, վորովհետև մշտական ձև չուներ: Յեթե տանն եր, ընտանիքի անդամների ներկայության, ուրիշ ձև ուներ, յեթե հյուրեր գային՝ տարբեր ձև եր ընդունում, հորս ներկայության՝ տարբեր (զսպված և կծկված), բամբասանք արած ժամանակ արտակարգ մեծանում եր: Վա՛յ թե քներ—այդ ժամանակ բերանն իրանը չեր—մի անտեր և ավերակ խոռոչ, ուր ամեն ինչ մտնում, յելնում եր: Այդ ավերակ խոռոչից դուրս եյին ցցվում նրա իրարից հեռու յերեք ատամները՝ ինչպես ցամաք նետված հին և խորտակված նավի կայմեր:

Հագուստը միշտ հին եր:

Յերջանիկ եր նա ցնցոտիներում:

Նա դեմ եր մինչև անգամ բնության շռայլության:

Ատում եր լավ հագնվողներին, ատում եր մանավանդ գեղեցիկ կանանց:

Հիշում եմ նրա կարկատանները, խունացած վերարկուն, հազար ու մի գույնզգույն կտորներով

կպցրած շալիկը, մանավանդ գլխի շալը, վորը մի հիմար անգլիացի փորձեց գնել իբրև անտիկ ձեռագործ:

* * *

Հորաքույրս ընկույզից շինած մի խոշոր սնդուկ ուներ (յերեք հոգի կարող եյին ծալապատիկ նստել մեջը), վորի բովանդակությունը դժվար թե յես այժմ կարողանամ վերհիշել:

Այդ սնդուկում կային 50 տարվա հին սիստեմի կարված մետաքսե շորեր, կոշիկներ, զանազան գույնի կոճի և խառնված թելեր, յերեսի սրբիչներ, ծածկոցներ, գուլպաներ, գլխանոցներ, վարտիկներ, շապիկներ, ասեղ, գնդասեղ, զանազան վորակի կերպասի կտորներ, հին վոսկիներ, մարգարիտներ, գոհարներ, փոքրիկ խալիչաներ, արծաթ թաս, չիբուխներ, համրիչներ, գոտիներ, ոդեկոլոնի շշեր, պատկերներ, շրջանակներ, հին դրամներ, վոսկեկոթ գրիչներ, թանաքամաններ, հին ավետարաններ, յերուսաղեմյան խաչեր, կոճակներ, գդակներ, ֆեսի ծոպեր, մատնոցներ և այլն...

Իսկ նա ապրում եր փառահեղ ցնցոտիներում, հագնում եր այնպիսի գուլպաներ, վորոնք 30 տարուց ի վեր կարկատում եր, այնքան եյին հաստացել, վոր վոչ մի կոշիկի մեջ չեյին մտնում:

* * *

Յերկար տարիներ առաջ մեկը՝ Նազար աղան՝ նրան կնության եր ուզել և նա մերժել եր:

— Ինչ ախմախ եյի են վախտը,— ասում եր հորաքույրս,—վոր աա մարդը չառի, Նազար աղայի տանը խանում խաթուն կըլլեյի:

Այս ասելուց հետո՝ Հորաքույրս խոր ախ էր քաշում և պատրաստ էր արցունքը, թափվում էր սև, ծալքոտած յերեսներից վար:

Նազար աղան, ամառ-ձմեռ, կախ ընկած վարտիկի նման մի անձրևանոց ուներ, չոր, ցից-ցից մազերով, յուղոտած ֆեսով: Նրա աչքերը տարբեր ուղղություններով եյին հառում: Նազար աղայի քայլվածքը նման էր այն էշի քայլվածքին, վորի ծանր բեռը, տիրոջ անուշադրությունից, գալիս հասնում է մինչև պոչը, ծանրանալով հետույքի վրա և գառիվեր է բարձրանում:

Բայց Նազար աղան այդպես չէր յերևում Հորաքրոջս:

Նա հաճախ կրկնում էր.

— Մա՛րդ, ի՛նչ մարդ, բոյը—բուսը տեղը, շարժվածքը, քելքը, քի՛չ խոսող, լուրջ, կնկանը Ալմաստ մը կըսե, Ալմաստ մ՛ըլ բերնեն կըյնի... տունը-տեղը լեցուն, վաստակը տեղը...

Նազար աղան բազարի յետ ընկած մի անկյունում մի փոքրիկ յեռանկյունաձև կրպակ ուներ, վորտեղ զինվորների համար պատրաստի նամակներ էր գրում: Նրա վողջ «գրասենյակի» կահկարասին—մի խարխուլ սեղան, մի աթոռ, վոր հազար ու մի թելերով կապել էր, մի թանաքաման—մեջն ամբողջ մաղ, թուրքերեն գրելու համար մի քանի յեղեգե գրիչներ, մի հողե ջրաման, մի բաժակ այնքան փոշոտած, վոր թափանցիկ չէր և մի ավել, վոր անգործածելի լինելուն համար դարձել էր սարդի բույն:

Նազար աղան, բացի պատրաստի նամակներից, ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրեր էր գրում: Այդ աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից, փոխելով անուններն ու թվականները:

Պատրաստի նամակի համար ստանում էր տաս փարա, իսկ աղերսագրերի համար— 60 փարա:

Արդյոք Նազար աղան մի որ մտածե՞լ էր Հորքրոջս մասին: Չեմ կարծում, վորովհետև մեր տան լուսամուտի առաջից անցնելիս՝ քիթը վեր չէր առնում և Հորաքրոջս մտիկ չէր տալիս:

Մի անգամ Նազար աղայի մասին հարց տվի մորս: Նա ասաց.

— Աղեկ մը չեմ հիշեր, տղա՛ս, շատ տարի առաջ ատպես խոսք մը եղավ, բայց խոսքն ըլ խոսք մնա՛ց:

* * *

Յես բաղնիս գնում եյի մեր տան կանանց հետ:

Մինչև հիմա էլ չեմ սիրում արևելյան բաղնիքը, վորովհետև մինչև հիմա էլ հիշում եմ կավերի հոտը, գոլորշին, սիրտ մարեցնող տաք և խըշխըշ ջուրը և կանանց բլրացած ճարպն ու միսը:

Հորաքույրս բաղնիքում միշտ լողանալով չէր զբաղվում:

Նա ամենայն ուշադրությամբ և չարությամբ դիտում էր հասունացած աղջիկներին, վորպեսզի դուրս գար բաղնիքից և սկսեր խոսել ու բամբասել: Բաղնիքից անմիջապես հետո չէր կարող գոնե դուռ մտնել և սկսել բամբասանքը, վորովհետև հոգնած էր լինում, այնքան չեչքար էր քսում մարմնին և վառող-թափող դեղեր էր գործածում:

Բայց հաջորդ օրը Հորքրոջս որն էր: Յուղոտում էր ծնոտները, անտիկ շալը գցում գլխին, ընկնում հարևանների տները:

Մտնում էր Յեղիս խանումի մոտ:

Յեղիս խանումը մի կին էր, վոր իր իսկ շվաքից էր վախենում, վորի տան լուսամուտների վարագույրները միշտ փակ եյին, ուրիշի անունը չէր արտասանում, վորպեսզի մի գուցե բամբասանք չդառնա: Յեղիս խանումն ուներ մի տղա (40 տարեկան) և մի աղջիկ (35 տարեկան): Վորդուն չէր պսակել, վորպեսզի քաղաքում խոսք-զրույց չլինի, իսկ աղջկան էլ տեսնող չէր յեղել, վոր ուզեր:

Մայրը նրան տարին մի անգամ միայն դուրս էր հանում, այն էլ միայն յեկեղեցի տանելու համար: Կանգնեցնում էր վերնատան յետևը, թույլ տալով միայն, վոր քթի մի մասը և յերկու աչքերի միայն մեկն ազատագրի յերեսի քողից:

Հորաքույրս՝ դիտմամբ յերևակայում էր, վոր Յեղիս խանումը միտք ունի Գուվար խանումի աղջիկն ուզելու վորդու համար: Հորաքույրս սկսում էր բամբասել Գուվարի աղջկան, վորին բաղնիսում տեսել էր բոլորովին մերկ:

— Կռնակի վրե յերկու դանակի նշան կա, ով գիտե ի՞նչ հիվանդություն ունի, չըլլի թե Սմբատիդ համար ուզես,— բամբասում էր հորաքույրս:

— Սմբատս հալա կարգվելու չէ,— պատասխանում էր Յեղիս խանումը:

Իսկ Սմբատը 40 տարեկան էր:

— Պարտք սեպեցի քըզի ըսիմ,— ավելացնում էր հորաքույրս:

Մտնում էր ուրիշ տուն:

— Հազարխան խանումի աղջիկը ճռվները (սրունքները) դեղ կքսեր, հալբեթ հիվանդություն ունի:

Մի ուրիշ տեղ՝ մի աղջկա մասին.

— Յերեսը տեղն է, բայց մարմինը չորտոտ, իմ մարմինս քեզ որինակ:

Մի ուրիշի մասին.

— Մարմնի վրա տղամարդու պես մազ ունի: Սիրտըս խառնեց:

Այսպես անվերջ, առանց հոգնելու, առանց հագենալու:

Մի օր բաղնիսի դրսի ընդհանուր սրահից մի ծանոթ կին ներս մտավ մեր լողանալու բաժինը և խնդրեց մորիցս, վոր թույլ տա այստեղ լողանալու:

Կինն սկսեց լողանալ մորս թույլտվությամբ:

Մայրս գնաց դուրս:

Հորաքույրս յեկավ և հրամայեց կնոջ, վոր անմիջապես դուրս յելնի:

— Վարդեր խաթուն,—ասաց Ողաբեր խաթունը,— Մարգարիտ խանումը հրաման տվեց:

— Խանում-մանում չեմ ճանչնար, գնա՛ դուրս,— հրամայեց հորաքույրս:

Ողաբերը զայրացավ: Սա էլ մեղմ կանանցից չէր: Սկսեցին իրարու խոսքեր կանչել—գնա, չեմ գնա, դուն վո՞ր չուն ես, հալա կհաջես— դիպան իրար:

Ողաբերի ազգականները հավաքվեցին, բացվեց տրագի-կոմեդիայի վարագույրը։

Ողաբերը և նրա մի քանի ազգականները վար առին իրենց յեվայությունը ծածկող շորերը, բաղնիսի ծանր Թասերը փաթաթեցին մեջը և հորաքրոջս ձգեցին մեջտեղը։

Ճարպոտ կանանց ծծերը, կատաղած փոքրիկ շների գլուխների նման սկսեցին վեր-վար յելնել և իջնել։ Մեկի վոտը սլլաց, ամբողջ հասակովը փռվեց սալահատակին, մոերը ճխլվեցին, բայց վոտի կանգնեց ավելի կատաղած։

Հորաքույրս Թասի հարվածներին պատասխանում եր բաղնիսի աթոռով, խփում եր ծնկներին և վոտի վոսկորներին։ Հարված ստացողներն աղիողորմ ճչում եյին և ուշաթափվում։ Վերջին ճիգով հորաքույրս նետեց աթոռը, ճեղքեց Ողաբերի ծծերից մեկը և ինքն ել ուշաթափվեց։ Մայրս վրա պրծավ և դադարեցրեց կռիվը։ Ցես շուտով հագնվեցի, վոր գնամ և կառք բերեմ հորաքրոջս տուն փոխադրելու համար։

Ե

Մեր տան գլխավոր ծառայի անունը Գրիգոր եր, բայց մենք կարճ՝ Գողո եյինք կանչում։

Գողոն տնից դուրս, հարևանների համար, մեր տան ծառան եր, բայց իսկապես նա մեր տան դիրեկտորն եր, ինչպես հայրս եր ասում։

Գողոն միջահասակ մի մարդ եր, կարմրած աչքերով, լայն, հզոր ուսերով, խոշոր վոտներով, ծանրաշարժ, ֆեսի բոլորտիքը մի չիթ կապած, վորը ծածկում եր ճակատի կեսը։ Նա դրսից բանջարեղեն և միս եր բերում տուն, պարտեզն եր խնամում, հորից ջուր եր քաշում, բաղնիսը Բոխչա եր տանում, ձմեռը տանիքից ձյունն եր Թափում, աղբ բերողի հետ պայման եր կընքում, միսն եր ծեծում և այլն, և այլն։

Այս բոլորից բացի (այս տեղից ել նրա դիրեկտորի կոչումը), նա ջոկում եր կատարում եր տան հյուրերի մեջ։ Իր չսիրած մարդուն պարզապես նա ասում եր.

— Քու սֆաթդ ինձ շատ խոշ չի գար, այս տեղերը շատ մի քըսվռտվիր։

Հայրս նրան սաստում եր, վոր իր գործերին միայն նայի և «քիթը չխոթե ուրիշի գործերու» մեջ, բայց Գողոն համառությամբ շարունակում եր։

Նա գտնում եր, վոր դա իր գործն ե։

Հայրս պատվիրում եր նրան գնալ և, օրինակի համար, կանչել Մարտիրոս եֆենդուն՝ նարդի խաղալու։

Մարտիրոս էֆենդին Գոգոյի չսիրած տիպերից էր, բայց միաժամանակ չէր ուզում, վոր հորս կամքի դեմ ըմբոստացած լինի և գնում էր, գնում էր վոչ թե Մարտիրոս էֆենդուն գտնելու, այլ բազարում մի քիչ ման գալու, վերադառնալու և ասելու.

— Մարտիրոս էֆենդին տունը չէր:

Գոգոն մեր տանն ապրել էր 35 տարի: Յեվ այդ յերկար ժամանակը նրան իրավունք էր տվել հսկելու այդ տանը՝ ամբողջական սրտով և հոգով: Մեր տնից աղջիկ տանողը՝ նրան էլ պետք է հարցներ, յեթե տունը նոր հարս բերեյինք՝ նա էլ պետք է գնար և հավաներ:

Տան բոլոր տնտեսությունը հանձնված էր նրա խղճին և խելքին: Ամեն քարի կտորի, տաշեղի, կարտոֆելի և սոխի գլխի համար նա ցուցահանում էր խորը հոգատարություն:

Մի որ Գոգոն տուն յեկավ, վոր հայրս վարպետներ է ուղարկել ամբողջ սենյակները սպիտակեցնելու համար: Գոգոն նախ զայրացավ, վոր առանց իրեն հարցնելու էր կատարվել այդ, յերկրորդ՝ նա հարցուփորձեց և գտավ, վոր կարելի էր մի քիչ ավելի եժան վարձել վարպետներին: Մի քիչ մտածելուց հետո՝ նա վճռականորեն յետ ուղարկեց վարպետներին և ուրիշներին բերեց ավելի եժան, առանց նկատի առնելու, վոր հայրս պայմանավորված էր նախկին վարպետների հետ:

Գարնան, յերբ կովը սկսում էր բառաչել և մինչև անգամ գիշերները չէր թույլ տալիս, վոր քնենք, հայրս կանչում էր Գոգոյին և պատվիրում, վոր կովի մասին մտածի: Գոգոն ծխախոտն ախորժակով քաշում էր և պատասխանում.

— Հաջի էֆենդի, քիչ մը՛լ թող կատղի...

Յեվ մի քանի որ էլ թողնելով, վոր կովը կատաղի, քաշում էր դուրս, տանում էր Մորենիկ գյուղը, յեզների կլասսիկ հայրենիքը, վորպեսզի անասունի կատաղությունը մեղմացնել տա:

Յեվ իսկապես Գոգոն կովը վերադարձնում էր գյուղից՝ հանգստացած և մինչև անգամ լրջացած:

Յերբ տուն էր հասցնում կովը, նա անմիջապես մտնում էր հավաբունը, մի թարմ ձու վերցնում, բերում և խփում կովի ճակատին, ամբողջ դեղնուցը քսելով կովի դեմքին: Դա տեղական սովորություն էր, վոր բարի նշանակություն ուներ:

Մեզանից վո՛չ վոք իրավունք չուներ այդտեղ վորևէ բան քաղելու, պոկելու: Այդու բացարձակ տերն էր Գոգոն:

Հանկարծ պատահում էր, վոր դրսից մեկն ու մեկը մի քար նետած լիներ պարտիզի պարսպից դուրս ընկած ծանրորեն բեռնավորված մի ծառի ճյուղքին: Դա նշանակում էր արյունով գունավորված կռիվ: Գոգոն կատաղում էր այնքան, վոր բերանից փրփուր էր դուրս գալիս—աղմուկ, իրարանցում, կոկորդ կոկորդի, և, շատ անգամ, քիթը—բերանը ջարդվում եյին: Մայրս մեղքանում էր, գորովագին մոտենում էր նրան և մեղմագին ասում.

— Թող քիչ մը՛լ քաղեն տանեն, ձայն մի հաներ, ատով մեր պտո՞ւղը կպակսի:

— Խանըմ,—պատասխանում էր փայլկնացայտ աչքերով,—յա ես ծառներուն տակը կսատկիմ, յա ծառներից հեռու կը կենան:

Մեզանից վո՛չ վոք այնքան չէր սիրում և գուրգուրում մեր տունը, վորքան Գոգոն:

Յերեկոները մտնում էր մեր ննջարանը և հանգցնելով լույսը՝ հայտարարում էր.

— Ուշ է, հայտե՛, պառկեցե՛ք, առավոտվանից մինչև արևը պորտերնուդ վրա չիյնա՝ չեք արթննար:

Մենք հնազանդվում եյինք, վորովհետև նա կարող էր և իրավունք էր տրված նրան՝ ապտակել:

Գոգոն սաստիկ ջղայնանում էր, յերբ սպիտակ պատերի վրա մատիտի խզբզոցներ էր գտնում և յեղունգի քերծվածներ: Նա քննության էր յենթարկում բոլորիս մատիտները և յեղունգները և վերջապես գտնում էր հանցանքի հեղինակին: Հեղինակը գտնելուց հետո՝ գալիս էր հեղինակավոր ապտակը:

Ամեն աշնան Գոգոն գումարում էր ժողով մորս հետ՝ ձմռվա տան պաշարը հոգալու համար։ Վորքան վոր մայրս պնդում էր յուղի, բրնձի կամ մի այլ կենսամթերքի այսինչ չափը քիչ է, Գոգոն պնդում էր իր ասած չափի վրա։

— Հարկավոր է խնայողություն, խանը՛մ։

Ցեվ անպայման անցնում էր Գոգոյի տեսակետը։

* * *

Գոգոն ամուսնացած էր, բայց կինը մեր տան մեջ չէր ապրում։ Կինն ապրում էր գյուղում, վորովհետև այնտեղ ուներ մի փոքրիկ տնտեսություն։ Տարին մի կամ յերկու անգամ նա գալիս էր գյուղից և նրան տեսնում էյին միայն մայրս և տան փոքրերը, վո՛չ հորս էր յերևում և վո՛չ էլ մեծ յեղբորս—ամոթ էր։ Գոգոյի կինը կարմիր—ճակնդեղի կարմիր—յերեսով, կլոր, գեր և կարճահասակ մի կին էր, վորին տրված հարցումներին կամ գլխի շարժումով էր պատասխանում և կամ միավանկով։ Գոգոն մեր տան մեջ գրեթե հետը չէր խոսում, միայն պաշտոնական հարցեր էր տալիս—գլխավորապես տան և տնտեսության մասին—և ապա լռում։ Ավելորդ խոսակցություն անելը համարվում էր ամոթ։

Պատահում էր (յերբ կինը գյուղումն էր լինում), վոր Գոգոն սկսում էր առանց պատճառի ջղայնանալ—գոռում էր, ամաններ էր կոտրատում, կովին քացի յեր տալիս և այլն։ Հայրս այդ ժամանակները կանչում էր մորս և նրա հետ մի փոքրիկ խոսակցություն էր ունենում այդ մասին։

— Մարգրիտ,—ասում էր հայրս,—եդ մարդը նորեն կատղեր է, աչքերը չաթալ կտեսնեն կոր, գեղ ուղարկե՛, երթա, հանգստանա, գա։

Մայրս համաձայնվում էր հորս հետ և հաջորդ որը Գոգոն նստում էր էշը և գնում գյուղ մի քանի որով։

Ցեվ վերադառնում էր Գոգոն աչքերի բոլորովին այլ արտահայտություններով, մեղմացած, ժպտուն, բարյացակամ, յեթե ամբողջ գիշերը լույսը վառ պահեյինք՝ չէր նեղանա, մինչև անգամ փոքրիկներիս վերցնում էր իր ուսերի վրա և ման ածում։

Այն ժամանակ յես վոչինչ չէյի հասկանում, այժմ եմ հասկանում նրա տրամադրության հեղաշրջման պատճառը։

Ցերբ Գոգոն նորից էր սկսում ջղայնանալ, կատաղել և մեզ տված ապտակները շատացնել՝ մենք՝ փոքրերս անգամ, գնում, խնդրում էյինք մայրիկից.

— Գոգոն գեղ ղրկեցե՛ք, ի՛նչ կըլլի, նորեն սկսեր է մեզ ծեծել։

Մայրս քթի տակ մեղմորեն ժպտում էր և, այս անգամ, առանց հորս թելադրանքին, Գոգոյին ուղարկում էր գյուղը։ Այդ բանի համար մենք չափազանց ուրախանում էյինք, նախ՝ մի քանի որ բացակա յեր լինում տնից և յերկրորդ՝ գալուց հետո էլ անսահման բարի յեր լինում։

Անցնում էր մի առ ժամանակ, նորից Գոգոյի աչքերն սկսում էյին չաթալ տեսնել, սրտնեղություն անսահման։

— Մայրիկ, ղրկեցե՛ք Գոգոն տուն...

— Շատ գործ ունի, ողո՛ւլ, ամեն ատեն գեղ երթա՞լ կըլլի։

— Ի՞նչ կըլլի, ղրկե՛...

Ցեվ Գոգոն նորից էր գնում և վերադառնում բարի։

Այդ բարի որերից մեկում Գոգոն փրկեց իմ կյանքը կամ առնվազն՝ հաշմանդամ լինելուց։

Մեր տան դահլիճի առաստաղի վրա կար մի արձանագրություն, վոր գրված էր տունը կառուցելու ժամանակ։ Այդ արձանագրությունը հետևյալն էր.

«Վորդիքս Հակոբ, Գեորգ, Լեվոն
ժառանգորդք են տանս այսորիկ»·

Վորովհետև տան կառուցված ժամանակը յես ծնված չէյի, ուստի իմ անունս արձանագրության մեջ

չկար: Մի օր յես այնպես մտածեցի, վոր յեթե իմ անունը չկա՝ ուրեմն յես չեմ կարող ժառանգորդ լինել «տանս այսօրիկ»: Ներքևի հարկից, գաղտնի, վեր հանեցի յեռոտանին և բարձրացա վրան, վորպեսզի իմ անունը ես ավելացնեմ ժառանգորդների ցանկում: Դեռևս գրելու գործողությունն չեյի սկսել, յերբ յեռոտանին սկսեց յերերալ և ծռվել: Բարեբախտաբար, արձանագրությունից քիչ հեռու կար մի մեծ կեռ յերկաթ, վորից ձմեռը մեծ լամպն եյին կախում, բռնեցի այդ կեռ յերկաթը, յեռոտանին մնաց վոտներիս տակը, բայց անկարելի յեր ցած իջնել, վորովհետև յեթե յերկաթը թողնեյի, յեռոտանին պետք եր կործանվեր: Սկսեցի ճչալ ահ ու սարսափով: Գոգոն, լսելով աղիողորմ ճչոցս, անմիջապես վազեց վեր և շուտափույթ ըմբռնելով կացությունը, բռնեց յեռոտանին և յես, առանց վախի, սկսեցի ցած իջնել:

Հատակին հասա չհասա՝ Գոգոն ապտակ տվեց յերեսիս և՝

— Զանգալը չի ձգած ինչո՞ւ յես վեր ելեր...

Յես զոհ մնացի այդ ապտակից:

Յերեկոյան հայրս ինձ նստեցրեց իր ծնկանը և շոյելով վոսկեգույն մազերս՝ հարցրեց.

— Ինչո՞ւ եյիր վեր ելեր:

Հորս փայփայանքից վոգևորված անկեղծորեն ասացի նպատակս: Հայրս կուշտ ծիծաղեց և բոլորի ներկայության հայտարարեց.

— Իմ բյություն հարստությունն իմ պզտիկ յավրույին ե, իսկ աս տունը, իմ մահես վերջը, բոլորիդ կըսեմ, կուտաք աս յավրույիս:

Հորս մահից տարիներ հետո՝ յերբ հարկ յեղավ հորս հարստությունը բաժանել, իմ բացակայության, մայրս առաջարկել եր, վոր այդ տունը, առանց վորևե վիճակ ձգելու և վեճի, ինձ տրվի՝ հարգելու համար հորս ասած ամեն մի խոսքը, թեկուզ այն ժամանակ կատակով ասած:

Այդ տունը յես ժառանգեցի, վորի վո՛չ մի արձանագրության մեջ իմ անունս չկար:

⁂

Հորս մահից հետո՝ Գոգոն ավելի անսահման, ավելի միապետական սիրով կապվեց մեր տանը, բայց միաժամանակ փոխվեցին հարաբերությունները: Մորս և Գոգոյի հարաբերությունները մնացին նույնը, բայց յեղբայրներիս և Գոգոյի՝ հիմնովին փոխվեցին: Բացի մեծ յեղբորիցս, մյուս յեղբայրներիս քթի տակն ել սկսեցին սևին տալ և ավելի խորը զգացին, վոր «ժառանգորդք են տանս այսօրիկ»: Նրանք սկսեցին ըմբոստության նշաններ ցույց տալ Գոգոյի բռնապետության դեմ, սկսեցին ծաղրել նրա դիրեկտորությունը, բայց Գոգոն յերկար ժամանակ չլսելու և չտեսնելու յեր տալիս, վորովհետև մայրս ասում եր.

— Ջոջուխներ են, անկաճ մի կախեր:

Այնուամենայնիվ Գոգոն յերկար չհամբերեց հեգնանքներին և մի օր տղերանց մեկին հայտարարեց.

— Ծո՛, խնլո՛տ, քեզ ենփիեյի*) պես քիթս կքաշիմ:

Այս առիթ տվեց, վոր հարաբերություններն ավելի սրվեն, մանավանդ նրա և Լևոնի միջև:

Մի օր Լևոնն իր դասընկերներին հավաքել եր և բերել լցրել մեր դահլիճը՝ զվարճանալու համար:

Գոգոն պատվիրեց Լևոնին, վոր 10—12 տղաներ, բոլորն ել իրեն նման պատանի և չար, անհարմար ե դահլիճում զվարճանալ, ավելի լավ ե գնալ պարտեզ և զվարճանալ մարգագետնի վրա, խոստացավ նրանց բերել աթոռ և օշարակ: Լևոնն ընդդիմացավ այս կարգադրության, վորովհետև Գոգոն եր արել:

— Ջե՛մ երթա:

Գոգոն պատրաստվեց կոտրել Լևոնի համառությունը, մանավանդ տեսնում եր, վոր վերջերս խորտակվում եր իր հեղինակությունը մեր տան մեջ, վորտեղ արդեն

*) Բուռնոթի, քթախոտ,

40 տարի յեր, ինչ իշխում եր, բայց մայրս մոտեցավ
նրան և զսպեց.

— Անկած մի՛ կախեր, Թո՛ղ երթան:

— Դուն ես մեջքս կոտրողը, խանըմ,—հառաչեց
Գոգոն:

Տղաներն սկսեցին իրենց զվարճությունները դահ-
լիճում, զվարճություններ, վորոնք ուրիշ բան չեյին,
յեթե վոչ անկրթություններ–ծխել, ծխախոտի քիթե-
րը նետել հատակին, գորգերը տակնուվրա անել, բար-
ձերն իրար նետել և վերջապես հայելին կոտրել:

Գոգոն յերկար ժամանակ լսում եր աղմուկը, բայց
զսպում եր իրեն, մայրս այդպես եր պատվիրել, բայց
յերբ զգաց, վոր դահլիճը գլխիվայր եր դառնում,
բարձրացավ դահլիճը և բոլորին մեկիկ–մեկիկ դուրս
վռնտեց:

Լեվոնն ամոթահար և անկարող, սկսեց չրթունքնե-
րը կծոտել: Հորս վողջության անպայման կտաներ այս
ամոթահարությունը, բայց նրա մահից հետո—յերբեք:

— Այս տանը տերերեն մեկը ես իմ, ծառան իրա-
վունք չունի խառնվելու,— գոռաց Լեվոնը, յերբ ընկեր-
ներն արդեն տնից հեռացել եյին:

— Մեկն ըլ ե՛ս իմ,—պատասխանեց Գոգոն:

— Դուն չես:

— Ես իմ:

— Դուրս պիտի ելլաս տունեն,—գոռաց Լևոնը:

Այս առաջին «պետական հարվածն» եր ընդդեմ
Գոգոյի իշխանության:

Գոգոն լռեց: Լռեց վո՛չ թե նրա համար, վոր չեր
կարող պատասխանել, այլ լցվեց դառն վշտով— 40
տարի հավատարմությամբ, գերագույն ազնվությամբ,
բարձրագույն անկեղծությամբ ծառայել եր այդ տանը,
հենց իրեն, Լևոնին, մեծացրել եր իր թևերի և ուսերի
վրա և, հանկարծ այս անլուր կոպտությունը: Վիշտը
կաթիլ առ կաթիլ լցվեց նրա աչքերում, դեմքի ամեն մի
խորշոմում, ամեն մի կնճիռում, վիշտը, վոր ծովանում
է մարդու դեմքի վրա սրտի կոտրվելուց:

Լևոնը շարունակում եր գոռալ:

— Դուրս պիտի ելլա տունեն:

Մեծ յեղբայրս, Հակոբը, միջամտեց, ուզեց լռեց-
նել Լևոնին, բայց Լևոնը զգացնել տվեց, վոր «Հակոբ,
Գեորգ և Լևոն ժառանգորդք են տանս այսօրիկ»:

Մայրս այս անգամ միջամտեց, վերին աստիճանի
գոհ լինելով, վոր Գոգոն լռություն և պաղարյունու-
թյուն պահպանեց:

Մայրս սկզբում մեղմ սկսեց, ուզեց առանց միջա-
դեպի խաղաղեցնել Լևոնին, բայց այդ մեղմությունից
Լևոնը թև առավ և շարունակեց խիստ պահանջն ավելի
կոպտությամբ:

— Տղա՛ս, Գոգոն այս տան մեջ 23 տարով ավելի յե
ապրեր, քան դուն, դուն երեկվան տղան ես այս առիքին
տակ, յեթե այս տան կարգադրությունները գործուդ
չեն գար, կրնաս անմիջապես ինքդ հեռանալ այս տու-
նեն:

Լևոնը լռեց: Մենք բոլորս ել ուժգունեցինք: Մայ-
րիկը պարզապես իր վորդուն տնից դուրս եր վռնդում:
Կատակ չեր:

Լևոնը լռությամբ դուրս յեկավ դահլիճից, մայ-
րիկը շարունակեց.

— Այս տան համար Գոգոն մեզմե ավելի յե մտա-
ծեր, ավելի շատ ե չարչարվեր, տան պատերուն ամեն
մեկ քարը անոր ձեռքը կճանչնա, վո՞րու բերնին ե
ինկեր այդ մարդը դուրս հանել, ամո՛թ:

Այս վերջին բառը մայրիկը կարծես բոլորիս ել
չպրտեց: Բոլորս ել գլուխնիս կախեցինք: Մեծ յեղ-
բայրս մոտեցավ մայրիկին, ուզեց Լևոնի համար նրա
վճիռը մեղմացնել:

— Ես զինքը դուրս չեմ վռնտեր,—ասաց մայրի-
կը,—բայց յեթե ինքը կպահանջե անոր դուրս ելլալը,
ինքը պիտի ելլա:

Այս խոսքերից հետո՝ Գոգոն, արցունքն աչքերին,
մոտեցավ մայրիկին, համբուրեց նրա ձեռքը և ասաց.

— Խանըմ, Լևոնը թո՛ղ հոս մնա, ե՛ս կերթամ,
քեզմե ըլ շատ ռազի իմ:

— Գոգո,—պատասխանեց մայրիկը կես կշտամբանքով,— տղայի հետ տղա մի ըլլար, ով ինչ կըսե, թող ըսե, դուն ինծի նայիր:

Գոգոն դուրս գնաց լռությամբ և մտնելով խոհանոց՝ սկսեց օջախի կրակը փչել:

Յերեկոյան, ընթրիքին, Լևոնը չերևաց:

Մայրիկը մինչև անգամ չհետաքրքրվեց թե՝ Լևոնը տա՞նն է թե վոչ: Ընթրեցինք շատ տխուր, վոչ վոք չէր խոսում, ամեն մեկս ջանացինք շուտ վերջացնել և վեր կենալ: Ընթրիքից հետո՝ Գոգոն մայրիկի համար բերեց

մեծ, չինական գավաթով թրքական կոֆե, այն գավաթով, վորով միայն հայրս էր խմում և նրա մահվանից հետո յերբեք չէր գործածված: Մայրս բռնեց գավաթը, արցունքի մեծ-մեծ կաթիլներ կախվեցին նրա շագանակագույն խոշոր աչքերից, հանկարծ տեսանք, վոր Գոգոն էլ լաց էր լինում, մենք էլ միացանք այդ արցունքներին, լո՛ւռ, մորմոքի՛չ արցունքներին: Յերկար լռությունից հետո՝ մայրս հայտարարեց.

— Այս տան մեջ վո՛չ մեկ փոփոխություն չպիտի ըլլի...

Մորս այդ հայտարարությունն այնքան վճռական էր, վոր բոլորս էլ դողացինք:

Հաջորդ առավոտյան, Լևոնը հենց վոր զարթնեց, գնաց պարտեզ: Գոգոն պարտեզի ծաղիկներն էր ջրում:

Վճիտ, մաքուր, լվացված առավոտ էր:

Լևոնը կամաց-կամաց, տատանվելով և վախենալով, բայց ներքին վճռականությամբ, մոտեցավ Գոգոյին և փաթաթվեց նրա վզով: Գոգոն անմիջապես ցրնցուղը դրեց խոտի վրա, գրկեց Լևոնին, համբուրեց յերկար և խորունկ սիրով շշնջաց.

— Ցավրո՛ւս, իմ աղվորի՛կ յավրուս...

Զ

Մեծ յեղբայրս, Հակոբը, պահում էր մի արաբական ձի, որ ծնվել էր մեր տանը և յերբեք չէր տեսել ամավենի և վո՛չ էլ նրա սմբակները մխրճվել էին հարավի տաք ավազներում, բայց նրա աչքերի խորությանը մեջ կար հարավային պեյզաժների ամբողջ սարսուռը և նրա վրնջյունի մեջ մենք զգում էինք անհուն անապատների կարոտը:

Ձին, վորին Հակոբը Մարան էր կոչում, սև էր, ինչպես սև սաթը, փայլուն և վողորկ, յերեք վոտները սպիտակ և հավկթաձև սպիտակ ճակատի վրա:

Մարանը սանձ չեր տեսել իր կյանքում, նա ազատորեն մտն էր գալիս մեր տանը, մինչև անգամ ճաշի ժամանակ, յերբ մեծ ընտանիքը բոլորվում էր մեծ սեղանի շուրջը, նա գալիս էր, դունչը հանգչեցնում էր Հակոբի ուսին և սպասում մինչև նա շաքար տար, հետո գնում էր հորս ուսին, հուսկ ապա՝ մորս:

Մայրս անհուն բարությամբ և նոր հարսի ջինջ ժպիտով, տալիս էր վերջին շաքարը և հրամայում նրան գնալ պարտեզ:

Մարանը, շաքարը խրտխրտացնելով, գնում էր դեպի պարտեզ, վորտեղից նա միանգամ վրնջում էր իբրև տեղեկություն, վոր արդեն պարտիզում է:

Այս վրնջունի ժամանակ, յեղբայրս կանգ էր առնում, մինչև անգամ պատառը դեռ բերանին չհասցրած՝ ձեռքը մնում էր օդում, հրճվանքից՝ մարմրում էր և շշնջում.

— Սիրեմ քըզի:

Ամեն գիշեր Հակոբը պետք է վեր կենար, գնար Մարանի մոտ, մի անգամ նայեր, շոյեր, համբուրեր և վերադառնար անկողին: Մարանի սենյակը (ախոռ չեր կարելի կոչել նրա գիշերած վայրը) գտնվում էր հորս և մորս սենյակի տակը: Կես գիշերին, հանկարծ, յերբ լսվում էր Մարանի խրխինջը, մեղմ և ջինջ, հայրս ասում էր.

— Ակոբը գնաց սիրականին քով:

Ամեն կիրակի որ Հակոբը Մարանին տանում էր հերկված դաշտը և բաց թողնում, Մարանը քամու նման թռչում էր, սահում էր նա հերկված դաշտի վրայից, ինչպես սուրացող ալիք:

Քաղաքի յերիտասարդների համար մեծագույն հաճույք էր՝ հավաքվել դաշտը՝ տեսնելու Մարանի վազքը: Մարանը հասնում էր դաշտի պռնկին, կանգ էր առնում, պայծառ աչքերով նայում հեռո՜ւն, հեռո՜ւն: Ի՞նչ էր յերազում այդ թռվիչ անասունը, ո՞վ իմանար, ապա վերադառնում էր սուրացող ալիքի նման, գալիս, կանգնում էր Հակոբի մոտ: Հակոբի թևերը բացվում էին, փաթաթվում նրա վզին, շրթունքները մոտենում էին նրա քրտնած սև սանևերին և համբուրում:

— Գիտես քի ամպի վրայեն կթռի,—ասում էին շատերը:

Հակոբը բերում էր տուն Մարանին, Գոգոն անխախտ պատրաստած կլիներ մի թարմ ձու: Հակոբն ա-

մեն անգամ Մարանին դուրս տանելուց և բերելուց հետո՝ մի թարմ ձու յեր խփում նրա ճակատին, ջարդում, վորպեսզի չար աչքերը խափանվեյին:

Հակոբի ամբողջ զբոսանքը Մարանն եր: Յերբ միջնակարգն ավարտեց և հայրս նրան առաջարկեց գնալ բարձրագույն դպրոց՝ նա մերժեց միայն այն մտահոգությամբ, վոր Մարանին չեր կարող տանել հետը Պոլիս, Պրուսա և կամ Յեվրոպա:

Հակոբի ընկերները, նրա հասակակիցներն ել տանը չեյին մնում, նրանց մեջ զարթնել եր արուն, վորոնում եյին աղջիկներ զանազան անկյուններում, դռների ճեղքերից, պատուհանների բացվածքներից, յեկեղեցում, փողոցում, բաղնիսի դրան առաջ: Նրանց խոսակցությունը կինն եր, չարչափի մեջ փաթաթված այդ անիմանալի, դյութական, միստիկ արարածը, վորի ձայնը տակնուվրա յեր անում նրանց հոգին:

Նրա հասակակիցներից շատերը պսակվեցին, յերեխաներ ունեցան, վոմանք նշանված եյին, վոմանք ել արդեն վաղուց խայտառակված ազոբինի կենակցությունների համար, մի քանիսը բռնվեցին Մարիցայի տանը, բայց Հակոբը սիրում եր Մարանին և նրանով լցնում իր հոգու ամբողջ պարապը:

Նրա համար ամենայերջանիկ օրն այն օրն եր, յերբ պետք ե գնար արտերը Մարանի հետ: Տանում եր հետը մի վրան, անկողին և յեփել-թափելու անհրաժեշտ պիտույքներ և գնում արտ:

Ուրեմն Հակոբը, ամբողջ յերեք ամիս, պիտի ապրեր Մարանի հետ շունչ շնչի, գիշերը պիտի քներ վրանի տակ, Մարանն ել գլուխը կախ արած նրա գլխի վրա: Ամբողջ օրը Մարանն ուտում եր թարմ խոտը և կշտանալուց հետո՝ կանգնում եր արևի տակ և անվերջ յերերում եր գլուխը դեպի վեր և դեպի վար, իսկ Հակոբը նստած վրանի շվաքում՝ դիտում եր ու հրճվում:

Հակոբը ժամերով խոսում եր Մարանի հետ, հարց եր տալիս, պատասխաններ ստանում, ծիծաղում, յեր-

բեմն մտերմորեն կշտամբում նրան և անցկացնում ժամանակը:

— Մարա՛ն, եսօր ազեկ կերե՞ր ես,—հարցնում եր Հակոբը:

Մարանը վրնջում եր:

— Շուտով տուն տ'երթանք,—ասում եր Հակոբը:

Մարանը պոչը թափ եր տալիս, գլուխը յերերում:

— Հը՞, չես ուզեր, կուզե՞ս շատ կենանք:

Մարանը մոտենում եր Հակոբին, կծում ֆեսը և թափ տալիս օդում:

Այսպես անվերջ խոսում եյին նրանք, յերկու մտերիմ ընկերների պես, վո՛չ մի տարաձայնություն, վո՛չ մի անհամություն յերկու ընկերների միջև:

Ցերեկները Հակոբը պառկում եր վրանի դրան առաջ, յերկնքին հառած՝ յերգում եր: Մարանը կանգնած լսում եր նրան առանց շարժվելու, այդ մշտապես անհանգիստ անասունը վո՛չ մի շարժում չեր փորձում և յերբ Հակոբը դադարեցնում եր յերգը, Մարանը գլուխը կախում եր տխուր:

— Նորեն խա՞ղ ըսիմ քըզի համար, հա՞, Մարան,— հարցնում եր Հակոբը:

Մարանը, իբրև պատասխան, վրնջում եր վոսկեհնչյուն: Հակոբը սկսում եր.

Լավանդամըն շիշեսի,
Իչինտե մենեվշեսի,
Բեն Մարանը սևերիմ,
Ջիկերիմին քեոշեսի*):

Կյանքը սավառնում եր, ինչպես անվերջ և մեծաթև մի առավոտ:

Աշնան մեջերին Հակոբը և Մարանը վերադառնում եյին տուն: Հայրս և մայրս դիմավորում եյին յերկու

*) Դուխու շիշը,
Մեջը մանուշակը
Յես Մարանին սիրում եմ,
Սրտիս անկյունը:

ընկերներին: Հակոբն առողջ, մեծղի, հզոր, արևից յեփած, ինչպես խաղողի վողկույզը, ամբողջ վրայից բուրում եր դաշտերի և կանաչների թարմ հոտը, իսկ Մարանը գիրացած, աշխույժ, ավելի և ավելի պայծառացած, վճիտացած աչքերով և ավելի վոսկեհնչյուն վրնջյունով:

Նրանք իրենց հետ տուն եյին բերում հեռավոր դաշտերի թարմությունը, բերում եյին իրենց հետ աստղերի ձայնը: Յերբ Մարանն արձակում եր իր առաջին խրխինջը, մեզ թվում եր, վոր լուսավորվում եր մռայլ տունը, կարծես վոսկյա սալի վրա աստղեր եյին ընկնում և պայթում:

Մայրս ասում եր հորս.

— Հաջի եֆենդի՛, կենե տունը եղավ տուն:

Տունը տուն դարձնողը Հակոբն եր և իր անասուն ընկերը, մի անբաժանելի և ամենացանկալի մասը տանը, վորի ձայնը կախվում եր մեր տան բոլոր պատերից, անկյուններից, առաստաղից և պարտեզի բոլոր ծառերի ճյուղերից:

Հակոբը քաշում, բերում եր յերեխայի որորոցը, յերեխան մեջը, դնում բակի մեջտեղը և ասում Մարանին:

—Վրայեն անցի՛ր:

Մարանը ծառս եր յելնում, խրխնջում և թեթևաբար ցատկում յերեխայի որորոցի վրայից և վերադառնում, լիզում Հակոբի ձեռքը, իսկ Հակոբը փոխադարձ՝ համբուրում եր նրա ճակատի հավկթաձև սպիտակը:

Մեծ զվարճալիք եր մեզ համար, յերբ Մարանը գնում եր ավազանի ափին, նայում ջինջ ջրի մեջ և տեսնելով իր արտացոլումը՝ ցատկում եր, նորից նայում, ելի տեսնում, ելի վեր-վեր ցատկոտում և վերջիվերջո դունչը մոտեցնում ջրին, փռշտում, վորից ջուրն ալիքավորվում եր, պատկերը բեկբեկվում, և ուրախանալով, վոր հաղթեց ջրի խորքում յեղող ինչ վոր անասունի, խրխնջում և վազում եր դեպի պարտեզի կեռասենիների ծառուղին, այդ ծառուղուց մի ուրիշ ծառուղի, մինչև պարտեզի մութ թավուտները:

Հակոբը, պատահեր, վոր հյուր գնար մի տեղ և ստիպված լիներ յերկար մնալու՝ կգտներ մի պահ, կը ծլկվեր հյուրընկալողներից, կգար տուն, Մարանին կը տեսներ և նորից կգնար: Յեթե չգար, դա նշանակում եր, վոր մայրս նրան խոսք տված կլիներ՝ շատ մոտիկից հսկել Մարանին, ամեն բոպե չհեռացնել նրան իր աչքերից:

Իսկ յեթե պատահեր, վոր Մարանին հեծը տաներ, (շատ անգամ եր տանում, վորովհետև հաճախ Հակոբը հրավիրվում եր Մարանի հետ մի տեսակ՝ հանդերձ ընտանյոք) Հակոբը մի ձու եր դնում նրա գավակի վրա և այդպես տանում: Մարանը, վորպեսզի ձուն չընկնի իր գավակից, քայլում եր դանդաղ, փոխում եր քայլվածքի ձևը, քայլում եր ալիքանման որորվելով: Փողոցում չեր լինի մի մարդ, վոր կանգ չառներ և չդիտեր Մարանի այդ դժվարին խաղը:

Այսպես եյին ապրում յերկու ընկերները—Հակոբը և Մարանը:

* * *

Մի որ Մարանի առաջի վոտի վերևի մասում յերևաց մի ուռեցք, փոքր և գրեթե աննշան, բայց փչտեց, դարձավ վերք, այդ վերքը մեծացավ, թարախակալեց: Քաղաքում մի անասնաբույժ կար, վորը չկարողացավ ոգնել, Հակոբը կանչեց և մարդկային բժիշկներին, վորոնք վոչինչ չկարողացան անել, ամեն մեկը մի բան ասաց: Վերքը մեծանում եր, թարախակալումն ավելի համառում:

Սկզբնական շրջանում Մարանի վրա վո՛չ մի ազդեցություն չարավ, բայց կամաց-կամաց նա կորցրեց իր աշխուժությունը, աչքերը կորցրին արշալուսային վճիտությունը, նրա վոսկեհնչուն խրխինջում լսվեցին ինչ վոր մթին ակկորդներ:

Հակոբը Մարանի հետ սկսեց կերպարանափոխվել:

Մինչև անգամ հայրս և մայրս դարձան մելամաղձոտ— Հակոբը կորցնում եր իր գարնան ուրախությունը, մռայլ եր իջնում նրա պայծառ ճակատի վրա:

Հայրս լսեց, վոր Սեբաստիայում մի նշանավոր ա-նասնաբույժ կա: Հեռագրեց այդ անասնաբուժին, վոր գա և տեսնի ձիուն: Պատասխան ստացվեց, վոր անասնաբույժը համաձայնել ե և յերկու որից մեկնում ե Սեբաստիայից:

Հակոբն այդ հեռագիրը կարդալիս՝ ցավագին ժպտում եր և արցունքներ թափում:

Մայրս փաթաթվեց իր հերկուլեսյան վորդու վզին, սրբեց նրա արցունքները և շշնջաց.

— Դոկտորը կուգա, կաղեկցնե, չաղեկցնե ըլ՛, հայրդ Դիարբեքիրեն դահա ազվորը բերել կուտա մի լար, յավրո՛ւս:

— Մարա՛նս, Մարա՛նս,—մրմնջում եր Հակոբը և համբուրում մորս՝ լաց լինում, կոպերից կախում աստղանման արցունքի կաթիլներ:

Շատերն ասացին, վոր աչքով են տվել: Մայրս բաց արավ սնդուկը, դուրս բերեց մի խոշոր փիրուզ և կախեց Մարանի վզից:

Անասնաբույժն ուշանում եր, պետք եր կառքով, ութն որվա ճանապարհ եր լավագույն դեպքում:

Յեվ Մարանը մի առավոտ մեռավ:

Բոլորս ել հավաքվել եյինք Հակոբի շուրջը, վոր արցունքի կաթիլներով շաղախված խոսքերով պատմում եր Մարանի կյանքը, պատմում եր մինչև անգամ թե մի որ ինչ խոսակցություն են ունեցել իրար հետ և Մա-րանն ինչ ե ասել:

Յեթե պատահած յեղելության անծանոթ մի մարդ ներս մտներ և լսեր Հակոբին, յերբեք չեր կարող գուշա-կել, վոր խոսքը և վողբը վերաբերում եյին մի անա-սունի:

Հակոբի անկողինը մայրս կարգադրեց, վոր փո-խադրեն իր ննջարանը: Հայրս և մայրս մոռացած ամ-բողջ տունը՝ իրենց ամբողջ ծնողական գուրգուրանքը

թափում եյին Հակոբի վրա, վորպեսզի մոռանա, գեթ մեղմանա նրա վիշտը՝ կորցրած ընկերոջ համար:

Հայրս և մայրս չափազանց սիրում եյին Հակոբին, վո՛չ միայն նրա համար, վոր իրենց անդրանիկ վորդին եր, այլ նրա համար, վոր հասակով նրանք Հակոբից շատ տարբերություն չունեյին: Մայրս 13 տարով մեծ եր Հակոբից իսկ հայրս՝ 17 տարով: Մայրս դեռևս յեղել եր մանուկ, յերբ առաջին անգամ զգացել եր նրա շարժվելն իր հոգում: Մանավանդ մայրս և Հակոբն իրար հետ կա-տարյալ մտերիմներ եյին: Մայրս չեր հիշում, թե ար-դյոք յեղե՞լ ե մի ժամանակ, յերբ Հակոբը գոյություն չի ունեցել:

Անցավ մի ամիս, բայց Հակոբի վիշտն ավելի յեր խորանում:

Յեվ հայրս վորոշեց նրան առաջարկել յերկու բան—ճամբորդություն կամ ամուսնություն: Հայրս խորապես համոզված եր, վոր սրանցից մեկնումեկը կփրկի նրան, կմեղմացնի նրա վիշտը, և մի որ ել կմո-ռանա: Այս նպատակով, հայրս հիշեցրեց նրան Թուր-քական յերգի մի կտորը—«Գյուն դյուր, կեչեր, աղ-լամա»*):

Հակոբն ընտրեց ճանապարհորդությունը:

Մայրս մեծ պատրաստություն տեսավ, նոր չորեր կարեց, սպիտակեղեններ պատրաստեց, նոր անկողին կարեց, քուրք առավ, Հակոբի գոտին լցրեց ոսկով:

Բոլորս համբուրեցինք նրան, մայրս հազիվ կարո-ղացավ բաժանվել Հակոբից, իսկ հայրս սառնասրտու-թյամբ համբուրեց նրան և ասաց.

— Դուն քըզի աղեկ նայիր:

Բոլորը զարմացան, վոր հաջի եֆենդին լաց չեղավ, բայց յերբ կառքի անիվները սկսեցին գլորվել, կառքը հեռացավ, դարձավ մի կետ և ի վերջո անհետացավ, հայրս մտավ իր սենյակը, բաց արավ պահարանը, մի յերկու գավաթ ողի խմեց, և մենք տեսանք, վոր նրա աչքերից արցունքի կաթիլներ եյին վազում լուռ և

*) Որ ե, կանցնի, լաց մի լինի:

արտակեղեք: Մայրս մոտեցավ նրան լացով, հայրս հրթունքներն իրար էր սեղմում և չէր նայում նրան, բայց ի վերջո չդիմացավ և սկսեց հեկեկալ:

— Մարանը նոր մեռավ—ասաց հայրս և ողի ուղեց:

— Աստված չի կամեցավ, որ յավրուս քեֆ էնի,—շշնջաց մայրս:

Հայրս մի մթին հայհոյանք շպրտեց աստծո հասցեյին, որից հետո մայրս դուրս յեկավ սենյակից և խաչակնքեց:

* * *

Հակոբը վերադարձավ կազդուրված, ելի առողջ, հզոր: Նրա հասակը կարծես ավելի յեր բարձրացել:

— Հակոբը եկե՞լ է, հա՞,— հարցնում էյին ծանոթները մորս: Մայրս պատասխանում էր:

— Հա՛, չինարս եկեր է:

Հակոբը տեսել էր ծով, զանազան քաղաքներ, մեծ քաղաքներ—Սամսոն, Պոլիս, Զմյուռնիա, Վառնա: Օրերով նա պատմեց իր տեսածները: Մենք կախվում էյինք նրա շրթունքներից: Հայրս այդ բոլոր վայրերում յեղել էր: Նա հարցեր էր տալիս:

— Սկյուտար գացի՞ր, ծո՛:

— Գացի:

— Բոյաճի գյո՞ւղ:

— Բոյաճի գյուղ ըլ գացի:

— Սամբոլի կողմը փաչա*) կերա՞ր:

— Կերա:

— Աֆերիմ, ծո՛, ամեն տեղ եղեր ես:

Ցերբ մայրս լսում էր, որ Հակոբը յեղել է այն վայրերում, որտեղ յեղել է նաև իր ամուսինը՝ հրճվանքից չէր իմանում թե ինչ անի:

*) Փաչա—խաշ

— Ղավզայի բաղնիքը լոգցա՞ր:

— Չէ՛, հայրի՛կ, ատեն չեղավ:

— Ծո՛, մարդ Ղավզա երթա ու բաղնիքը չը լոգնա՞... երոր նորեն երթաս, լոգցի՛ր:

— Կլոգնամ, հա,— խոստանում էր Հակոբը:

Ամբողջ մի ամիս մեր տանը գլխավոր խոսակցությունն էր Հակոբի ճամբորդությունը, զբաղված էինք նրան լսելով և հետը բերած նվերներն ուտելով, հագնելով, կախելով զանազան տեղեր:

Ինձ բերել էր կարմիր չուստ: Առաջին անգամ երբ հագա և փողոց գնացի, ինձ թվում էր, որ ամբողջ քաղաքի բնակչությունը չուստս է դիտում:

Մի ամիս հետո Հակոբը բոլորից գաղտնի, բաց արավ Մարանի ննջարանը, որն ինքը կողպել և գնացել էր և դուրս յեկավ տխուր:

Թե Մարանի հիշատակը և թե այն, որ քաղաքում շատ զբաղվելու բաներ չկային, բացի դրախտային պարտեզներից, Հակոբի ճակատին իջեցրին նորից մի թեթև մռայլ:

Սկզբի օրերին այս մռայլն այնքան էլ նշմարելի չեղավ, բայց հետզհետե դարձավ զգալի և մտահոգիչ ծնողների համար:

Մի օր, երբ յես նստած էյի հորս կողքին և նա խաղում էր իմ փոսկեգույն մազերի հետ՝ կանչեց մորս և սկսեցին խոսել Հակոբի մասին:

— Պիտի կարգենք էդ տղան,—ասաց հայրս:

Մորս աչքերը փայլեցին:

— Ցեթե համոզես:

— Կհամոզվի, բեխերն արդեն մեծցեր են, Պոլիսմոլիս կերևա քիթ բերանը աղջիկներու քսեր է, խելքը տեղ է երեր:

Մորս դուր չեկավ, որ հայրս մատնանշեց այդ:

— Ի՞նչ գիտես,—հարցրեց:

— Ցես գիտեմ, դուն ինծի հարցուր,—կարճ կտրեց հայրս:

Մայրս խոստացավ, որ ինքը հայտնի այդ բանը Հակոբին:

— Սանկ չնորհքով ձևով ըսե,— պատվիրեց հայրս:

Ցեվ վորոշեցին, վոր աղջիկը պետք ե լիներ սիրուն: Հայրս ինքն առաջարկեց.

— Ինչ ընտանիքե կուզե թող ըլլի՝ աղվոր ըլլի,— ասաց:

Մայրս ապշեց: Հայրս ինչքա՞ն խորը պետք ե Հակոբին սիրեր, վոր զիջեր իր արիստոկրատիզմից:

Մայրս ավելացրեց.

— Աղվոր ըլլի ու կաթն ըլ մաքուր ըլլի:

— Դահա աղեկ:

Հակոբը համաձայնվել եր, յերևի ճիշտ եր հորս կարծիքը թե՝ «քիթը բերանն աղջիկներու քաշծ կըլլի»: Սկսվեց աղջիկ վորոնելու պրոցեսը: Պարզվեց, վոր հայրս չեր զիջի ամենափոքրիկ, ամենաաննշան պակասության անգամ: Մայրս ի վերջո մատնանշեց մի աղջիկ, վոր իսկապես սիրուն եր, բայց հայրս առարկեց.

— Գլուխն աղեկ չի բռներ, քիչ մը կը կախե:

Մայրս հուսահատվեց, վոր կարող պիտի լիներ գտնելու այն տիպարը, վոր գոյություն ուներ հորս մտապատկերում, բայց իրականության մեջ գոյություն չուներ:

— Ցես աղջիկ չեմ ուզեր, արձան կուզեմ,— հայտարարեց հայրս:

Անցավ մի ամիս ևս: Մայրս այլևս այդ մասին չեր խոսում:

Մի որ հայրս թե՝

— Հը՞, Մարգրիտ, աղջիկ գտա՞ր:

— Դուն հրեշտակ կուզես, աշխարքի մեջ հրեշտակ կա՞:

— Հա, հրեշտակ կուզեմ, բերանդ պաղնիմ, աղեկ ըսիր, հրեշտակ կուզեմ:

— Հրեշտակ չիկա:

— Կա,— վճռական պատասխանեց հայրս,— հրեշտակ կա, հրեշտակն ըլ գտեր իմ:

— Վո՞վ:

— Գիրգոր աղային աղջիկը:

— Պզտիկ ե:

— Թո՛ղ ըլլի, դուն տասնիրեք տարեկան եյիր ծոցս մտար,— պատասխանեց հայրս:

Մայրս լռեց, ամաչեց և ապա զտավ, վոր ճիշտ եր ասում հայրս:

Ի վերջո մայրս հարցրեց.

— Կուտա՞ն:

Արդեն (այստեղ վիրավորվեց հորս արիստոկրատիզմը:

— Ցես ուզեմ, թող չի տան, աղջիկը տասներեք, տղան տասնութը, ինչո՞ւ չպիտի տան:

— Ասլանի պես ըլ տղա,— ավելացրեց մայրս:

Գրիգոր աղայի աղջիկը, Ցեղիսաբեթը, իսկապես գեղեցիկ եր, հորս մտապատկերում գոյություն ունեցող աղջիկն եր, նա նման եր միլոսյան Վեներային, ավելացրած նրա վարդագույն մարմինը և կոկորդի վրա մի սև խալ, թուխկոտուն և կարկաչուն մի աղջիկ, վորի մասին յերբ մայրս հայտնել եր Հակոբին, Հակոբը ժըպտացել և փաթաթվել եր մորս:

Մի յերեկո հայրս և մայրս գնացին Գրիգոր աղայի մոտ և յերկար-բարակ ուրիշ խնդիրների մասին խոսելուց հետո՝ խոսք եյին բաց արել Ցեղիսաբեթի մասին:

— Հաջի եֆենդի, մեր աղջիկը ձերն ե, բայց քիչ մի ժամանակ տուր մորը հետ դանըշմիշ ըլլիմ,— ասել եր Գրիգոր աղան:

— Շատ աղեկ,— պատասխանել եր հայրս:

Մյուս որը յերեկոյան մենք ստացանք մի մեծ սինիյով փախլավա Գրիգոր աղայի տնից՝ ի նշան համաձայնության:

Մի քանի որ նվերներ գնացին մեր տնից և նվերներ յեկան Գրիգոր աղայի տնից:

Այս խոսակցությունից ութն որ անց եր, յերբ մայրս

վերադարձավ բաղնիսից և ուղիղ բարձրանալով հորս մոտ հայտնեց, որ Ցեղխաբեթին տեսել եր բաղնիսում:

— Հը՞, ինտո՞ր եր,—հարցեց հայրս:

— Գիտես քի լուսնկայեն ե ընկեր,—պատասխանեց մայրս:

Ապա պատմեց, թե ինչպես Ցեղխաբեթը, իր մոր թելադրանքով, յեկել ե և համբուրել մորս ձեռքը և մայրս չի թողել, որ գնա, ինքն ե լողացրել նրան, սանրել մազերը, հագվեցրել և կառքով բոլոր ընտանիքին տուն ուղարկել:

— Շատ աղեկ ես երեր,—ասաց հայրս:

Յերկար ժամանակ չթողեցին, որ անցնի, նշանեցին Հակոբին և շուտով ել պսակեցին:

Մայրս հոգս տարավ, որ հարսանիքն անցնի չքեղ, ո՛չ մի բան պակաս չլինի, բայց հորս հետ ունեցան մի անհամ վեճ:

Հայրս չեր ցանկանում, որ իր որդին քահանայով պսակվի:

— Հորը տունեն կբերենք մեր տունը, վերջացավ գնա՛ց...—պնդում եր հայրս, իսկ մայրս հակաճառում եր:

— Յես քըզի հետ համաձայն եմ, բայց անոր հայրն ու մայրը կուզե՞ն, որ իրենց աղջիկն անպսակ ըլլի:

Հայրս գիտակցում եր, որ դա ճիշտ ե, անպսակ չեր կարելի աղջկան տուն բերել, բայց չեր ել կարող տանել, որ քահանա պետք ե լինեք գործում:

Վերջապես յերկար վեճից հետո՝ հայրս զիջեց և համաձայնվեց, որ որդին քահանայով պսակվի, բայց պայմանով, որ քահանան յեկեղեցում պսակը վերջացնելուց հետո՝ տուն չգա: Մայրս համաձայնեց, բայց պսակից հետո, ընդունեց քահանային հորից գաղտնի, բոլորին պատվիրեց, որ նրան չասեն, պատվեց. կերակրեց, խմցրեց, վարձատրեց և ճանապարհ դրեց: Թերևս հայրս գուշակում եր, որ մայրս այդպիսի բան կարող եր անել, բայց վրա չընկավ, քանի որ իրենից

գաղտնի յեր տեղի ունենում և իր կամքը ձևականորեն կատարվում եր:

Մի նոր ուրախություն ծագեց մեր տանը Ցեղխաբեթի յերևալով: Փոքր եր Ցեղխաբեթը, թոփ եր խաղում մեզ հետ, այգում վազվզում, ավազանում լողանում: Յերբ Հակոբը գալիս եր տուն, գրկում եր նրան իր հզոր թևերի մեջ, բարձրացնում վեր և տանում սենյակ, ճանապարհին համբուրելով և ասելով.

— Մարա՛նս, իմ աղվո՛ր Մարանս:

* * *

Գեորգին—Հակոբից փոքր յեղբորս—յես միշտ հիշում եմ անհուն բերկրանքով, որովհետև նա մեր տան գրեթե միակ անդամն եր, որ ազատ եր ջղայնությունից: Ամեն մի բարկություն նա հավասարեցնում եր բացարձակ զերոյի: Պատահում եր, որ մեկնումեկը լցվում եր վսեմ զայրույթով—աչքեր եյին փայլատակում, բարձրանում եր որոտ, որ ո՛չ թե գալիս եր յերկնքից, այլ սենյակի հատակից դեպի առաստաղը, գործը հասնում եր Գեորգին, մի մեղմ ժպիտ, մի հյութալի կատակ, մի չվիրավորող հեգնություն, և վսեմ զայրույթը փոխվում եր նսեմ տափակության: Պատահում եր, որ աչքերի փայլատակումին հաջորդում եր դանակի փայլատակում—այդ յերկու փայլակներին ընդառաջ եր գնում նա սրերից ավելի հզոր կատակով և տիրում եր խորին խաղաղություն:

Այն օրերից մինչև հիմա ել յես հիանում եմ նրանով, նրա հզոր ջղերի կարգ ու սարքով, և յեկել եմ այն վերջնական յեզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:

Գեորգը մեծ կրքեր չուներ: Նրա ամենամեծ կիրքը չամիչն եր: Նա սիրում եր չամիչ: Չամիչը—դա ուտելիք չեր նրա համար, այլ մի ուրիշ բան: Սակավակեր, ընտրությամբ ուտող, բայց չամիչի համար տածում եր

նա բոցավառ կիրք: Չամիչ—դա յերազի կապույտ թըռչունն եր: Փոխում եր ամեն ինչ չամիչի հետ, իր ունեցած ամենաթանկագին իրը կարող եր վտանգվել, յեթե մեկը նրան դյութեր չամիչով:

Գեորգը հիվանդ պառկած ե, տաքությունը բարձր: Հայրս մոտենում եր նրան, ձեռքը դնում ճակատին և հարցնում.

— Գեո՛րգ, չամիչ կուզե՞ս:

Գեորգն աչքերը բաց եր անում, տենդի մեջ անգամ զգում եր չամիչի թովչանքը և խոր թախիծով պատասխանում.

— Չե՛, չեմ ուզեր, հիվանդ իմ...

Հայրս անմիջապես կարգադրում եր վազել բժշկի յետևից:

— Չամիչ վոր չուզեց, ըսել ե քի գործը բուրդ ե,— յեզրակացնում եր հայրս:

Յեվ չամիչով փորձում եյին նրա առողջանալը:

— Ի՞նչ կուզես, վոր բերիմ քըզի,—հարցնում եր մայրս:

Գեորգի սև աչքերը փայլում եյին և բերանն այնպես ձև եր ստանում, վոր պարզ եր լինում թե պիտի ասի.

— Չամիչ կուզիմ:

* * *

Հիշում եմ նաև իմ բրոնզյա յեղբորս, Լևոնին, վորին մենք տանը Լոլո եյինք անվանում:

Թուխ և մաքուր մորթով, բարձր ճակատով, ուժեղ ծնոտներով, քիչ ալիքավորվող, սև մազերով, սև և խոշոր աչքերով բարձրահասակ մի տղամարդ եր Լոլոն:

Լոլոյի աչքերն եյին, վոր փայլատակում եյին յերբեմն զայրույթից, նրա ձայնն եր, վոր վորոտի նման պայթում եր մեր տանը, նա յեր, վոր չողչողացնում եր

զանակը: Այս ահավոր տղան, սակայն, ուներ բարի, աղավնու սրտի պես բարի մի սիրտ:

Գեորգը յերբեք լաց չեր լինում և յերբեք չեր զայրանում:

Լևոնը զայրանում եր գազանի նման և լաց եր լինում, ինչպես գանգրահեր մի մանուկ, յերբ վեգն ե կորցնում:

Մինչև իր յեղերական մահը նա չիմացավ թե ինչ ե կյանքի միջին ճանապարհը: Մահն անգամ նա չդիմավորեց միջին ճանապարհով, սոսկ չմեռավ նա, այլ սպանվեց—սպանվեց, ինչպես պատմում եյին, հորդառատ արիությամբ, բուռն թափով և յեղերական կերպով:

Նրա դեմքի վրա ապրում եյին յերկու արտահայտություն—մանկական ժպիտ և գազանի մռայլություն:

Յես հիանում եյի Գեորգի կայուն ջղերով, բայց իմ մարմնի և հոգու բոլոր թելերով ձգտում եյի դեպի Լոլոյի ծայրահեղությունները:

Սիրում եյի, յերբ Լոլոն մի տեղ եր դնում և վերադարձին պատմում.

— Գոցինք ձորը, արև մարև կորավեցավ, սկսեցավ կարկուտ, ամեն մեկը գլխուս չափ...

Հետագայում, կյանքի բովում, նա իր ներքին թափի համապատասխան միայն մի բան գտավ այս աշխարհում—Նյու-Յորքի, արևմուտքի այդ ահարկու քաղաքի բիրժան—մտավ նա այդ բիրժան ֆինանսական մոլուցքով, թավալվեց այդ բիրժայի վերիվայրումներում, բարձրացավ և ընկավ, ապրեց կյանքի զարհուրելի րոպեներ, մի որ՝ միլիոններ, մյուս որ՝ սենտերի կարոտ, բայց խելահեղորեն առնական, միշտ նոր և ահեղ թափով: Վո՛չ մի բան այս աշխարհում նրան չկարողացավ վախեցնել, սրի դեմ նա ցցում եր իր սև թարթիչները և այդ թարթիչների արանքներից նայում հեռուն:

Նա ինձ դիմավորեց Նյու-Յորքի առաջ ֆրանսական «ԼԱ ՏՈՒՐԵՆ» շոգենավում:

— Մայրիկը ինտո՞ր է,—հարցրեց:

— Աղէկ է, ամա վոր քեզ ու Գեորգը կհիշէ, կուլա,—պատասխանեցի:

Ցեվ տեսա, վոր Լոլոյի պայծառ աչքերը թացացել եյին արցունքի տեղատարափով:

Ձեռքիցս բռնեց և միասին մտանք Ամերիկայի ցամաքը:

Այդ գիշեր Լոլոն ինձ ցույց տվեց Նյու-Յորքը:

— Կտեսնա՞ս այս քաղաքը, մեծ է հա՛ աղէկ է, պզտիկ չէ, աս յերկրեն անդին ա՛լ յերկիր չիկա, ինչ վոր տի սովրիս, աստեղ տի սովրիս, հայդէ, բոյդ տեսնամ, ծո՛:

Այդ ժամանակ նա ձեռքում ուներ յերկաթուղային ակցիաներ:

Յես Լոլոյի նման չմտա բիրժան, այլ մտա գրքերի աշխարհը, բայց մտա նույն թափով և կրքով, ինչ թափով և կրքով Լոլոն մտել եր բիրժան:

***

Մեսրոպյան տառերն ինձ առաջին անգամ սովորեցրեց մի ասորի, վարժապետ,—պարոն Աչուրը: Կարճահասակ եր նա, բայց լայնաթիկունք, վոսկրոտ, լայն և բարձր ճակատով, ճաղատ գանկով, ցցված այտոսկրներով, ժայռային մուգ-կապույտ և խոշոր աչքերով, անզուսպ աճած բեղերով, վորոնք գնալով լայնանում եյին և ապա մեղմորեն բարականում և կախվում անխնա կերպով բացված բերանի յերկու կողմերից վար, ինչպես փոքրիկ պոչեր, ծածկելով վերևի մեծ ատամները և բերանի ահավոր խոռոչը: Հին, բաբելոնական արձաններից, պարոն Աչուրը տարբերվում եր միայն մի բանով—ակնոցով—մի բան, վոր խանգարում եր նրա արխայիկ և վսեմ կերպարանքը:

Պարոն Աչուրը և բանաստեղծ եր, գրում եր վոտանավորներ կիսագրաբար և հին վարպետների վոճով—

«Նինջ մանկան», «Վողբ ի վերա շիրմի ազնվաշուք Նիկողայոս աղայի Ազնավուրյանց», «Հրեշտակք», «Հաղաքս գինվո», «Վասն ընտանյաց խաղաղության», «Դստերք յերկնի», և այլն, և այլն: Այս բոլորը նա գրում եր մի վորևէ դեպքի առթիվ և նվիրում եր վորոշ մարդկանց:

Պարոն Աչուրն եր, վոր ինձ հեգելով կարդացնել տվեց առաջին նախադասությունը—«խաչ, ոգնյա՛ ինձ»: Կային յերեխաներ, վոր դժվարությամբ եյին «կանչում» խաչին ոգնության: Պարոն Աչուրը, այդ դժվարությունը հեշտացնելու համար, ուներ մի շատ պարզ մեթոդ—փայտի հարվածը: Պետք է խճմտորեն հիշատակել այստեղ, վոր փայտի հարվածներն իջնում եյին բացառապես մարմնի փափուկ տեղերին: Բոլոր ծնողներն ել գոհ եյին այս մեթոդից: Ծնողներն իրենք եյին, վոր հրահանգում եյին և քաջալերում—«փափուկ տեղվանքը մեյ մը չկարմրցնե՞ս»:

Տառերը սովորելուց և հեգելով կարդալուց հետո՝ մենք հեռացանք պարոն Աչուրի մոտից և գնացինք դըպրոց: Տարեվերջին նա կարդաց մի ճառ, գրած մեծ թաբաղայի վրա, վորից մենք վոչինչ չհասկացանք, վորովհետև գրաբար եր ամբողջովին, միայն այնքան հասկացանք, վոր մեզ խրատներ եր տալիս: Ճառի վերնագիրն եր «հուսկ բանք», վորի նշանակությունն ել մենք հուսկ ապա հասկացանք:

Բայց պարոն Աչուրը մեզ չմոռացավ: Նա յերբեմն հանդիպում եր մեզ փողոցում, կանգնեցնում ու հրամայում—«հայերեն գիրքդ կարդա»: Ստուգում եր ուզում կատարել մեր առաջադիմության մասին: Յերբ լավ եյինք կարդում՝ պարոն Աչուրը, անսահման գոհ ժպիտով, մրթմրթում եր—«Քոքը աղեկ դրիր իմ, մաշշալլա՛հ...»:

Մի որ պարոն Աչուրը հայտնվեց մեր տանը գոհունակ ժպիտով և ժայռագույն աչքերն ավելի խոշորացած: Նրա հայտնվելուց մի քանի շաբաթ առաջ մենք հողին եյինք հանձնել մեծ յեղբորս մանչ յերեխային—Տիգրա-

նիկին։ Այդ առթիվ յես գրել եյի մի վոտանավոր և, առանց վոչ վոքին մի բան ասելու, ուղարկել եյի Զմյուռնիա «Արևելյան մամուլ» շաբաթաթերթին։ Այդ վոտանավորը տպվեց—առաջին տպագրված «յերկը» իմ կյանքում։ Պարոն Աշուրը յեկել եր մեր տունը այդ վոտանավորը կարդալուց հետո, յեկել եր գոհունակ ժպտով և ժայռային աչքերն ավելի խոշորացած։

Մի քանի գովասանական խոսքեր ասելուց հետո՝ նա հայտարարեց․

«Քոքը աղեկ դրեր իմ, մաշշալլա՛հ...»

Է

Յես ունեյի յերեք քույր—Խասիկը, Սիրանուշը և Զայնիկը։

Խասիկը մեծ յեղբորիցս փոքր եր, բայց Գեորգից և Լեվոնից մեծ, յես յեղբայրներիս ամենափոքրն եյի, իսկ Սիրանուշը և Զայնիկը ինձանից փոքր եյին։

Խասիկին յես հիշում եմ հորս կապակցությամբ—հորս հողաթափներն եր տալիս, ջուր եր լցնում, վոր լվացվի, չափազանց աշխատասեր մի աղջիկ, վոր հորս մատուցած ծառայության մեջ գտնում եր խոր յերջանկություն։

Թե ինչպես նա կապվեց Ամերիկայից յեկած վոսկյա ատամնավոր մի մարդու—չգիտեմ, մանրամասներն ինձ ծանոթ չեն, բայց գիտեմ, վոր նա դժբախտ յեղավ։

Անձնվեր աղջիկ եր, ուրիշին միշտ ծառայելու պատրաստ, անում եր այն, ինչ վոր կարող եր։

Սիրանուշը՝ սև, խոշոր աչքերով, սպիտակ մորթով, առատ մազերով մի աղջիկ եր, խոսում եր և ծիծաղում և ուրիշներին ճաքեցնելու մեծ հատկություններ ուներ։ Ճաքեցնելու համար նա չեր ընդդիմախոսում—ճաքեցնում եր համաձայնելով, այդ համաձայնության մեջ կար այնպիսի նրբին հեգնություն, ինչպես իր սքանչելի ձեռագործներում։

Մենք միասին եյինք դպրոց գնում—յես առաջնորդում եյի նրան։ Յերբ հեռանում եյինք տնից՝ նա բռնում

եր ձեռքս և կամաց կամաց սեղմվում ինձ: Յես հպարտ եյի, վոր ահա պաշտպանում եմ մի քնքուշ աղջկա: Յես սիրում եյի նրան, վորովհետև նա ինձ չեր ճաքեցնում, ինձ հանդեպ նա չեր գործածում ամենաթույլ հեգնություն անգամ:

Սիրանուշն ել դժբաղդ յեղավ, վորովհետև սպանվեց նրա ամուսինը չար մարդկանց ձեռքով:

Զայնիկը—դա յես եյի,—յեթե աղջիկ ծնված լինեյի—կապույտ աչքեր, սև հոնքերով և սև թարթիչներով նիզակավորված, սև մազերով և սպիտակ մորթով: Զայնիկը—ահա զայրանում է մի րոպե և քնքշանում հաջորդ րոպեյում: Այնպես լավ եյի հասկանում յես նրան: Շատերի համար նա մի մութ առեղծված եր, բայց նրա բնավորությունը, մինչև անգամ նրա անիմաստ գործերը, ինձ համար կարդացված գրքի պես եյին: Այն գործերը, վորոնք անիմաստ եյին կոչվում, անգամ յես եյի անիմաստ կոչում, յես ինքս ել կանեյի այնպես, ինչպես Զայնիկն եր անում:

Ինչքա՛ն եմ հիշում քեզ. կապուտաչյա՛ իմ քույր: Քեզ հիշելիս՝ իմ հոգին լցվում է պատկերներով—հիշում եմ մեր պարտեզը, կտուրը, ծաղկող ակացիան, հիշում եմ աշնան դեղին տերևները, վոր քամին քշում, բերում եր մեր դռան առաջ, հիշում եմ ձյունի սպիտակ փաթիլները, այդ ձյունի մեջ քո վոտնատումները, և հիշում եմ մորս վերջին մայրությունը: Քեզանով վերջացավ, կապուտաչյա իմ քո՛ւյր, նրա կողերի խայտանքը, ընդմիշտ լռեց նրա քնարը: Դո՛ւ յեղար վերջինը, վոր ծծեցիր նրա կաթը, դու, մորս վերջի՛ն մանուշակ, վերջի՛ն յերգ, վերջի՛ն բերկրանք:

* * *

Բացի իմ քույրերից, կային և ուրիշ աղջիկներ, վորոնք աճում եյին իմ մանկության հետ, վորոնք ծաղկում ու վառվում եյին իմ մանկության ափերի վրա:

Դեռևս նրանց ամեն մեկի ճիչը թրթռում է իմ ականջում, նրանց ամեն մեկի ժպիտը ծաղկում է իմ աչքերի առաջ: Նրանք գարուններ եյին, վորոնք վազում եյին գարունների մեջ, նրանք ծաղիկներ եյին, վորոնք թավալվում եյին ծաղիկների գրկում:

Նրանցից մեկը Քրիստինեն եր, դժգո՛ւյն, ինչպես սառած մաքուր մեղրը. բայց նրան հանդիպելիս՝ շիկնում եր, այնքան շիկնում, վոր ահա, կարծես, պետք է վառվի՛: Փոքրիկ եր, լիքը, կլոր, սպիտակ ձեռներով, բայց ելի լիքը և փոսիկներով:

Մոտենում եմ, վոր բռնեմ մազերից, փախչում է մեղմ ծիծաղելով: Նրա ծիծաղը մեծ սիմֆոնիայի մի բեկորն եր կարծես:

Վազում է Քրիստինեն պարտեզի կածաններով, ինչպես յեղնիկն անտառում, բարձրանում տան վերևի հարկը, բաց անում լուսամուտը, նայում ներքև ու ծիծաղում:

Քրիստինեն մի աստղ եր վար ընկած յերկնքից և խոշորացած:

— Վա՛ր յեկուր:

— Չեմ գար, մազս կքաշես:

— Յեկո՛ւր, չեմ քաշեր:

Իջնում է նա պարտեզը: Յես հեռանում եմ դեպի պարտեզի թավուտները: Նա հետևում է ինձ: Կանգ եմ առնում այնտեղ, ուր վոչ վոք չի կարող նշմարել մեզ, մինչև անգամ յերկնքից դիտողը:

Քրիստինեն կանգ է առնում թավուտի մուգ կանաչում: Կարծես մի անծանոթ ձեռք թավուտների մեջ մի կանթեղ վառեց և անհետացավ:

Մոտենում եմ:

Գլուխը կախում է:

Սիրտս պոկվում է, փախչում է վանդակից դուրս: Բռնում եմ նրա մազերից:

— Քաշի՞մ:

— Քաշե՛,—շշնջում է Քրիստինեն:

— Յես քու մազերդ չեմ քաշեր,—ասում եմ և մոտեցնում եմ շրթունքներիս:

Այդ մազերի բուրումը պարտեզի բոլոր ծաղիկների բաժակներից էր հավաքել:

Երբ բռնում եմ նրա ձեռքը, աչքերը բոցավառվում են:

Էլի փախչում է:

Ո՛չ մի կանթեղ թավուտների մութ կանաչում:

Խոշորացած և յերկնքից վար ընկած աստղ, Քրիստինե՛, յես քեզ հիշում եմ:

* * *

Վերոնին յես տեսնում եյի տարեկան մի անգամ: Մայրս ինձ նշանել եր նրա հետ օրորոցում: Եվ այդ պատճառ եր լինում, վոր նա փախչեր ինձանից: Փոքրիկ և բոսո՛ր աղջիկ, յես հիշում եմ քո մարգարտյա ատամները, քո ծնոտի փոսիկը, քո ձեռքը, վորի նմանը յես տեսա միայն Ջիոկոնդայի կրծքի վրա, հիշում եմ քո ճակատը, բարձր և լայն:

Ես լսեցի, վոր յերկինքը խորտակվել է քո պայծառ պարտեզների վրա...

* * *

Հիշում եմ մորաքրոջս աղջկան—Ռեբեկային:

Մեծղի, առողջ, ժիր, շարժուն, մտացի և պոետ մի աղջիկ եր Ռեբեկան, վորի կապույտ և խոշոր աչքերը միայն բավական եյին, վոր կարելի լիներ վերականգնել վողջ խորտակված յերկինքը:

Այդ յերկինքը խորտակվեց Ռեբեկայի լուսաբացի բարձր և սպիտակ շուշանների վրա: Տարան նրան արաբական անապատները...լսեցի, լսեցի ահավոր մորմոքով, վոր նրա արևային ճակատի և այտերի վրա խալեր են դրոշմել...

Քո՛ւյր, խոնարհվում եմ քո զարհուրելի ճակատագրի առաջ...

Ընդունի՛ր քո յեղբոր արցունքը...

Ը

Մեր փողոցը հին Արևելքի այն ճանապարհի մասնիկն եր, վոր ծայր եր առնում հին Հռոմից, գալիս հասնում եր Բյուզանդիայի հին մայրաքաղաքը, ընդհատվում եր, մի ակնթարթ, կապույտ ծովով, ապա շարունակվում եր, ողակելով ամբողջ Փոքր Ասիան, գալիս անցնում եր մեր տան առջևից և գնում մինչև «աշխարհի ծայրը»—Բաղդատ:

Մեզ համար ամենահեռավոր վայրը Բաղդատն եր: Բաղդատից դենը մեզ համար ուրիշ յերկրներ չկային:

Մեր աշխարհից միայն մեկը գնացել եր Բաղդատ և յերբ վերադարձավ՝ քաղաքի կեսը նրան դիմավորելու գնաց:

—Ի՞նչ կըսես, ծո՛, հերիֆը մինչև՛՛ Բաղդատ գնաց ու յեկավ:

Առաջին անգամ, յերբ սկսեցի Հունաստանի և Հռովմի պատմությունը սովորել, հելլենների դեպի Արևելքն տրած արշավանքները, պարսից պատերազմները, Կյուրոսը, Ալեքսանդրը, Հուլիոս Կեսարը, հռովմեական կայսրության շինած ճանապարհները—ավելի և ավելի սիրով և հպարտությամբ կապվեցի մեր փողոցին: Կարծես զգում եյի, վոր պարսկական, հունական, հռովմեական զորքերն անցնում եյին մեր դռան առաջից:

Մի օր, յերբ միջնակարգում, չեմ հիշում վո՛ր արշավանքի պատմությունն եյի պատմում, հաջողեցի այդ արշավանքի ուղեգիծը բերել և անցկացնել մեր փողո-

ցից՝ իմ գավառացի ուսուցիչը ժպտաց քթի տակ և չցանկացավ իմ պատմական սխալն ուղղել։

* * *

Մեր փողոցը միաժամանակ այն ճանապարհն եր, վոր միացնում եր մեր քաղաքը ուրիշ քաղաքների և գյուղերի հետ։

Տարվա բոլոր յեղանակներում՝ առավոտյան, հին քաղաքից և գյուղերից մեր փողոցից եյին անցնում մեր քաղաքի շուկայում խանութ ունեցողները, արհեստավորները, մշակները և յերեկոյան միևնույն մարդիկ վերադառնում եյին հին քաղաքն ու զանազան գյուղերը։

Այս մարդկանց մեջ կար մեկը, վոր մեր քաղաքի բարձրագույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչն եր։

Այդ ուսուցիչը յերկու բանով տարբերվում եր ուրիշներից—ոսլայած սպիտակ ոձիք ուներ և նստում եր սպիտակ եշու վրա։

Եշն ավելի նշանավոր եր, քան ինքը։ Նա սովորություն ուներ, միայն առավոտները, մեր դռնից մի քիչ վերև աղիողորմ զռալ, վորից մեր փողոցի բոլոր բնակիչները զարթնում եյին և խաչակնքում։

Ով վոր տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում եր և սլաքներն ուղղում—7-ից քառորդ անց։

Իսկ նրանք, վորոնք ժամացույց չունեյին և եշի զռալն ավելորդ եյին համարում, զայրանում եյին և սկսում մրթմրթալ։

— Ինչո՞ւ չե, ազգի փարայով եշ կհեծնա։

Մի որ մեր տանը, Նիկողոս աղայի նախագահությամբ, ժողով գումարվեց, վորին մասնակցում եր նաև մաթեմատիկայի ուսուցիչը։

Յերբ մաթեմատիկոսը ներս մտավ՝ ծառան նրա եշը տարավ պարտեզը և կապեց մի ծառի։

Ժողովի ամբողջ ընթացքում յես կանգնած եյի սենյակի շեմքի մոտ և միայն սպասում եյի, վոր հոգա-

բարձության անդամներից մեկը սիկարեթը փաթաթի և յես պատրաստ լինեմ լուցկին տնկելու նրա քթին։

Ժողովի ընթացքում բուռն վեճ բացվեց մաթեմատիկոսի ռոճիկի հավելման շուրջը։ Մաթեմատիկոսը պնդում եր, վոր ռոճիկի վրա անպայման հավելում պետք ե լինի, իսկ հոգաբարձությունը միահամուռ դեմ եր։

Մաթեմատիկոսը գյուղում եր ապրում և մերժում եր քաղաքում բնակվել, բայց գյուղում բնակվելով և ամեն որ քաղաք գալով՝ անձնական ծախսերն ավելանում եյին։

Վերջապես հոգաբարձության անդամներից մեկը, վորի բեխերն ականջներից անցնում եյին և խառնվում գլխի յետևի մազերի հետ, խռպոտ ձայնով ասաց․

— Պարո՛ն վարժապետ, եշը հերիք չե՞։

Մաթեմատիկոսը չպատասխանած, եշը պարտեզից սկսեց այնպես զռալ, վոր տան պարտեզի կողմի լուսամուտների ապակիները չխչխկացին։

Մաթեմատիկոսը դարձավ յերկար բեխերով հոգաբարձուին․

— Հը՞, ստացա՞ր պատասխանը,—ասաց։

Յերկար բեխերով հոգաբարձուն շշփոթվեց և անմիջապես վրա տվեց․

— Յեթե թվաբանության մեջ ալ եշին ոգնության կդիմես, խոսք չունինք։

Այս վեճը պարզեց այն, վոր մաթեմատիկոսի եշը տրված եր հոգաբարձության կողմից։ Դա կազմում եր պայմանագրի մի մասը և դրա համար եր, վոր եշի զռալուց չոգտվողներն ասում եյին․․․«Ինչո՞ւ չե, ազգի փարայովը եշ կհեծնա»։

* * *

Այդ ժողովից մի քանի որ հետո յեր, յերբ նույն այդ ժողովի ամբարտավան նախագահը, Նիկողոս աղան,

գարշուրելի ծաղր ու ծանակի յենթարկվեց ամբողջ քաղաքում:

Մեր քաղաքում միայն մեկ հատ անառակ կին կար— Մարիցան:

Ասում եյին, վոր նրանից առաջ էլ յեղել եր մի ուրիշը, նրա անունն էլ Մարիցա:

Այնպես վոր շատերն անառակ կնոջ փոխարեն Մարիցա եյին ասում...

Օրինակի համար՝ մեկը հարցնում եր.

— Ո՞ւր տեղաց:

Մյուսը պատասխանում եր մի աչքը փակելով.

— Մարիցայի մոտեն:

Մարիցան—նրան մատով եյին ցույց տալիս փողոցների անկյուններից, լուսամուտներից, կտուրներից:

Մատով եյին ցույց տալիս, բայց չեյին խոսում հետը—ամոթ եր:

Մինչև անգամ գիշերները նրա հետ անցկացնող աղաները, շան նման նրա վոտները լիզողները, յեթե փողոցում պատահեյին՝ սուտ չտեսնել եյին ձևացնում: Մարիցայի տան յերկու հարևանները նրա տան կողմի լուսամուտները փակել եյին, մինչև վոր այդ «Սոդոմ-Գոմորը» հեռանար մի ուրիշ տուն, մի ուրիշ քաղաք կամ մի ուրիշ աշխարհ:

Բաղնիսում նրան տեսնողները փախչում եյին:

— Մսերը տես, ատոր համար ե, վոր բոլորը վրեն կվազեն:

Նրան չեյին քսվում, մի գուցե վարակվեյին նրա անառակությունից:

Մարիցան բաղնիսում ձեռքը թասին չեր տանում, նստում եր աթոռի վրա, մի պառավ կին, անառակության դպրոցի նախկին աշակերտուհի, վորը, իր կարգին մաշել եր մի սերունդ, լողացնում եր նրան, յերիտասարդ հերոսուհուն, տեսակ-տեսակ հոտավետ յուղեր եր քսում, հոտավետ ջրեր ցանում, տանում դուրս, առանձին սենյակում չորացնում, հագվեցնում:

Փողոցում Մարիցան քայլում եր դանդաղ, կապույտ զոնտիկով, սպասուհին յետևից, գլխի վրա

աղավնու բացված թևերի նման մի սանր, կոնքերը արվեստականորեն գցում եր մեկ աջ և մեկ ձախ, աչքի պոչովը նայում տղամարդկանց, թեթև ժպտում և շարունակում ճանապարհը:

Յեկեղեցի յերբեք չեր մտել, չեյին թույլ տա, վոր մտնի, միայն յերբեմն քաղաքի յերիտասարդ առաջնորդը կանչում եր նրան իր մոտ, վորպեսզի «աստծո խոսքը հաղորդի» նրան:

* * *

Մի որ փողոցի վերևից մի աղմուկ լսվեց, անորոշ աղմուկ, բայց համառորեն մոտենում եր և մեծանում:

Բոլորը դուրս թափվեցին, կանայք լցվեցին լուսամուտները, յերեխաները թռան կտուրները:

Վերևից գալիս եր, ավելի ճիշտ՝ խուժում եր յերեխաների մի ստվար բազմություն:

Այդ բազմությունը հալածում եր մի մարդու՝ Հոգաբարձության Նախագահ Նիկողոս աղային:

Յերեխաներն աղաղակում եյին.

— Մարիցայի մոտ եր գացե՛ր...

— Եհե՛յ, եհե՛յ, Մարիցայի տունեն դուրս ելավ...

Նիկողոս աղան գետնից քար եր վերցնում, նետում բազմության: Յերեխաները ցրվում եյին, ինչպես թռչունների մի յերամ, բայց ելի հավաքվում և ճչում ավելի բարձր:

— Հոգաբարձության նախագահը Մարիցայի մո՛տ...

Յերեխաների բազմության խառնվեցին և հասակավորներ:

Նիկողոս աղան պատասխանում եր.

— Սուտ են, սուտ են:

Յեվ ահաբեկված, ամոթահեծ նա վազում եր, սարսափով լցված և խուզարկու աչքերով հառում եր դռներին:

Նա վորոնում եր մի վորևիցե բաց դուռ, վորպեսզի ներս մտնի և ազատվի ամոթի անգութ ճանկերից:

Բայց բոլորն ել փակում եյին դռները, քաշվում ներս՝ մեղսակից չլինելու համար այն հանցանքին, վոր բոլոր մարդիկ, բոլոր ժամանակներում գործել եյին:

Յերբ Նիկողոս աղան հասավ մեր դուռը, մեր տան կանայք իջեցրին լուսամուտների վարագույրները, դուռըն արդեն փակ եր:

Յես կտուրից տեսա Նիկողոս աղային բավականին մոտից—քրտինքը վողողել եր նրան, գլխից շոգի յեր բարձրանում, վզի յերակներն ուռած, բեխի վրա խլինք, հրթունքները պրկված, ա՜հ նրա աչքերը՝ սարսափը ցցվել եր նրա աչքերում դանակի նման:

— Բոլոր գիշերը Մարիցայի մոտ եր...աղաղակում եյին վոմանք:

— Հոգաբարձության նախագահը՛,—աղաղակում եյին ուրիշները:

Հայրս նստած եր թախտի վրա: Յերբեք չմոտեցավ լուսամուտին: Քաշում եր ծխախոտը և չչնջում.

— Անպիտաննե՛ր, կարծես ուրիշ գործ չունեն:

Նիկողոս աղան հասավ բազարի մեծ հրապարակը և կորավ բազմության մեջ:

Ամբոխը ցրվեց բավարարված և հանգստացած:

Այդ դեպքից հետո Նիկողոս աղային վո՛չ վոք չտեսավ քաղաքի փողոցներում, խանութը մնաց փակ:

Ասում եյին, վոր տանն ել վո՛չ վոքի չի ընդունում, քաշվել ե մի առանձին սենյակ, ծխում ե, քայլում անընդհատ, գլուխն որորում, ինքնիրեն խոսում, հայհոյում:

Վեց ամիս հետո լուր տարածվեց, վոր Նիկողոս աղան լցրել ե իր ընտանիքը մի կառքում և գիշերով հեռացել ե քաղաքից՝ վերջին անգամ թքելով քաղաքի հողի վրա, կոշիկների փոշին թափ տալով:

Թե ո՞ւր գնաց Նիկողոս աղան, ի՞նչ յեղավ—վո՛չ վոք չիմացավ:

* * *

Գարուն ե, մեր փողոցում ծաղկում են նշենիները, խնձորենիները, տանձենիները, սալորենիները և ակացիաները: Հեռուն՝ Մաստառի գագաթին դեռևս ձյունը համառում ե, դիմադրում ե անեանալու վտանգի մեջ յեղող վորևե սարերքի նման, բայց արևը հաղթանակում ե ծաղկավառ, կանաչավառ դաշտում:

Յերբ առավոտյան գյուղական սայլերը մտնում են քաղաքը, անցնում են մեր փողոցով, յեզների կոտոշները զարդարված են նոր ծաղկած նշենիների սպիտակ մեծ ճյուղերով, իրենց ծաղկած վիճակում ինչքա՜ն նման են ձյունի տակ մնացած ճյուղերին:

Սայլապանների գտակների չորս բոլորքը շարած են

անպայման խնձորենու վարդագույն ծաղիկներ, վոր-պեսզի գույնով տարբերվեն նշենու սպիտակ ծաղիկից:

Սայլերի ճռճռոցը սկսվում եր շատ կանուխ, գար-նանային մթնշաղի այն կախարդական ժամերին, յերբ քունն այնքան եր քաղցրանում, վոր դառնում եր անդի-մադրելի:

Սայլերի ճռճռոցը զրորում եր մեզ, մենք վարժ եյինք այդ յերաժշտության, նրանք հեռվից գրկում եյին մեզ, խորացնում մեզ մեր արշալույսի թեթև, խու-սափուկ և յերերուն յերազում:

Սայլերի ճռճռոցը տևում եր շատ յերկար:

Զարթնում եյինք, սկսվում եր աշխատանքի որը և շարունակվում յեռանդուն կերպով մինչև կեսօր:

Դանդաղ, միօրինակ այդ ճռճռոցը կարելի յեր նմանեցնել ամեն մի նվագի, ուրախ կամ տխուր, նայած ունկնդրի ներքին տրամադրություններին: Յերբ տանն ինձ կշտամբում եյին, այնպես կշտամբում, վոր սիրտս փլչում եր, ուզում եյի լաց լինել, այդ ճռճռոցը թվում եր, վոր ինձ հետ վողբում ե լալագին, սայլերի ամեն մի անիվն արձագանքում եր իմ հոգու թախիծին:

Սայլերի ճռճռոցի հետ լսվում եյին նաև դարբինների մուրճերի հարվածները, յերբեմն արագ-արագ, յերբեմն ընդհատ-ընդհատ:

Մեր փողոցում շատ եյին դարբինները: Սիրում եյի յես կանգնել նրանց կրպակների առաջ և դիտել նրանց օջախի կրակը, վոր գնալով կատաղում եր փքսի քա-մուց, յես կարծում եյի, վոր կրակը կատաղում ե, վո-րովհետև ջղայնացնում են նրան:

Դարբինը յերբ դուրս եր բերում կարմրած յերկա-թը, այն ժամանակ իմ վոգևորությունը հասնում եր իր գագաթնակետին: Դարբինը, մրոտած դեմքով, կոշ-տացած, սևացած և այրված ձեռքերով առնում եր ծանր մուրճը և ընկնում շիկացած յերկաթի վրա՝ համառու-թյունը կոտրելու համար:

Իմ միակ ցանկությունն եր կարողանալ մի յերկա-թի իմ ուզած ձևը տալ:

Տանը, յերբ չեյի կարողանում մի քիչ հաստ յեր-կաթաթելը ծռել՝ միտս բերում եյի մեր հարևան դար-բինը, վոր կարողանում եր ամենախոշոր և ամենակո-պիտ յերկաթին տալ իր ցանկացած ձևը:

Նա հերոս եր իմ աչքին:

Ամեն անգամ, վոր ինձ հարց եյին տալիս թե՝ «ի՞նչ ես ուզում դառնալ», յես անվերապահ և վոգևորված պատասխանում եյի—«դարբին»:

Դրանից ավելի հերոսական արհեստ յես չեյի յե-րևակայում:

Ինձ դուր եր գալիս դարբինների դեմքը, մանա-վանդ նրանց աչքերը, յերբ կրակից կարմրում եյին, մրից դեմքերը սևանում, աչքերն ավելի եյին կարմ-րում, հենց օջախի կրակի նման վառվում:

Յես նայում եյի մերթ կրակին և մերթ աչքերին:

Յես նայում եյի մերթ կրակին և մերթ աչքերին, վորպես-

Գնում, կանգնում եյի կռանին շատ մոտ, վորպես-գի շիկացած յերկաթից թռչող աստղներն իմ շորերն էլ այրեն և յես էլ նմանվեմ դարբնի:

Յես համոզված եյի, վոր մարդ միայն դարբին հետո՝ պետք ե լինի, վոր աշխատանքը վերջացնելուց

Յես համոզված եյի, վոր մարդ միայն դարբին պետք ե լինի, վոր աշխատանքը վերջացնելուց հետո՝ ախորժակով ուտի:

Առհասարակ դարբիններն ուտում եյին չոր հաց—սոխով:

Գալիս եյի տուն, վերցնում եյի հաց ու սոխ, ու-տում, բայց չկար այն ախորժակը, դրա համար յես հա-մոզված եյի, վոր պետք ե անպայման դարբին լինել:

Փորձեցի տանը օջախ և փքոց շինել, չկարողացա:

***

Յերբ հիմա հիշում եմ մեր փողոցը՝ ամենից ավելի իմ աչքի առաջ պատկերանում են իմ մանկության ընկեր-ները—շները: Իմ ամբողջ մանկությունն անցել ե նրանց անձնվեր մտերմության հետ:

Շան վոհմակն իմ բանակս եր:

Մինչև հիմա էլ, յերբ մեկը մի շան քացով է տալիս, սիրտս մղկտում է, յես հիշում եմ իմ մանկության ընկերներին:

Նրանց մեջ մեկը չկար, վորի վրա իմ կնիքը չլիներ: Նախ և առաջ բոլորի պոչերը կտրել եյի, յերբ նրանք տակավին կախ եյին ընկնում իրենց մոր ծծերից: Կտրում եյի նրանց պոչերը, այդպես նրանք ավելի գողտրիկ և գրավիչ եյին դառնում իմ աչքին: Չեյի սիրում պոչերը, ուզում եյի, վոր նրանք անպոչ դառնան, նախքան եվոլյուցիայի օրենքի լրումը:

Նրանք սիրում եյին ինձ և այդ սերը նման չեր մարդկային սիրո:

Անվերապահ եր, անաչառ, անհիշաչար, անվարձ, առանց վորևե ակնկալության: Նրանք չեյին հիշում մի րոպե առաջ արած իմ մարդկային չարությունը:

Զարնում եյի, ցավից վնգստում եյին միայն մի ակնթարթ, ապա նորից գալիս, քսվում եյին, լիզում եյին իմ վոտները, այն վոտները, վոր խփել եյին նրանց:

Այդպես է իսկական սերը—շնային:

Յես անցնում եյի հռովմեական հինավուրց ճանապարհից՝ շներով շրջապատված: Նրանք հավաքվում եյին իմ շուրջը, մի քանիսն ինձանից առաջ (նրանց յես չեյի ընտրել, ընտրված եյին իրենցից), մի քանիսը քայլում եյին ինձ հավասար, իսկ ջախջախիչ մեծամասնությունը—իմ յետևից:

Յես գիտեյի նրանց բոլորի անունը (առանց ազգանունի, ինչպես մեծ մարդիկ—Նապոլեոն, Ալեքսանդր), մինչև անգամ գիտեյի նրանց ծննդական թվականները, ճանաչում եյի ամեն մեկի նրանց սերնդաբանությունը, հորը, պապին, պապուպապին, բայց իրենք, իբրև շներ, մոռանում եյին իրենց ծնողներին, յեղբայրներին, մոռանում եյին մանավանդ քույրերին, վորովհետև կռվում եյին իրար հետ, կծում եյին իրար, հոշոտում և հուսկ ապա սիրաբանում և սերնդագործում:

Ալոն մոռացավ իր քրոջը, նրանից լակոտներ ունեցավ, լակոտներն իրենց հերթին մոռացան իրար և շարունակեցին սերունդը:

Նրանք իմանում եյին թե յերբ եմ դուրս գալու դպրոցից, շարված են արդեն դռան առաջ, ճանապարհ են դցում ինձ մինչև տունը:

Ներս եմ մտնում, ցրվում են:

Դուրս եմ գալիս—շարվել են ուրախ աչքերով, բարեկամական ամեն տեսակ ժպիտներով:

Հիշում եմ նրանց և հասկանում եմ իսկական սերը:

*
* *

Մեր պարտեզի յերկար կաղամախիի վրա արագիլը կառուցել է իր բույնը, այնպես ուղիղ և յերկար, ինչպես մարմարյա մինարեները իսլամական մզկիթների բակերում:

*
* *

Մինչև այդ արագիլը չվերադառնար հարավից՝ մորս համար դեռ գարունը չեր յեկել, և վոչ մեկին թույլ

չեր տալիս, վոր ձմեռնային հագուստները փոխեն: Իսկ յերբ արագիլը գալիս եր և յեթե մինչև անգամ մայրս տեսած չլիներ և միայն մենք տեսած լինեյինք՝ վազում եյինք տուն, հանում վերարկուները, չպրտում և դուրս վազում: Մայրս վերադառնում եր տուն և սկսում հարցուփորձը:

— Ինչո՞ւ եք հաներ ձմրավա սակոները*):

— Լագլագը եկեր ե...

— Ի՞նչ կըսե...

Յեվ մայրս էլ բարձրանում եր կտուրը, վորպեսզի տեսնի արագիլը: Արագիլը կափկափում եր կաղամախիի բարձունքից և, չգիտեմ ինչու, մայրս խաչակընքում եր:

Արագիլի մեր պարտեզի ծառի վրա բույն շինելը համարում եր մայրս բաղդավորություն: Պարտեզի մյուս ծառերի վրա գտնվող վորևե ուրիշ թռչունի հետ մենք իրավունք ունեյինք խաղեր խաղալու, մինչև անգամ բույներն ավերելու, բայց չեյինք համարձակվի վորևե բան անել արագիլին: Ամենաչարը՝ կարելի յեր քար նետել— այնքան բարձր եր նրա գահը, վոր վոչ վոք չեր կարող հասնել: Մագլցել կաղամախիի վրա՝ անկարելի յեր, վախեցնել նրան՝ նույնպես ավելորդ եր, կարևո-

*) Սակո—վերարկու

րություն չեր տա, միայն քար կարող եյինք նետել, և այն էլ արգելված եր մորս կողմից:

Մի տարի չեր յեկել, մեր տանը մահ եր պատահել: Ի հարկե, զուգադիպել եր արագիլի բացակայությունը մահվան, բայց մայրս հավատում եր դրան, ինչպես հաստատված մի որենքի:

Յեվ պատահեց, վոր մի տարի ևս չերևաց արագիլը:

Մայրս գնալով տխրեց:

— Մահը տի գա,—ասում եր և խորը թախծում:

Տան բոլոր անդամներին նայում եր գորովանքով, մի գուցե ամեն մեկին նայելիս՝ մտածում եր, վոր նրան կարող ե գալ մահը:

Ուզում եյինք փարատել նրա կասկածը:

— Բոչ բանի մի՛ հավատար, մայրի՛կ:

— Տարին չի թամամած՝ մահը տի գա,—հայտարարում եր նա խորագույն հավատքով:

Յեվ տարին չվերջացած՝ մահը յեկավ և մահվան հետ միասին, ձեռք-ձեռքի տված, ճանապարհ ընկավ հայրս, մեկնեց և էլ չվերադարձավ:

Մայրս լաց եր լինում և ասում.

— Յես գիտեյի, լագլագը չեկավ...

* * *

Արևածագից մինչև արևմար մեր ընդարձակ ագարակում աշխատում եյին մշակները:

Ամառ և ձմեռ մեզ համար ժամանակն ու ժամացույցն ունեյին իրենց խստագույն որինաչափությունը, արևը յերբ ուզում եր ծագել՝ և յերբ ուզում եր մարել՝ մենք զարթնում, նախաճաշում եյինք վորոշ ժամին, աշխատանքի գնում, վերադառնում, ուտում և քնում վորոշ ժամին, բայց մշակները դատապարտված եյին արևի չար քմահաճույքին—նրանց հետ բոլոր պայմանները կապվում եյին արևի որենքի համաձայն—արևածագից մինչև արևմար:

Յեվ արևը չար եր նրանց համար, և արևն այրում եր նրանց մարմինը:

Արևածագից մինչև արևմար նրանց բահերը զրնգում եյին հողի մեջ, և յերբ դուրս եյին քաշում, փայլում եյին արևի տակ ծովի գույնով:

Կեսորին նստում եյին «ճաշի» ագարակի ամենաթևավոր ծառի տակ, ուտում եյին սոխ և հաց, յերբեմն մի խաշած գետնախնձոր և շատ հազվադեպորեն խաշած մի ձու, և յերբ չոր հացը համառում եր գլորվել կոկորդից ներքև՝ յերկարում եյին և՝ պառկելով կրծքի վրա, խմում եյին առվի սառը ջրից, և կախ ընկած ցնցոտու մի կտորով սրբում ջրի մեջ թաթախված բեխը:

Յերեկոյան, վերջալույսին, յերբ արդեն ծառերի ստվերներն այնքան եյին յերկարած լինում, վոր խառնըվում եյին արդեն գետնից բարձրացող մութի թևերի հետ՝ նրանք թողնում եյին բահերը և իրենց հացի տոպրակներն առած՝ քայլում եյին դեպի տուն:

Հոգնությունը նրանց դեմքի, ձեռքերի, բաց կրծքերի և բոբիկ վոտների վրա այնպես եր յերևում, կարծես հոգնությունը ներկ լիներ քսած նրանց մարմնի վրա:

Հոգնությո՜ւն...

Ամբողջ աշխարհը խնդությամբ վողջունում եր նոր ծագող արևը, բայց մշակներն ավելի խոր խնդությամբ, քան ամբողջ աշխարհը, վողջունում եյին վերջալույսը, վողջունում եյին նրանք մռայլաթև մութը արևային խնդությամբ, վորովհետև մութը բերում եր նրանց տառապանքի թեթևացում, հանգիստ, անսահմանորեն խո՜ր հանգիստ:

Յեվ յերբ յես տեսնում եյի նրանց բահերը պատն ի վեր տնկըրած՝ ինձ թվում եր, վոր բահերն ել հոգնել են և քնում են: Պատահում եր յերբեմն, վոր բահերից մեկը կամ յերկուսը թողնված եյին լինում հողի մեջ— հենց խրած և ել չքաշած—ինձ թվում եր, վոր այդ բահերը դեռևս շարունակում են աշխատանքը հոգնած և ուժասպառ:

Այնքան բարի մայրս անգամ չեր մտածում նրանց

մասին, այն կինը, վոր ամեն կիրակի աղքատներ եր բերում տուն և նրանց հետ ճաշի նստում, մի քանի ընտանիքների դրամական ոգնություն եր անում, լաց եր լինում, լաց եր լինում յերբ տեսնում եր քաղցածներ, բայց գտնում եր, վոր մշակները պետք ե աշխատանքը սկսեն արևածագին և վերջացնեն արևամարին:

Նրանց հոգնածությունը նշմարվում եր և նրանց կոնակներից—առանց բեռի, բայց կարծես ահավոր բեռան տակ կքած եյին, հոգնածությունը մանավանդ յերևում եր նրանց աչքերի մեջ և ձեռների վրա:

Շաբաթ յերեկոները նրանք գալիս եյին տուն, շարվում պատն ի վեր, վորպեսզի նրանց հաշիվները տեսնեյին, վճարեյին աշխատավարձը և ճամբու դնեյին:

Նրանք շնորհակալություն եյին հայտնում և գնում:

Ժ

Տակավին չի մթնել, հորիզոնը բռնել է բաց կարմիր հրդեհ, մինչև անգամ փողոցում բարձրացած փոշին վարդագույնին է տալիս: Գյուղ գնացողների շարանն արդեն սպառվել է, փողոցը հորանջում է, քունը տանում է, հոգնած է:

Մեր տնեցիները մեկիկ-մեկիկ կտուրն են բարձրանում, սպիտակ անկողինները բաց անում, վորպեսզի միջօրեյի շոգը փախչի մեջներից:

Խաղաղ է ամբողջ քաղաքը, դադարել է կովերի բառաչը, վորովհետև լակը տվել են, կթել և հանգիստ թողել նրանց, վոր վորոճան:

— Ցեկե՛ք, հասե՛ք, մեռցրի՛ն, իրար կուտեն, թե՛զ հասեք:

Աղիողորմ, աղեկեզ, անդիմադրելի մի ճիչ, վոր գնալով դառնում է զարհուրելի մի վողբ: Ձայնը ծանոթ է, մեր հարևանուհին է, դիմացի տնից:

Վողբը լսվում է տան ներքնահարկից, մութ նկուղից, տան այն մասից, վորտեղ ամբողջ ամառը վո՛չ վոք վոտ չի կոխի:

Բոլոր հարևանները վազում են: Առաջին հերթին հասնում է մեծ յեղբայրս, վորովհետև նա չի սպասում սանդուղներից իջնելու, կտուրի քիվից բռնում է ծառի ճյուղը, որորում է իրեն ոդում և ցատկում փողոց:

Ցես կանգնած եմ կտուրին, դողում եմ ամբողջ

մարմնով, վողբը շարունակվում է աղեխարշ դառնությամբ—«հասե՛ք, հասե՛ք, իրար կերա՛ն»:

Քիչ անց, մեծ յեղբայրս—հերքուլեսյան մի տղամարդ—դուրս է քաշ տալիս յերկու պատանիների, մեկի՝ թևից բռնած, մյուսի՝ կրծքի շորերից: Ցերկուսի բեթանից էլ արյուն է հոսում, մազերնին գզգզված, շորերը պատառոտած, աչքերը նման են այն շներին, վորոնց լակոտների վրա ուրիշ անծանոթ շուն է հարձակվում:

Նրանք դեռևս ուզում եյին իրար վրա նետվել և պատառոտել իրար, բայց յեղբորս հզոր բազուկները նրանց պահում են իրարից անվտանգ հեռավորության վրա:
Հազիվ մենք կարողացանք ճանաչել վողբացող մոր
յերկու պատանի զավակներին, Վահրամին ու Հրաչին:
Վահրամն ու Հրաչը յերկու յեղբայրներ եյին, Վահրամը 19 տարեկան, Հրաչը՝ 17: Հրաչի ծնված որը ծնվել եր նաև Վերոնիկան, հարևանի աղջիկը: Հրաչի ու Վերոնիկայի ծնողները նշանել եյին նրանց օրորոցից:
Մեծացել եյին և նախքան Հրաչի՝ կնոջ գոյությունենալն զգալը՝ Վահրամը սիրահարվել եր Վերոնիկային:

Վահրամն ու Վերոնիկան դավաճանել եյին օրորոցի օրինականության դեմ:

Հրաչն իմացել եր այդ սերը, բայց վոչինչ չեր զգացել, յերբ դեռ վեգի հետ եր խաղում և ինձ նման չներին եր հրամայում, բայց նա մեծացավ, հասակ առավ, սկսեց զգալ եգի կրակը:

Նրա փոքրիկ սրտում թպրտաց կինը: Վերոնիկան օրորոցից իրեն եր պատկանել, ծնողները և զուգադիպությունն այդպես եյին կամեցել:

Թե ծնողները և թե ազգականները մոռացել եյին օրորոցի հինավուրց պատմությունը, բայց Հրաչն ուզեց ձեռք բերել օրորոցի իրավունքը:

Վահրամը Հրաչի աչքին նախ մի փոքրիկ քար թվաց, այդ քարը հետզհետե մեծացավ ինչպես սև, մթին մի ապառաժ:

Հրաչը սիրում էր յեղբորը, յեղբայրը նրա որորոցն էր որորել, տարել էր պարտեզները ման էր ածել, պատանեկության իր պատասխանատվությամբ, նրան այգիներ էր տարել, դասն էր սովորեցրել, փողոցի թշնամի տղաներից պաշտպանել, ինչ վոր անից թոցրել էր, նրան էլ էր տվել, նրա համար թռուցիկ էր շինել, լողալ էր սովորեցրել, բայց Վերոնիկայի մազի մի թելը մոռացրեց այդ բոլորը և հանկարծ մի որ Հրաչը դադարեց Վահրամի հետ խոսելուց:

Վահրամը, սկզբում, վոչինչ չհասկանալով, մինչև անգամ կարևորություն չընծայեց, բայց հետզհետե նշմարեց, վոր Հրաչը կորցնում է իր յեղբայրական աչքերը, նրա ամեն մի հանդիպումը դառնում է մութի մեջ թշնամական հանդիպում:

— Հրաչի՛կ, աղվո՛րս, ի՞նչ կուզես, դառնո՛ւկս,— մի որ հարցրեց Վահրամը:

Հրաչը հառեց նրա բիբերի խորքը, ուզում էր աչքերի խորքից դուրս քաշել յեղբոր սիրտը, Վահրամը խորը զգաց խանդը Հրաչի հոգում, կախեց գլուխը և հեռացավ:

Այդ որից յերկու յեղբայրները խուսափում էին իրար հանդիպելուց, բայց չխուսափեցին խարույկը հրահրելուց:

Խարույկը վառվում էր, վառվում էր ինչպես հարավի արեգակը:

Վերոնիկայի այտերը կարմրում էին և պատրաստ էին վորևէ փոքրիկ ազդումից կաթիլ-կաթիլ արյուն կաթեցնել, հարստանում էին նրա մազերը, ինչպես քամուց քշված մի փոքրիկ ջրվեժ, աչքերը նմանում էին անապատի հեռավորության մեջ թաղված մի հատիկ գյուղի յերկու ճրագներին, կուրծքը բարձրանում էր, ծիծաղում էր բարձր, թեթև և անհարկի՛:

— Այո, այո, յես կըսեմ, յես կուզամ, յես կերթամ, ալ չեմ գար յեթե այդպես ուզես,— և ծիծաղում էր, յերբեմն լաց լինում խաբելով դիմացինին՝ լա՞ց թե

ծիծաղ, բայց միշտ պատրաստակամ, միշտ շարժուն, միշտ կենդանի աչքերով, ինչպես բռնված փոքրիկ թռչունն անգութ ձեռքերում:

Այդ որը Վահրամն ու Վերոնիկան գաղտագողի իջան իրենց տան ներքնահարկը: Նստեցին կոտրած և դարսված փայտի դեզերի վրա, գրկեցին իրար, մոտեցան նրանց շրթունքները և վառվեցին:

Նրանց թևերը գրկեցին իրար, ինչպես յերկու հակառակ կողմերից յեկող ջրի հոսանքներ:

Ներքնահարկի դուռը ճռճռաց, կրնկի վրա բացվեց և ներս ընկավ հանդիստ քայլերով և դահանակե աչքերով մի պատանի, կանգ առավ յերկու յերեք քայլ անելուց հետո, փայլեցին նրա աչքերը, ինչպես աչքերը գազանացած կատվի:

Վահրամը ճանաչեց ահավոր թշնամուն իր փոքրիկ յեղբոր մեջ, նրան, վորի որորոցն էր որորել և ուսերի վրա ման էր ածել:

Նրանց աչքերը հանդիպեցին իրար: Յերկար լռություն: Ատամները սեղմվեցին: Անծանոթ մի սարսափ անցավ յուրաքանչյուրից մյուսին և հանկարծ հարձակվեցին իրար վրա:

Մի քանի անգամ նրանք պառկեցին գետին, ցատկեցին վեր և յերկուսը միասին հարձակվեցին իրենց սիրած աղջկա վրա: Յուրաքանչյուրն աշխատում էր գրկել նրան, վորպեսզի մյուսը չդիպչի:

— Դուն պղծեր ես իմ որորոցը,— մրմռաց Հրաչը:

— Ո՞վ ես դուն, չեմ ճանչնար, Վերոնն իմս է,— բղավեց Վահրամը:

— Տեսնենք թե վորո՞ւնը կըլլի,— պատասխանեց Հրաչը:

Յեվ նրանք քաշքշեցին աղջկան, բռնեցին նրա կոկորդից, քաշքշեցին անգութ սիրով. զգացին, վոր Վերոնիկան թակարդն ընկած թռչունի նման թպրտաց, խեղդվելու ձայներ հանեց և թուլացավ, շարունակեցին կատաղած պատանիները գրավումի պայքարը, մինչև

զգացին, վոր իրենց սիրածը չկա և այլևս չարժե կռվել դիակի շուրջը, այն ժամանակ նրանք սկսեցին իրար սպանելու ահավոր փորձը:

Վահրամը մատը կոխեց Հրաչի բերանը և սկսեց քաշել իր բոլոր ուժով, վորպեսզի պատռի և այլանդակի նրան, իսկ Հրաչը ցավից ցնցվեց և այնպես սեղմեց ատամները, վոր Վահրամի մատների վոսկորները ճռճռացին և Վահրամը ճչաց, ճչաց հոգեվարքի մեջ յեղող անասունի նման:

Այդ ճչոցից էր, վոր պատանիների մայրը վազեց տան ներքնահարկը, գտավ Վերոնիկային խողխողված, հոշոտված, իսկ յերկու պատանիներին անտառային գազանների զարհուրելի պայքարում:

— Հասե՛ք, հասե՛ք, թե՛զ հասեք, իրար կոտե՛ն, մեռցուցի՛ն, մեռցուցի՛ն...

Վոճրի վայրն առաջինը հասավ մեծ յեղբայրս:

Զարհուրելի լուրը տարածվեց մի ակնթարթում ամբողջ քաղաքում:

Հանկարծ փողոցի վերից լսվեց մի ուրիշ մոր սրտակեղեք շիվանը, տարածուն, համայնական շիվան, վոր վորքան մոտենում էր, այնքան խորանում, բզքտում, խոշտանգում լսողների ականջը:

— Յավրո՛ւս, յավրո՛ւս, կանաչ-արև իմ յավրո՛ւս, —աղաղակում էր, սրտահոշոտում Վերոնիկայի մայրը, մայրն այն աղջկա, վոր չկար, վորի թշերը քիչ առաջ այնքան կարմիր եյին, վոր ամենափոքրիկ սեղմումից կարող եյին կաթիլ-կաթիլ արյուն հոսել:

Վերոնիկայի դիակը վեր բերողները դիմավորեցին նրա մորը, մայրը վազեց, գրկեց նրա տժգունած, հանգիստ, խաղաղ, լուռ գլուխը և սկսեց սիրող մոր անգուսպ վողբը:

Վահրամն ու Հրաչը նայում եյին իրար դեղին աչքերով, սղմում եյին իրենց ատամները և միայն շրջապատող ադամարդկանց ֆիզիկական ուժը կանգնեցրեց նրանց իրար հոշոտելուց:

Տարան Վերոնիկայի դիակը տուն, նա վերադարձավ տուն անփայլ աչքերով, հետզհետե մոր լացի աղաղակը մեղմացավ և ապա բոլորովին կորչեց:

Վահրամին ու Հրաչին տարան բանտ, շղթայակապ:

Մարդիկ ցրվեցին, բարձրացան կտուրները, խոսեցին անվերջ վոճրի մասին, մինչև քունը դարձավ անդիմադրելի:

Ժ

Յես քաղաքում համարվում եյի լավ թռուցիկ շինողներից մեկը: Շինում եյի մեծ տրամագծով, յերկար պոչով, գույնզգույն և փռփռան: Ամառ յերեկոները, յերբ մեր կտուրների վրայով և փողոցների միջով անցնում եր զարմանալի քնքույշ քամին, մենք բաց եյինք թողնում թռուցիկները ամենաբարձր կտուրներից, յերբ դեռ արևը, վիթխարի ծիրանի նման, լողում եր դիմացի սարերի կապույտ անկողնում: Մանիշակագույն մութը բարձրանում եր դաշտից, մանիշակագույն մե՜ծ-մե՜ծ քողեր կախվում եյին և յերկնքից, թափվում եյին աստղեր, աստղե՜ր, ավելի առատ, քան վորևե յերկնքում, այն ժամանակ արդեն մեր թռուցիկները սավառնում եյին կապույտ յեթերում գույնզգույն և մեծ լապտերներով: Յերբ կապույտը խտանում եր, թռուցիկներն այլևս չեյին յերևում, միայն լապտերներն եյին, վոր լողում եյին յերկնքում, յերփներանգ և վառ, կարծես տեղահանված և որորվող լուսիններ լինեյին, վոր թափառում եյին և չեյին կարող գտնել իրենց ծիրը: Ամեն յերեկո քաղաքի վրա լողում եյին այսպիսի տասնյակ լուսիններ: Պատահում եր, վոր հանկարծ նրանցից մեկն ու մեկը այրվում եր—ահա բոցի մի խոշոր լեզու, միայն մի պահ, և չկա:

Մի որ յես բարձրացրել եյի թռուցիկը և թելի ծայրը կապել կտուրի լոգին և, անհո՛գ ու գոռո՛զ, ընկողմանել եյի կտուրի մի անկյունը և դիտում եյի թռուցիկիս սավառնումը: Նա սավառնում եր ավելի բարձր, քան բոլոր կտուրներից բարձրացող թռուցիկները: Հան-

կարծ նշմարեցի, վոր լոգը գլորվում է: Մինչև հասա, լոգն ընկավ յերեք հարկանի կտուրից ներքև, ուղիղ փողոցի մայթի վրա: Սարսափահար յես կռացա և նայեցի կտուրից ներքև՝ ստուգելու համար թե՝ արդյոք վորևէ մեկի վրա ընկե՞լ է: Մայթը դատարկ եր և վո՛չ վոքին չեր վնասել, բայց իմ սարսափն ավելի աճեց այն հեռապատկերից, վոր կարող եր ընկնել մի մարդու վրա, սարսափն ավելի և ավելի աճեց, յերբ պատկերացրի, վոր կարող եր ընկնել հենց հորս վրա, վոր առհասարակ այդ ժամին եր վերադառնում տուն: Աչքերս մթնեցին, հազիվ կարողացա ինձ յետ քաշել քիվից և վազեցի ներքև, կտրեցի թռուցիկի թելը, սկսեցի արագ կերպով կծկել: Թռուցիկը յեկավ, փաթաթվեց մեր տան դիմացի պարտեզի բարձր թթենուն: Քաշեցի: Ավելի փաթաթվեց: Մտածում եյի բարձրանալ ծառը և ազատել թռուցիկը, բայց, հանկարծ, հորս եշի զռոցը պայթեց փողոցում: Քաշեցի, պոկեցի թելը և բարձրացա հորս սենյակը և լուսամուտից սկսեցի դիտել փողոցը: Ուզում եյի խմանալ թե հայրս պիտի նշմարի՞ լոգը: Նշմարեց և հարցրեց ծառային:

— Լոգն ինչո՞ւ ընկեր է փողոցը:

Ծառան անմիջապես չկարողացավ պատասխանել, եշի սանձից բռնած՝ մոտեցավ լոգին և տեսավ թռուցիկի թելի մնացորդը լոգի վրա: Ծառան անմիջապես գլխի ընկավ և բացատրեց հորս:

— Կանչե՛ք քոփս, տեսնամ.—պատվիրեց հայրս ծառային և վեր բարձրացավ:

Յես անմիջապես վորոշեցի անելիքս—ցատկեցի լուսամուտից ներքև և անմիջապես բարձրացա այն խոշոր պահարանը, վորտեղ դարսվում եյին անկողինները: Պահարանը ծածկվում եր վարագույրով: Բարձրացա անկողինների վրա և պառկեցի, վորովհետև գլուխս դպչում եր առաստաղին:

Ծառան ամեն տեղ նայել եր և չեր գտել: Յեկավ ներս և ասաց.

— Հաջի եֆենդի, չոջուխը չերևար:

Մայրս ներս մտավ:

Հայրս նրան հարցրեց.

— Տեներն է, թուլցիկ կը թոցնե,—պատասխանեց մայրս:

Պարզ եր, վոր մայրս տեղյակ չեր թե ինչ եր պատահել: Հայրս բացատրեց նրան: Մայրս յերկու ձեռքերով բռնեց քունքերը և բացականչեց.

— Վո՜ւյ, աչքս քոռանար...

Պահարանում յես կծկվեցի վախից:

Քիչ անց մայրս սկսեց մտահոգվել իմ ճակատագրով:

— Շատ աղե՜կ, եղածը եղեր է, քա չոջուխն ո՞ւր է:

Յեկան յեղբայրներս և քույրերս: Տան մեջ սկսվեց չտեսնված վորոնում: Տան բոլոր ծակուծուկերը քրքրեցին բացի հորս սենյակից: Ո՞վ կարող եր մտքովն անցկացնել, վոր հենց այդ սենյակում եյի թաքնված:

Յեղբայրներիս ամեն մեկին ուղարկեցին հարևանների և ազգականների տները: Վերադարձան թե՝

— Ենտեղ չի գացեր:

— Բախչայի ծառներուն վրա նայեցե՛ք,—կարգադրեց հայրս:

Յեղբայրներս ընկան պարտեզը: Վերադարձան թե՝

— Չկա:

— Մութ է, չերևար,—կասկածեց մայրս:

— Լուսնի լուս է,—պատասխանեց մեծ յեղբայրս:

Հայրս լցրեց ողու բաժակը (յես դիտում եյի վարագույրի ճեղքից), բռնեց, բարձրացրեց վեր, վոր ձնկեր, ձեռքը մնաց օդում: Նա յերևում եր չափազանց մտահոգ:

— Չոջուխն ի՞նչ յեղավ,—շշնջաց նա:

Նրա ձայնը դողդոջեց և թաղվեց խորը թախծի մեջ:

Յեթե այդ րոպեյին յես ցատկեյի պահարանից դուրս, հայրս ինձ կգրկեր և կսղմեր իր կրծքին, բայց չգիտեմ ինչու, չարի:

— Ակո՛ր, տղա՛ս, ձին նստե՛, գնա քաղաք, եկո՛,

մութլախա քեռանց տուն է գացեր,—ասաց մայրս մեծ յեղբորս:

Յեվ յետևից պատվիրեց.

— Ռիվոլվերը հետդ ա՛ռ, յեթե չոջուխը հոն է, հետդ մի՛ բերեր, կը վախնա, թո՛ղ հոն կենա, քանի մ'օրեն թո՛ղ տղաքը բերեն:

Յես լսեցի, մի տասն և հինգ րոպե հետո, ձիու առողջ դոփյունը փողոցի սալահատակների վրա:

Սենյակում տիրեց կատարյալ լռություն: Այդ լռությունն ինձ ավելի անշարժ դարձրեց: Մնալով անշարժ վրաս քաղցր քուն յեկավ: Յել չիմացա թե ինչ պատահեց, հանկարծ թռմփացի սենյակի հատակին, գորգերի վրա: Զարթեցի: Հիշեցի ամեն բան: Ուզում եյի փախչել, մեծ քույրս բռնեց: Մայրս վազեց, գրկեց ինձ և, ժպիտով և արցունքով խառն, համբուրեց ինձ: Յես գլուխս սեղմել եյի մորս կրծքին, վոչինչ չեյի տեսնում, հանկարծ զգացի հորս բեղերը և նրա ծխախոտի հոտը: Հայրս համբուրում եր ինձ և ասում:—«Անառակ քեղի, անառակ քեղի»:

Քիչ անց յես դարձյալ լսեցի ձիու դոփյունը փողոցի սալահատակի վրա:

Յեղբայրս եր:

Նա հայտնվեց սենյակի շեմքի վրա և գոռաց.

— Չոջուխը հոն չե:

Բոլորն սկսան ծիծաղել: Յես հորս թևի տակից դիտում եյի մեծ յեղբորս, վորի աչքերի զայրույթը հետզհետե փոխվեց խորը յեղբայրական ժպտի: Վազեցի նրա մոտ և փաթաթվեցի մեջքին: Նա ինձ գրկեց, բարձրացրեց վեր: Նա այնքա՜ն բարձրահասակ եր և հզոր:

Այնուամենայնիվ առավոտյան հայրս արգելեց ինձ թուլցիկ թոցնելը:

Անցնում եր վոսկյա ամառը, անցնում եր ունայն ինձ համար, սիրտս դատարկվում եր: Ամեն յերեկո բարձրանում եյի կտուրը, անձկությամբ դիտում թափառող «լուսինները»: Առաջին օրերն այնքան չեյի տխրում, բայց քանի օրերն անցնում եյին, քանի հա-

չում էր ամառվա վոսկին, քանի քամին շոյում էր իմ ճակատը և անց կենում, խորը տխրություն էր իջնում իմ հոգուս վրա: Մի յերեկո, յերբ նստած եյի կտուրին և ուրիշների սավառնող թռուցիկներն եյի դիտում, յերեկոյան այն պահին, յերբ յերկնքից վազում են ծիրանագույն առվակներ, վազում, թափվում են մի վիթխարի և բոսորավառ ծովում, մայրս բարձրացավ կտուրը, վորպեսզի ստուգի արևի տակ յեփվող քաղցրավենիները, տեսավ ինձ և զգաց իմ անսահման թախիծը, վոր սև ամպի նման կանգնած էր այդ փառավոր յերեկոյի մեջ: Մոտեցավ մայրս, գրկեց գլուխս և հարցրեց:

— Ի՞նչ ունիս, յավրո՛ւս:

Յես աչքս հառեցի յերկնքին և թափառող «լուսիններին»:

Յերկար չկարողացա պահել իմ հայացքը: Աչքերս պղտորվեցին արցունքներից:

— Յես հայրիկիդ կըսեմ, թող հրաման տա, վոր թռցնես, ամա թելը լողին չպիտի կապես,—ասաց մայրս:

— Չեմ կապեր.—հեկեկացի:

Առավոտյան սկսեցի կառուցել նոր թռուցիկ ավելի մեծ, քան յերբևիցե կառուցել եյի:

* * *

Մեր յերիտասարդ ուսուցիչներից մեկը, վորի հետ մենք՝ մանուկներս՝ գրեթե ընկերներ եյինք, մի որ հայտարարեց.

— Տղա՛ք, ձեզի տանեմ մեր գյուղը:

Մենք լսել եյինք, վոր նրանց գյուղը Մաստառի ստորոտումն է, դարավոր ծառեր կան այնտեղ, ծառեր, վորոնց բներում մի վողջ գյուղական ընտանիք կարող էր տեղավորվել և ապրել: Լսել եյինք նաև, վոր նրանց գյուղի յեկեղեցու տակից ջուր է գալիս այնքան առատ, վոր կարող էր յերկու սայլ, իր յեզներով,

քշել տանել: Նրանց գյուղի առաջով անցնում էր Արածանին, կապույտ և վետվետող ժապավենի նման:

Հետիոտն ճանապարհ ընկանք յերեկոյան, ցերեկվան արևից խուսափելու համար: Գնում եյինք կտրուկ ճանապարհներով, յերբեմն քայլելով արտերի վրայով: Մեր վոտների տակ վոսկյա արտերը, իսկ վերևում՝ կապույտ գմբեթը՝ աստղերով: Կատակում ենք, հռհռում, կռանում ենք, ջուր խմում վազող առուներից, վճիտ և յերգեցիկ առուներ, վորոնց յեզերքների խոտը թարմադեղ կանաչ է, ինչպես ճիշը մանուշակագույն գիշերում:

Մտանք ցորենի անսահման մի դաշտ:

Յերկինքը գնալով ցածանում էր, աստղերը թափվում են մեր աչքերի մեջ: Ջինջ լռությունը խանգարում եյինք միայն մենք և ընկնող ասուպները:

— Կուզեք մնանք էստեղ, մինչև լուսաստղը յերևա,—հայտարարեց ուսուցիչը:

Բոլորս էլ կանգ առանք:

Լռությունն ավելի լռեց, յերկինքն ավելի ցած իջավ:

Յերկարեցինք հասկերի վրա:

Ոդը ջինջ է, մաքուր, ինչպես առվակների ջրերը:

Վո՛չ մի շշուկ: Քնող ընկերների շնչառությունն է միայն լսվում,—կարծես վոսկյա հասկերն են շշնջում:

Ուզում եմ վոր ամեն ինչ կանգ առնի, ինչպես վոր կա—յերկինքն աստղերով, հողը հասկերով, լռությունն իր ջինջ կապույտով:

Մի փոքրիկ ամպ, սավանի չափ, շղարշային սպիտակ, չգիտեմ վորտեղից յերևաց և սկսեց որորվել մանիշակագույն մշուշում: Որորվեց, տարածվեց, նոսրացավ և լուծվեց, ինչպես մի յերազ: Աչքերս փակվում են, բայց յես սպասում եմ լուսաստղին:

Հանկարծ լսեցի ընկերներիս ձայնը: Բաց արի աչքերս—արևը լողում էր հասկերի վրա:

Արևը զարթեցրեց դաշտում նոր բուրումներ, վորոնք

թաղնվել եյին գիշերվա ծոցում: Զարթեցին և գույնե-րը: Զարթեցին բյուրավոր թռչունները:
Ամեն ինչ զարթեց արևի հետ:

*
* *

Ամեն յերեկո մեր տան կից Ալեք աղան դուրս եր գա-լիս, ձեռքերը դնում գրպանը և անշարժ նայում անց-նող-դարձողին:

Շատերը նրան բարևում եյին, նա հազիվ աչքերից մեկը խուփ եր անում՝ իբրև պատասխան:

Ալեք աղան 45 տարեկան կար: Ամուրի յեր, բայց նրա ամուսնանալու մասին ամբողջ մեր թաղը խոսում եր:

Պատմում եյին, վոր քսան տարուց ի վեր ծնողներն արդեն մեռել եյին, ճգնել եյին ամուսնացնել նրան, բայց վո՛չ վոք չեր ցանկացել աղջիկ տալ:

Ալեք աղան վո՛չ խմող եր, վո՛չ բարկացող և վո՛չ էլ չքավոր: Նրա բնավորությունը մեղմ եր: Այդ բնա-վորությունը բաղդատում եյին իրենց կովի հետ:

Հակառակ այդ մեղմ, կովային բնավորության, վո-րին սիրահար եյին աղջիկ ունեցող մայրերը, Ալեք աղա-յի դեմքը դաժան եր, գիշերը յերեխաները նրանից սար-սափում եյին, մինչև անգամ՝ շատ մոտիկ մարդիկ վա-խենում եյին նրա տեսքից: Ցեվ այդ բոլորը նրա միրու-քի, սև, յերկար միրուքի պատճառով: Այդ միրուքը նրան դարձնում եր ահեղ: Այդ միրուքի համար էլ Ալեք աղան չկարողացավ գտնել մի աղջիկ այս աշխարհում հոգու և մարմնի մխիթարության համար:

Ալեք աղայի չամուսնանալն իր համար վողբերգու-թյուն չեր, վորովհետև, ըստ յերևույթին, նա արդեն հասել եր մխիթարիչ փիլիսոփայության, բայց վոչ մեկ փիլիսոփայություն չեր կարող փրկել նրա քրոջը՝ Իս-կուհուն, վոր Ալեք աղայից հինգ տարով փոքր եր:

Մինչև մեծ յեղբայրը չամուսնանար, փոքր քույրն իրավունք չուներ ամուսնանալու: Այդպես եր այդ աշ-խարհի օրենքը:

— Ի՞նչպես քույրը մարդու ծոց մտնա, երբոր աղբա-րը կնկա ծոց չի մտեր,—պատճառաբանում եյին այդ աշխարհի մարդիկ:

Մեծ յեղբոր գործած հանցանքը միայն կարող եր արդարացնել փոքր քրոջ գործելիք հանցանքը:

Ցերբ Իսկուհին յերիտասարդ եր և դեռևս արուն չեր կրծում նրա սիրտը՝ վոչ մի բողոք չբարձրացրեց, մինչև հասակը առավ:

Քառասուն տարեկանին այլևս վոչ մի փիլիսոփա-յություն չփրկեց Իսկուհուն, հակառակ նրան, վոր թե Ալեք աղան և թե մոտիկ ազգականները համաձայնե-ցին, վոր առանց մեծ յեղբոր ամուսնանալուն՝ փոքր քույրը կարող եր ամուսնանալ:

Էլ ո՛վ դրոշ կտար Իսկուհուն:

Իսկուհին մնաց տանը:

Նրա մեջ աճեց մի անլուր կատաղություն, պառավ կույսի կատաղություն:

Աղմուկ, ճչոց, ամանների կոտրատում, շրա՛խկ, շրո՛ւխկ:

Այդ աղմուկի մեջ յերբեմն լսում եյինք Ալեք աղայի մեղմագին ձայնը—«յա՛վաշ, յավա՛շ, ամոթ է»:

Բայց Իսկուհու համար այլևս վո՛չ մի ամոթ: Ծնվել եր, ապրել, մեծացել և վո՛չ վոք նրան չեր գրկել և կրծքին չեր սեղմել, էլ ի՞նչ ամոթ:

Ծրա՛խկ...Իսկուհին ճաշի ամանը, ճաշով միա-սին, տվեր եր Ալեք աղայի գլխին, միրուքը վողողել եր յուղաջրով:

Ամայի և մեծ տան մեջ մնացել եյին յերկու ամուրի և խոշտանգում եյին իրար:

Թեև Ալեք աղան մեղմ եր, բայց անտանելի եյին նրա ամուրիական սովորույթները, վորոնք կարծր եյին, համառ:

Ցերբեմն Իսկուհին կատաղում եր կովի հանդեպ, յերբ նա դարունքին սկսում եր բառաչել և Ալեք աղան

պատրաստվում էր տանել նրան գյուղ, վորպեսզի բառաչը դադարեցնել տա: Զբավականանալով կովին քացի տալով և անիծելով՝ բաց էր անում պահարանը, դուրս քաշում մի քանի հին, թանկագին ամաններ, նետում, կոտրում:

Ամանները կոտրատում էր, վոր հանգստանա:

Ալեք աղան յերբ տեսնում էր այդ, մեղմագին ասում էր:

— Աղեկ ըրիր, հանգստացար:

Հաջորդ օրը Ալեք աղան կովը գյուղ էր տանում, հանգստացնել էր տալիս և յետ բերում:

* * *

Ալեք աղան մեր փողոցի միակ հասակավոր ամուրին չէր: Նրա տնից մի քանի դուռ վերև ապրում էր Հաջի Սողոմոնը:

Ամեն անգամ, վոր Ալեք աղայի մասին խոսվում էր՝ հաջի Սողոմոնը միայն մի բան էր ասում.

— Ալեքն ըլ ընձի պես էշ է:

Հաջի Սողոմոնը քառասունն անց, բավական սպիտակած գլխով, աչքերը շաշ և խելքից էլ խեղճ մի մարդ էր, վոր էշի փալան նորոգելով էր ապրում:

Նրա ուշ ամուսնանալու պատճառն իր ընտանեկան դրությունն էր:

Նրա ամուսնության հարցը՝ բավական հասունացած էր, յերբ հայրը մեռավ: Մի քանի տարի անցավ՝ մայրը մեռավ, մորը մեռնելուց մի յերկու տարի հետո՝ հորաքույրը նրան հազիվ համոզեց ամուսնանալ՝ բանտարկեցին: Բանտից դուրս յեկավ՝ իրան հոռետեսության տվեց:

Այսպես անցան տարիներ, գլուխը սպիտակեց, մի քիչ սկսեց հազալ: Ինքն էլ, բոլորն էլ համոզվեցին, վոր ամուսնանալն այլևս չպետք է ուշացնել և հաջի Սողոմոնն ամուսնացա՛վ:

Սովորություն կար այդ աշխարհում, վոր յերբ հարսնեվորները գնում եյին տուն և փեսան քաշվում էր իր հարսի հետ առանձին սենյակ՝ թաղի բոլոր 10-ից 15, մինչև 16 տարեկան տղաները հավաքվում եյին առագաստի սենյակի լուսամուտի տակ և սկսում եյին դաժան, անգութ մի կատակ:

Յերեխաներից յուրաքանչյուրն իր հետ բերում էր մի վորևե առարկա, վորով կարողանար ամենաանախորժ աղմուկը ստեղծել: Մեկը՝ դատարկ տակառ, մյուսը՝ մի թիթեղե նավթի սնտուկ, մի ուրիշը՝ բոժոժներ, հաջորդը՝ մի զուռնա, թմբուկ, շատերը՝ միայն յերկու տափակ տախտակներ, շատերն էլ՝ յերկաթի կտորներ: Վոմանք միայն պոռում եյին, ցատկում, աղմկում, վոմանք միայն հրահրում կատակը: Այդ բոլորի հետ հավաքվում եյին նաև թաղի շները, վորոնք, միևնույնն էր, մինչև առավոտ պետք է հաջեյին կամ վոռնային, ավելի լավ էր խառնվեյին իրենց ցերեկվա ընկերներին:

Յերբ հաջի Սողոմոնի հարսնեվորները գիշերվա ժամը 12-ին հեռացան պարտիզից (ամառ էր և հարսանիքը պարտիզումն էր), վառվեց հաջի Սողոմոնի սենյակի ճրագը և մեկը փակեց լուսամուտի վարագույրը:

Յերեխաները հավաքվեցին հաջի Սողոմոնի լուսամուտի առաջ և սկսեցին աղմկել:

Անասելի աղմուկ, անողորմ, վայրենի, բարբարոս մի աղմուկ:

Ամբողջ թաղը զարթնեց:

Կտուրների վրայի անկողիններից մարդիկ բարձրացան սպիտակ շորերով, յեկան շարվեցին քիվերի վրա:

Յերբ աղմուկը մի քիչ դադարում էր, վորպեսզի ավելի անախորժ կերպով վերսկսի՝ կտուրների վրա գտնված մարդիկ հրհռում եյին բարձրաձայն և ավելի քաջալերում յերեխաներին:

— Հաջի՛ Սո՛ղո՛մո՛ն... աղաղակում էր մեկը, մյուսները միանում եյին—Հաջի՛ Սո՛ղո՛մո՛ն... և այս աղաղակին հաջորդում էր տակառի, թիթեղի, տախ-

տակների, յերկաթի, զուռնայի և թմբուկի անազորույն յերաժշտությունը:

— Հաջի Սողոմոնն ամուսնացեր է՜՜՜...

Խումբը կրկնում էր—հաջի Սողոմոնն ամուսնացեր՜՜՜ է՜՜՜...—և ելի անկարեկիր աղմուկ:

Բոլոր փեսաներն էլ այդ ցույցը բնական և սովորական էյին համարել, լուռ լսել, և շարունակել գիշերում ապրել առավոտը մի նոր կյանքի, բայց հաջի Սողոմոնը չհամբերեց, բաց արեց լուսամուտը, սպիտակ շապիկով մինչև մեջքը դուրս ընկավ և սկսեց հայհոյել:

— Ձե՞ք ամչնար, ի՞նչ է, գացեք հորերնուդ մոտ, մորերնուդ քով պառկեր է, չա՛ն վորդիներ...

Հաջի Սողոմոնն այնքան բարձր էր պոռում, վոր կոկորդը քորվեց, սկսեց հազալ և, չկարողանալով բոլորն ասել, փակեց լուսամուտը և քաշվեց ներս:

Տանիքների վրա բարձրացավ ընդհանուր և սրտագին մի հռհռոց:

— Վա՛յ էշի՛ գլուխ, չկրցավ սապր ընել, ծո ի՞նչ էս դուրս եկեր, մո՛ւտ կնկանդ ծոցը,—ասում էյին շատերը:

Իսկ կատակողների խումբը վերսկսեց իր աղմուկն այնպիսի վերանորոգված վայրենությամբ, վոր հաջի Սողոմոնին հասցրեց ջղայնության չտեսնված գագաթնակետին:

Հաջի Սողոմոնն ելի բացեց լուսամուտը և խորագույն լրջությամբ հայտարարեց.

— Հեռացե՛ք կըսիմ:

— Հաջի Սողոմոնն ամուսնացեր է՜՜՜,—պոռաց մեկը, և մյուսները կրկնեցին—հաջի Սողոմոնն ամուսնացեր է՜՜՜:

— Հաջի Սողոմոնն ամուսնացեր է, հա՛, դուք հաջի Սողոմոնի քեֆին քեհյան ե՛ք, բողի՛ լակոտներ, ձեր մորը հորն ի՞նչ ըսեմ, անկի՛րթներ,—պատասխանեց հաջի Սողոմոնը:

Կատակողները նշմարեցին, վոր մեկը մթում յետևից նրան քաշում է ներս և լուռ աղաչում.

— Սողոմոն աղա, ձեն մի հաներ, ուսանմիշ*) կըլլին, կհերտկին, կերթան:

— Աղջի՛, թո՛ղ,—աղաղակեց հաջի Սողոմոնը և յետ քաշվեց:

Տանիքների հռհռոցի հետ բարձրացավ ելի մի սարսափելի աղմուկ::

— Հե՛յ, հաջի Սողոմոն, կրնաս նը, քնացիր:

— Հաջի Սողոմոնը կնիկ է առե՛ր...

— Հաջի Սողոմոնը փալան տի չինե կնկանը համար:

— Վա՛յ, հաջի, Սողոմոն, կնիկ կառնես, հա՞:

Թմբուկ, տախտակ, թիթեղ, յերկաթ, զուռնա, աղաղակ, ճչոց, հռհռոց, ամեն ինչ խառնվեց իրար. շարունակվեց կատաղի այդ կատակը:

Յերեխաներից մեկը կլոր, կարճահասակ, խուճուճ մազերով, հաստ ձայնով, փայլուն և չարաճճի աչքերով կանգնեց մեջտեղը, լուսընկայի լույսի տակ նշմարելի յեր նրա հաստ շրթունքների վրայի չար ծիծաղը, և հայտարարեց.

— Տղաքներ, գիտես քի հաջի Սողոմոնը քնացավ, բարձրանանք փենճերեն:

Մի քանիսը ցատկեցին և սկսան մագլցել պատուհանը: Յերբ մեկը բարձրացավ լուսամուտը և սկսեց թակել, հաջի Սողոմոնն արագ կերպով բաց արեց լուսամուտը և բունցքի մի հարվածով վար գլորեց բարձրացողին: Ընկնողն անվնաս էր, բայց դա կատաղեցրեց մանուկ ամբոխին: Սկսեցին ելի բարձրանալ:

Հաջի Սողոմոնը, հանկարծ, հայտնվեց փողոցում—սպիտակ շապիկով ու վարտիկով, սկսեց աջից-ձախից խփել:

Մանուկները ցրիվ յեկան, բայց հաջի Սողոմոնը բռնեց յերեխաներից մեկին, դցեց վոտի տակ և սկսեց քացով տալ այնքան, վոր յերեխայի շունչը կտրվեց:

Հաջի Սողոմոնի նորահարսը լուսամուտից, մի սպիտակ սավան գլխին, աղաղակում էր աղիողորմ լացով:

*) Կձանձրանան:

— Սողոմոն աղա, վոտքդ պագնեմ, ներս եկո՛:

Հաջի Սողոմոնը չեր լսում, շարունակում եր քացի տալ չունչը կտրված յերեխային:

Կոուրներեց աղամարդիկ ցատկեցին և բռնեցին նրան:

— Ձե՞ռ ամչնար, եշշե՛կ, տղան մեռավ, ի՞նչ պատասխան տի տաս:

— Թող սատկի, ես էլ մարդ իմ:

Յերեխայի վրա ջուր թափեցին, բայց անօգուտ: Ցերեխան մեռել եր:

Վոստիկանությունը վրա հասավ: Հաջի Սողոմոնը, չապիկով, վարտիկով, ձերբակալվեց և տարվեց:

Ամբոխը ցրվեց: Տիրեց խոր լռություն:

Միայն Հաջի Սողոմոնի նորահարսն եր, վոր ամբողջ գիշերը լաց եր լինում և ասում.

— Պաակս կիսատ մնաց:

— Ե՛հ, մնաց, մնաց,—մխիթարում եր մի հարեվանուհի,—նորեն կը կարգվիս, աղեկ վոր ուրիշ բան չպատահեց:

Այսպես՝ Հաջի Սողոմոնը չկարողացավ մտնել ամուսնական կյանքի շեմքից ներս:

Նրա հարսնացուն մի քանի օր սպասեց Հաջի Սողոմոնի տանը, մորաքրոջ հետ, և ապա նա էլ վերադարձավ մորանց տունը:

— Ծեղճը ձեռք չդպած յետ գնաց,—ասում եյին հարևանները:

* * *

Մթնշաղ ե, բայց փողոցում շատ մարդիկ կան, օդը տաք ե: Գարնան օրեր: Լուսին:

Յես փողոցում խաղում եմ: Հանկարծ սկսեց մի խրախճանցում: Մարդիկ հավաքվեցին փողոցի մի կետում, ինչպես հավերն են հավաքվում, յերբ կուտ են գցում:

Հավաքված բազմությունը լուռ ե, մինչև անգամ վորոշ մտատանջություն կա նրանց դեմքերի վրա:

Վաղեցի:

Ցերկու վոստիկան պաշարել են մեր հարևան Նշան



աղային և քաշքշում են: Նշան աղան վոգի ի բուին պայքարում ե նրանց դեմ:

Նա կռնակի վրա մի մեծ կողով ունի: Ըստ յերևույ-

թին կողովը ծանր է, Նշան աղայի քամակը կորացել է պարզապես կքել է այդ ծանրության տակ, վզի յերակներն ուռել են:

— Ի՞նչ կա կողովի մեջ,—հարցնում են վոստիկանները:

— Խաղող է,—պատասխանում է Նշան աղան:

Վոստիկանները սկսում են հրհռալ: Գարնան ի՞նչ խաղող: Նշան աղան չփոթվել է, սխալ պատասխան է տվել:

— Ձոր խաղող է, չամիչ,—ուղղում է Նշան աղան:

Վոստիկանները պնդում են, վոր կողովը ցած դնի և բաց անի:

Մարդիկ սպրդնում են: Պարզ է: Նշան աղան փամփուշտ է փոխադրում և բռնված է:

Սարսափելի դժբաղդություն, նրան սպասում է բանտ, աքսոր, թերևս և կախաղան:

— Իջեցրե՛ք կողովը, բա՛ց:

Նշան աղան դիմադրում է, աղա և աղաչում, պաղատում:

— Կբանամ, միայն տուն տանեմ, հենաեղ բանամ, —խնդրում է նա:

Բայց վոստիկանները համառում են, հակապետական գործ են բռնել, ուզում են հանդիսավորություն տալ, անպայման կվարձատրվեն բռնակալության կողմից:

Նշան աղան դառնում է բազմության և պաղատում ամեն մեկին:

Վոչ վոք չի միջամտում: Վախենում են:

Վերջապես վոստիկանները բռնի ցած են դցում կողովը: Ինչ վոր ճչոց է լսվում: Բաց են անում կողովը, միջից դուրս է գալիս մի կին, յերեսը ծածկած, ճչում է ու լաց լինում:

Նշան աղան միայն մի ուղղությամբ հառել է բյուրեղացած, հիմարացած աչքերով:

Ահաբեկված բազմությունը հանկարծ սկսում է բարձր և անզուսպ հրհռոց, դիվային մի ծիծաղ և մեկը սկսում է աղաղակել.

— Նշան աղան սեփեթով բոզ կտանե՜...

Այդ աղաղակին խառնվում են ուրիշ աղաղակներ:

— Բոզը սեփեթեն դուրս եկա՜վ...

— Վա՜յ, խայտառա՛կ հերիֆ, բոզը սեփեթին մեջ է դրեր...

Կինն ուզում է փախչել, վոստիկանները բռնում են:

Բազմության մի մասը պաշարում է Նշան աղային, մյուս մասը՝ կնոջ, ծափ են տալիս ու ծաղրում:

Նշան աղան փախչում է: Բազմությունը, թողած կնոջը, ընկնում է նրա յետևից:

Նշան աղան փախչում է. բազմությունը յետևից աղաղակում.

— Սեփեթով բոզ կտաներ, բռնեցե՜ք....

Վոստիկանները բաց թողին կնոջը, վորը հրդեհից ահաբեկվածի նման, փախավ և կորավեց:

Վոչ վոք չիմացավ թե ո՞վ եր և ո՞ւր գնաց:

Նշան աղան հասավ տունը, բայց չմտավ ներս, առաջ անցավ, վորպեսզի բազմությունը չխռնվի դռան առաջ: Բազմությունը հետևեց նրան՝ շարունակելով անզուսպ ծանակը:

Նա մտավ մի նեղ փողոց, դուրս յեկավ մյուս լայն փողոցը—բազմությունը—յետևից:

Աղաղակները շատացան, վորովհետև բազմությունը շատացավ:

Տեսնելով, վոր յելք չկա, Նշան աղան նորից դարձավ դեպի մեր փողոցը և մտավ իր տունը:

Բազմությունը խռնվեց դռան առաջ: Բերնե բերան դեպքը մեծացավ, մի կինը յեղավ յերկու:

Մի ամբողջ ժամ հրհռացին, աղաղակեցին և ցրվեցին:

Նշան աղան մի քանի որից հետո հազիվ դուրս յեկավ:

Ասում եյին, վոր ծանոթներից մեկին ասել եր.

«Հիսուն դիրեմ մսի համար քաղաքի մեջ խայտառակ յեղա»:

ԺԱ.

Անցնում եյին մեր դռան առաջից ուղտերի կարավանները, վորոնք գալիս եյին Միջագետքից, գնում եյին մինչև Սեբաստիա, Փոքր Ասիայի զանազան վաճառաշահ քաղաքներ և աշունքին, յերբ մեր պարտեզներն արգասավորության լրումն եյին տոնում, վերադառնում եյին դեպի անծայրածիր անապատները, դեպի բաբելոնական և արաբական Հարուստ, ադամանդով, լուսատուների պես պայծառ քարերով լիքը քաղաքները:

Ուղտերը բերում եյին մեզ Հարավի քաղցր արմավը: Յերբ կարավանները գալիս եյին, մեր շուկան վերակենդանանում եր, ամբողջ քաղաքը դառնում եր նրանց բոժոժների յերգը, քաղաքը լցվում եր ուղտերի խաղաղ, իմաստուն նայվածքներով և նրանց յերկա՜ր, Հոգնա՜ծ, աղերսական ձայնով:

Ուղտի նայվածքը խաղաղ է, ինչպես անապատի յերկինքը: Այդ նայվածքի Հիշողությունը Համառում եր մնալ մեր տեսողության մեջ նրանց Հեռանալուց Հետո էլ:

Քայլելիս նրանք լուռ Հառում եյին իրենց Հարավի անեզրության սովոր աչքերը մեր փողոցի պատերին, կարծես վորոնելով անՀուն և խաղաղ Հորիզոնը, անտարբեր մանուկների ամբոխին, վոր ընկնում եր նրանց յետևից ձմերային գուլպայի բուրդը ձեռք բերելու Համար:

Ահա անցնում է մի ուղտ, զարդարված արևելյան Հարսի նման, ուլունքներով, փոքրիկ Հայելու կտորնե-

րով, զանազան Հնչունակության բոժոժներով, մետաքսե կտորներով, գույնզգույն բուրդի Հյուսվածքներով:

Դա կարավանի տիրոջ ընտանիքին պատկանած ուղտըն է:

Կարավանի տերը բերում է իր Հետ նաև ընտանիքը ցույց տալու Համար Հյուսիսի տարօրինակ յերկըրները:

Զարդարված, բարձր, մեծղի ուղտի կռնակին զետեղված է մի պատգարակ, գույնզգույն մետաքսե վարագույրներով, վորոնք օրորվում են ուղտի ռիթմիքական չարժման Համընթաց: Կանանց դեմքը ծածկված է ներքևից մինչև քթի կեսը, իսկ վերևից մինչև Հոնքերը, միայն սև աչքերն են փայլում, փայլում են ինչպես Հարավի արեգակը: Անվերջ ծամում են, նրանց ծնոտների յելևէջը Հնազանդում է ուղտի օրորումին, ծամում են խաղաղությամբ և ծուլությամբ, նայում են մեր քաղաքի լուսամուտներին, կտուրներին, ողամարդկանց, կանանց, ընկղմանած գույնզգույն, վառող գույներով փոքրիկ, ատինքների պես ուռած բարձիկներին: Անապատների այդ կանայք ունեն յերազուն աչքեր, ուղտը օրորում է նրանց անվերջ, օրորում է գիշեր և ցերեկ, բաբելոնական յերկրներից մինչև փոքր ասիական քաղաքներն ու գյուղերը:

* * *

Կարավանը չարժվում է, պետք է Հեռանա քաղաքից: Վեր է կենում ուղտը, Հառում է նայվածքը սաՀմանափակ Հորիզոնին, տիրոջ Հավատարիմ ծառան աճապարում է փոքրիկ սանդուղը բերել, դնել ուղտի փորին: Տերը բարձրանում է վեր, ընկղմանում է կնոջ կողքին: Համբույր, բոժոժների յերգ, ուղտի ռիթմիկ օրոր -կարավանատիրոջ ճանապարհորդությունը:

Կարավանը ճամբորդում է գիշեր և ցերեկ, կանգ է առնում միայն այն ժամանակ, յերբ Հարկավոր է բեռ-

ներն իջեցնել, փոխանակել ուրիշ ապրանքների հետ, վաճառել և ապա ճանապարհ ընկնել:

Յերբ կարավանը քաղաք հասներ կեսգիշերին, հեռվից լսում եյինք բոժոժների յերգը, վոր քնքուշորեն զրնգում եր պարզ, աստղազարդ յերկնքի տակ: Դանդաղ, բայց համառորեն մոտենում եր կարավանը: Կիտաքունները սկսում եյին որորվել ուղտային ռիթմով մինչև կարավանը կանգ աներ մեր քաղաքի հրապարակներից մեկում, կամ, առանց մեր քաղաքում կանգ առնելու, հեռանար և բոժոժների զրնգոցը գերեզմանվեր մեր պարզ, կապո՛ւյտ-կապո՛ւյտ, աստղաշատ յերկնքի ծոցում:

* * *

Մեր փողոցում բացվող հրապարակներից մեկում յերեք որ է ինչ մի կարավան է կանգ առել: Ուղտերի բուրդի, խմորի, ուղտապանների թաղիքների յուրահատուկ հոտ, ուղտերի հոգնած ձայներ և խաղաղ նայվածքներ: Ուղտապանների թաղիքե ցածր վրաններ: Ցերեկոյան օջախները վառվում են: Պարզ, պարզ մի կենցաղ: Ուղտապանները կերակրում են իրենց ուղտերին և անվերջ շոյում ու փայփայում նրանց: Նրանք բարձր չեն ծիծաղում, ժպտում են միայն: Նրանց ժպիտը թույլ, տժգույն, մարող գույներով հազիվ գծագրվում է դեմքերի վրա և անհետանում: Բայց անապատի մարդու նայվածքը հրային է, արևաշող, կիզիչ, խոնավ, փայլփլացող, միշտ արթուն, խոսուն աչքեր, վորոնք բերում եյին մեզ իրենց ավազների ջերմությունն ու անդորրը:

Կարավանն արդեն ճանապարհ ընկավ: Ուղտերի կերկերուն, աղերսական և կարոտագին ձայնը բռնել է վողջ քաղաքը:

* * *

Բայց ուղտերից մեկը չի շարժվում, նստած է, վեր չի կենում, միայն նայում է:

Հավաքվում են ուղտապանները, թափանցում նրա աչքերի խորքը և հասկանում ուղտի բովանդակ հոգին—բռնել է նրա համառությունը—տժգունում է նրան կերակրող և խնամող ուղտապանը, կարավանի տիրոջ զայրույթի վախից:



Ուղտը վշտացել է մարդկային մի կոպտությունից: Յետ է դառնում կարավանի տերը:

— Մնա՛ ուղտի հետ, մինչև համառությունն անցնի, կհասնես մեր յետևից,—հրամայում է ուղտապանին կարավանի տերը:

Ուղտապանը հնազանդվում է: Կարավանը զնգացնում է իր բոժոժները: Համառող ուղտը դարձնում է իր վիզը, յերկար նայում և յերկար մի աղերսանք է ձայնում: Կարավանի տերը կանգնեցնում է ամբողջ կարավանը—մի գուցե ուղտը ցանկանա կարավանից չբաժանվել—բայց զո՛ւր, ուղտը նստած է և չի ուզում վեր կենալ: Կարավանը շարունակում է ճանապարհը դեպի Միջագետք, դեպի բաբելոնական և արաբական անապատները:

Համառոտ ուղտի պահապանը փռում է իր թաղիքը ուղտի կողքին, վրան քաշում է իր աբան ու քնում է այն հույսով, վոր մինչև զարթնելը՝ ուղտի սիրտը կքնքշանա, կլինի անհիշաչար և յերեկոյան կհասնի կարավանին:

Անցան որեր և ուղտը շարունակեց իր անասնական համառությունը: Ուղտապանը հոգնեց նրան շոյելով: Ուղտի սիրտը կարծրացել եր, ինչպես մեր յերկրի ժայռը:

Աշնան ցուրտը սկսեց սարսափեցնել հարավի բնակչին: Ուտելիքը պրծավ: Վոչ վոքին չի ճանաչում, վոր դիմում կատարի, ուտում է ուղտի համար պատրաստած թույլ խմորից, հասկացնում է ուղտի քամակից բուրդ գողացող յերեխաներին, վոր յեթե հաց տան, ինքը կքաշի և կտա:

Մի քանի որից ուղտը մերկացավ, ուղտապանը վաճառեց բոլոր բուրդը: Ուղտն ինքն էլ է մրսում—անապատի այդ հերոսը: Այլևս բուրդ չկա, վոր հացի հետ փոխանակի, հասնում են մուրացկանության որերը:

Թաղի յերեխաները հաց են տանում, կերակրի մնացորդներ: Ուղտապանը գրկում է մանուկներին, շնորհակալության համար համբուրում:

Մի քանի հուժկու յերիտասարդներ վորոշում են ոգնել անապատի մարդուն:

— Անգամ մը վոր կայնի, կերթա, մինչև անապատը մեկ սոլուխ կերթա,—մտածում են նրանք:

Բերում են յերկու սյուն, մեծ դժվարություններով կոխում նստած ուղտի վոտների արանքը և 20 հոգով վեր են բարձրացնում նրան: Աղերսական, ձգձգուն, յերկար վողբով բարձրանում է ուղտը, կանգնում: Հրճվում են բոլորը, անապատի մարդը չի կարողանում իր հրճվանքն արտահայտել, ժպտում է մեղմ, սրան-նրան գրկում: Բայց մեկ-յերկու րոպե հետո՝ ուղտը որորվում է յետ ու առաջ, չոքում և նստում: Մռայլը պատում է անապատի մարդուն:

— Համա ինադ է հա՛,—ասում են բոլորը:

Թափվում է առաջին ձյունը յերկրում, հազիվ դետին է հասնում, բայց յերբ նստում է մեր սև հագուստների վրա, տեսնում ենք մարդկային ամենանուրբ ասեղնագործից ավելի նրբագույն բանվածքը բնության՝ ձյան առաջին այդ սպիտակ հատիկների մեջ:

Մենք դիտում ենք ձյունը և հրճվում, բայց անապատի մարդու համար ահավոր են ձյան առաջին փաթիլները:

Ուղտն էլ նայում է տարօրինակ սպիտակ փաթիլներին և յերբ մի խոշոր փաթիլ ընկնում է թարթիչների վրա՝ փակում է աչքերը ջղային գլխի շարժումով:

Ուղտապանը ծնկի յեկավ ուղտի առաջ, փաթաթված աբայի մեջ և խորը հուսահատությունով սկսեց լաց լինել առաջին անգամ: Մենք կանգնած ենք մոտը, հաց ենք տարել նրան: Անապատի քաղցած մարդը այլևս հացին էլ ուշք չի դարձնում:

Արցունքները, հակառակ ձյունի փաթիլներին, այրում են նրա կոպերը, գլորվում են քթի յերկու կողմի առուներից վար և կորսվում բեղերի և միրուքի ցանցառության մեջ: Ուղտը ագահությամբ հառել է ուղտապանին, հառել է նրա աչքերի խորքը, հառել է նրա արցունքներին, ուղտապանի նայվածքն էլ արցունքների միջից ընկել է ուղտի խորունկ աչքերի մեջ, արցունքները գլորվում են, այրվում են նրա կոպերը:

Ձյունի փաթիլներից ստեղծված մեր հրճվանքին խառնվում է անապատի մարդու վողբը:

Հանկարծ ուղտը յերկարեց ճիտը մինչև յերկուսի ռնչերը խառնվեցին իրար: Ուղտն աղերսագին ձայնեց մի քանի անգամ, հեվաց և սկսեց բարձրանալ:

Մենք ճչացինք·

— Դեվեն ելա՛վ, դեվեն ելա՛վ...

Ուղտապանը սրբեց իր արցունքները, հավաքեց մեր բերած հացը, ճանկեց ուղտի թամբը, մագլցեց վեր և ճանապարհ ընկավ դեպի անապատը ժպտո՛ւն և ուրա՛խ:

Փողոցի յերկու կողմերում մարդիկ կանգ եյին առ-

նում և դիտում համառ ուղտին, վոր որորվելով քայլում էր, աղերսում, աչքերը հեռո՛ւն-հեռո՛ւն հառած:

Ուղտապանը վողջունում էր փողոցում կանգնած մարդկանց, հավաքում նրանց նետած դրամները, հացի կտորները լցնում տոպրակի մեջ և հեռանում քաղաքից դեպի ավազները, դեպի հարավի արեգակը:

Նա հեռացավ մեր յերկրից, վորտեղ սկսվել էր դաժան ձմեռը կարմրած և դեղնած տերևներով աշունքից հետո:

* * *

Աշունն ուշ էր հեռանում մեր յերկրից, համառում էր, մինչև աղքատ կանայք վերջացնեյին իրենց բաշաղը*), մինչև կտուրի վրա յեփվեյին արևով պատրաստված քաղցրավենիքները:

Միայն աշունքին զգում եյինք, վոր արև կա և քաղցր է, դուրեկան:

Մեր պարտիզի ծառերը դեղնում եյին և կարմրում—արյան գույն: Մեծ, ապտակի չափ տերևներ եյին ընկնում ծառից, ծուլորեն որորվում օդում, արևի ճառագայթներից լուսավառվելով, նման հրդեհի մեծ բոցերից կտրված լեզուների:

Սկսվում էր ահարկու մի պայքար աշնան քամու և արևի միջև: Ամենահզոր արևը վերջիվերջո տեղի յեր տալիս քամուն, վոր կամաց-կամաց դառնում էր անգութ մի սառնամանիք:

Դաժան, յերկարատև ձմեռ: Ձյունը թափվում էր մեծ, տերևի չափ փաթիլներով, լցնում էր փողոցը, բարձրանում, հասնում էր մինչև լուսամուտները, տները գերեզմանվում եյին յերկրի խորքում, դռները փակվում, փողոցը հավասարվում էր մոտավորապես

*) Բաշաղ—այգեկութից մնացած խաղողի կամ ցորենի հավաքում:

տանիքներին և փողոցից ուղղակի քայլում եյինք դեպի տանիքը և տանիքի դռնից իջնում տան ներքնահարկը:

Ձյունը փողոցները լցնելուց հետո՝ միառժամանակ դադարում էր: Անողոք ցուրտը սառեցնում էր ձյունը, կարծրացնում և ձյունը սկսում էր վոտների տակ ճըզըրտալ, խշխշալ ու վողբալ: Փողոցներից անցնողների թիվը իմանալու համար հարկավոր չէր լուսամուտներից դիտել, վորոնք արդեն ծածկված եյին ձյունով, վոտնաձայներից կարող եյինք գուշակել: Մինչև անգամ հարևանների վոտնաձայներից կարող եյինք ճանաչել անձնավորությունը:

Անցնում է մեկը, մայրս անմիջապես ճանաչում է նրան՝ քայլվածքից:

Կես գիշեր է:

— Կիրակոս աղան է,—ասում է մայրս,—աս ժամուն ո՞ւր կերթա, չըլլի՞ քի հիվանդ ունի, երսուն տարի յե եդ մարդը կես գիշերին տունեն դուրս չի գացեր, բան մի պատահեր է:

Առավոտյան մորս առաջին գործը կլիներ մեկին ուղարկել Կիրակոս աղայի տունը և հարցնել, թե ի՞նչ էր պատահել արդյոք կես գիշերին: Ծառան վերադառնում էր և ասում.

— Բարև երե, ըսե քի՝ բան չիկա, չոջուխին փորը սանջի յեր կպեր՝ գացի դեղ բերի:

Մայրս հանգստանում էր, քանի վոր մահ չկար, միայն մահն էր, վոր մորս մտահոգություն էր պատճառում:

— Մեռնել է՝ ճարա չկա, ամեն բան կանցնի, դուն ըսե քի մահ չըլլի,—փիլիսոփայում էր նա:

Ձյունն ու սառնամանիքը տևում եյին յերեք ամիս:

Մեր փողոցի չքավոր տները զբաղված եյին բամբակի բոժոժներ մաքրելով, իսկ հարուստ ընտանիքները ուտում եյին անդադար և վորոճում: Մարմինները անհամաչափ ուռչում եյին, վզերից ճարպոտ մսեր եյին կախվում, դառնում եյին դանդաղ, ծույլ, քնկոտ, խոսում եյին անհոգ, բերանները ծամածռելով, ծիծաղե-

լով անտեղի, քնում էյին յերկար: Կարծես զարթնում էյին միայն ուտելու, վորոճալու և նորից քնելու համար: Մարմնի ճարպոտ ուռուցքներից բացի՝ վրա էյին հասնում հղության ուռուցքները: Ձմեռվա կեսերին այդ ուռուցքները դառնում էյին չափազանց ակնբախ:

Ձմռան կեսերին մեր տան բնակիչները, բացի հայրիկից և յեղբայրներից, ուռչում էյին այդպես; կլորանում, անվերջ թթու էյին ուտում, ուտում էյին մյուսներից գաղտնի և քիչ անց սկսվում էյին տան մեջ, զանազան գաղտնի անկյուններում, կանացի ճիչեր, իրարանցում տան կանանց շրջանում, և կանացի ճիչերին հաջորդում էյին նոր ծնված յերեխաների, «ընղա»-ները: Տան ամեն մի սենյակում, ամեն մի անկյունում լսվում էր նրանց ճվվոցը: Խոհանոցից անցնել չէր կարելի, մարդահասակ բարձր թոկեր էյին քաշած և վրան փռած յերեխաների շորեր: Ամբողջ վեց ամիս այդ թոկերը չէյին մերկանում, շորերը լվացվում էյին անվերջ և անվերջ կախվում, շատ անգամ մի քանի շոր իրար վրա կախված՝ թոկերի կարճության պատճառով:

Սկսվում էր հորս ջղայնության շրջանը, դուրսը՝ ձյուն, սառնամանիք, ներսը՝ անվերջ ճվվոցներ: Նա ամեն որ հարցնում էր.

— Եսոր ամսու քա՞նիսն է:

Ուրախանում էր, վոր պատասխանում էյին՝

— Ամսու յերեսունն է:

— Եհ, աս ամիսն ըլ գլորրեցինք,—մրթմրթում էր նա ինքնիրեն և սկսում էր ճանապարհորդության պատրաստություն տեսնել:

Նա փախչում էր դեպի Ստամբուլ՝ ազատվելու համար յերեխաների ճվվոցներից:

Գնալուց առաջ նա յերեխաների մի ցուցակ էր հետը տանում, վորպեսզի վոչ վոքին չմոռանա: Բոլորին նվերներ էր բերում: Գնալուց հետո էլ նոր ցուցակ էր ուղարկում նրան մայրս—նոր ծնվածների ցուցակը: Յերբեմն չափազանցված ցուցակ էր ուղարկում:

— Թող բերե, պետք կըլլի,—ասում էր նա:

Հայրս վերադարձին մի սնտուկ էր հանձնում մորս և այլևս վոչնչի չէր խառնվում: Բայց սովորություն կար վոր բոլորն էլ իրենց մանուկներին գրկած՝ գնում էյին նրա ձեռքը համբուրելու: Հայրս փոխադարձ «ապրիս» էր ասում յուրաքանչյուրին և յերեխաներին համբուրում: Յերբ շարքը վերջ չէր գտնում՝ հայրս մըրթմըրթում էր.

— Բա՛, բա՛, բա՛, ուրիշ գործ չեք ունեցեր...

* * *

Ովա Բաղլարիում մենք այգի ունեյինք:

Ովա Բաղլարին քաղաքին կից, բայց ընդարձակ տարածությամբ մի այգեստան էր բացառապես խաղողի և նշենիների: Մեր այգին գտնվում էր այդ ընդարձակ այգիների գրեթե մեջտեղում: Աշնան վերջում, այգեկութի ժամանակ, բոլոր այգի ունեցողները 10—15 որով փոխադրվում էյին այնտեղ, սպիտակ վրաններ էյին խփում և սկսում յեռուն այգեկութը: Գիշերները ցուրտ էր լինում, ուստի ամեն մի այգում խարույկ էր վառվում:

Այդ օրերի գիշերներում Ովա Բաղլարին, յերբ դիտում էյին սարից, նման էր բոցավառված խարույկներով յերկնքի: Խարույկի շուրջը պարում էյինք, յերգում: Բոլոր աղջիկներին ազատություն էր տրվում այդ օրերին խարույկի շուրջը պարելու: Խարույկներն այնքան բոցավառ, արծարծուն էյին լինում, վոր շուրջը պարողների յերեսները կարմրում էյին: Այդ օրերին աղջիկների մեծագույն մասը գտնում էր իր նշանածին: Պարից, յերգից և խարույկից տաքացած՝ վառվում էյին և նրանց սրտերը: Նրանք վորոնք գտել էյին մի ջահել սիրտ, կորսվում էյին մեծ թփերի յետևում, խարույկներից հեռու, կարմրած, քաղցրացած վողկույզներ

տակ, և վառում եյին հավիտենական խարույկը—սիրո խարույկը։

Ցուրտ, կապույտ գիշերում, լուսնի կաթնահորդ փրփուրների տակ, շրթունքները հպում եյին իրար, անցնում եր նրանց հոգու միջից տիեզերական շունչը։ Յերբ տղան գրկում եր աղջկան, նրան թվում եր, վոր

ամբողջ բնությունը փաթաթվում է իրեն կրակե թևերով, և տղային թվում եր, վոր գրկել է վողջ բնությունը իր բոլոր մրգերով, իր բոլոր արևաներկ վողկույզներով, ահա կծկվել է իր թևերի մեջ անհուն մի դաշտ թարմ խոտի բույրով, և վերջապես սա այն Զարուհին չէ, այլ բոցավառված խարույկն է իր թևերի մեջ։

— Տեսնանք սըվոնք ո՞ւր գացին,—հանկարծ լըսվում է։

Յերկու ջահելները, կուրծ կրծքի, շրթունք շրթունքի անշարժանում են։

Զարաճճի ընկերները հեռացել են խարույկից և ուգում են խաղ խաղալ վողկույզների և տերևների տակ պահվող ջահելներին։

Ավելի յեն սեղմվում իրար, թևերն ավելի յեն պրկվում և պահը դառնում է հավիտենական։

Յերբ այգեկութը վերջանում եր, վերադառնում եյին տուն, տան ծերունիները տեսնում եյին, վոր իրենց աղջիկը կամ տղան արտակարգ խանդավառության մեջ է, ջրով թացացնում է մազերը, սանրում, այնպես վոր լույսի տակ սաթի նման փայլի։ Պարզ եր, վոր բնությունը, աշնանային բեղմնավորված, կրծքերը լիուլի լցված բնությունը, հպել է նրանց հոգուն, այրել է նրանց սրտի աղվամազը։

Յեվ ահա տղայի ծնողները հանդիսավոր գալիս եյին աղջկա ծնողների մոտ։

Տանը վոչ վոք, բացի աղջկանից, չեր իմանում սկզբում նրանց գալու նպատակը։ Աղջիկն իմանում եր, վորովհետև տղան կտուրի վրա թուղթ դրած կլիներ թե՝ «իրիկունը պապս, մարս տի գան քեզ ուզեն, քեզ հարցնեն նե՝ չամչնաս, ըսե՝ ես ըլ կուզիմ»։

«Յեթե մըզի հարցնեք՝ մեր կամքովն է, ամա տեսնանք աղջիկը կուզե՞»—պատասխանում եյին աղջկա ծնողները տղայի ծնողներին։

Յեվ կես գիշերին աղջկա մայրը, անպայման մայրը, հարց եր տալիս աղջկան.

— Քա, Զարուկ, քեզ կուզեն, ին՞չ կըսես։

Աղջիկը չի պատասխանում, կարմրում է, ապա ծիծաղելով փախչում։

Մայրը հայտնում է իր խորհրդակցության արդյունքն ամուսնուն։

«Եսպես, եսպես»...

— Ե՛հ, տանք որ երթա, խելքը տեղ է ըրեր։

Մինչև առավոտ ամեն ինչ հայտնի յէ, բայց անմիջական պատասխան չեն տալիս, դա եժանություն է, յերբեմն մինչև անգամ անցնում է մի ամիս, իբր թե աղջկան համոզում են, բայց յերբ պատասխան եր տըրվում, տղայի կողմից անմիջապես նշանը բերում եյին, ցույց տալու համար, վոր իրենց ընտրած աղջկա համար նրանք ցանկություն ունեն շուտ շարժվելու։

Յեվ պատահում եր, վոր վողկույզների տակ բոցավառվող սերը, լուսինը, կապույտ յերկինքը բոլոր-

վին անհամապատասխան էին լինում յերկու ջահելների ծնողների հարաբերության։ Սև ամպերը կուտակվում էին, ծայր էր առնում վողբալի մի տրագեդիա։

Վոչ մի խրատ՝ ծնողներին համոզելու՝ չէր օգնում։ Քարային համառությունը չէր փշրվում, չէ՞ վոր գավառացի էին և հայ։

Յեվ տարածվում էր աղետալի լուրը—տղան իրեն գցել է կտուրից ներքև, գանգն ամբողջ ցրիվ յեկած։ Յեվ ահա մի ուրիշ աղետալի լուր—աղջիկը թունավորել է իրեն։ Տղան իր մահվանից առաջ իր ձեռքով է տարել աղջկան խնդրած թույնը։

ԺԲ

Յեվ գոյություն չուներ, բացարձակապես գոյություն չուներ պետական կամ հասարակական վոչ մի հիմնարկ, վոր խնամեր խենթերին...

Խենթե՛ր...

Փողոցները լիքն էին զանազան տեսակի խենթերով։ Նրանցից վոմանք յեկել էին գյուղերից, վոմանք՝ ուրիշ քաղաքներից, իսկ շատերը նախկին բնիկ խելոքներ էին, վոր գժվելով՝ դուրս էին ընկել տան շրջափակից։

Թերևս նրանցից մեծամասնությունը, այժմ մտածում եմ, կարող էր բուժվել, բայց ընկնելով փողոցները անխնամ, դարձել էր բոլորովին անբուժելի, վորովհետև յերեխաներն ու անկիրթներն ընկնում էին նրանց յետևից և ջղայնացնում՝ ավելի ևս մթագնելով նրանց հոգեկան քաոսը։

Գավառական քաղքենիությունը, վոր ամեն մի հնացած, փտած սովորության համար, ինչ վոր բարոյականի համար՝ մարդկանց կախաղան էր բարձրացնում, չուներ վոչ մի տեսակի բարոյական՝ գեթ խղճալու այդ տարաբախտ մարդկանց։ Այդ քաղքենիությունը հրճվում էր, յերբ յերեխաներն ու անկիրթները սկսում էին դիվային խաղերը խենթերի հետ։

* * *

Հիշում եմ պարոն Բաղդասարին: Սա յերկարահասակ, սև, յերկար և խիտ մորուքով և սև ու թավ հոնքերով մի մարդ եր: Նա յեղել եր ուսուցիչ, խենթացել եր սիրուց—թաղականի աղջկա յեր ուզել, մերժել եյին թե՝ «խաֆան լեցուն, փորը պարապ վարժապետ ե», և ահա ֆրանսական սև ռեդինգոտը հագին՝ ընկել եր տնից դուրս—ահաբեկված:

Ինչ վոր բանից վախենում եր ու...փախչո՛ւմ: Ի՞նչ եր տեսնում— վո՛չ վոք չեր հասկանում, վո՛չ վոք չեր ցանկանում հասկանալ:

— Պարոն Բաղդասար, եկա՛վ...—ճչում եյին անկիրթները:

Յեվ ահա պարոն Բաղդասարը փրփրում եր, կատաղում և սկսում եր վազել ազատ արձակված սև ձիու նման —ահաբեկված, սարսափահար աչքերով:Մեկ-մեկ յետև եր դառնում, նայում և ավելի կատաղած ու սարսափած փախչո՛ւմ, փախչո՛ւմ եր փողոցից փողոց: Ամեն կետից—դռներից, լուսամուտներից, կտուրներից, փողոցի անկյուններից հրհռում եյին և լրբորեն ճչում.

— Պարոն Բաղդասար, եկա՛վ...

Ինչ եր ուտում այդ նախկին մարդը, վորտեղ եր քնում—վո՛չ վոք չեր իմանում: Նրա յեղունգները կարճանում եյին կտրվելուց, մազերը յերկարում եյին անվերջ—կեղտոտ և այլանդակ: Մինչև հիմա ել, յերբ հիշում եմ, սարսուռ եմ զգում, մարմինս փշաքաղվում ե:

Պարոն Բաղդասարը մենակ չեր:

Կար մի Թուրք խենթ, վոր սովորաբար շատ հանգիստ և խելոք մարդ եր, գիտեր նորմալ խոսել ամեն մի նյութի մասին, բայց հանկարծ գազանանում եր և դեմը գտնված ամեն ինչ կտրում ու փշրում: Նա գազանանում եր, յերբ մեկն ու մեկը «Ֆրստ» եր ասում նրան: Հենց վոր «Ֆրստ» բառը լսեր— բոլորովին այլանդակվում եր: Իսկ «Ֆրստ» բառը վոչ մի նշանակություն

չուներ, լոկ բացականչություն եր: Այս խենթը պարոն Բաղդասարից այն տարբերությունն ուներ, վոր սա խղճալի չեր, սրանից մարդիկ ահաբեկված և սարսափած փախչում եյին: Այս խենթը հանգստանում եր այն ժամանակ, յերբ մի քանի մարդկանց ծանրորեն վնասում եր, խանութների առաջ վաճառքի հանված մրգերի դեզերն եր կործանում կամ ապակիներն եր ջարդում:

Այդ բոլորից հետո՝ նրա կատաղության հևքը սկսում եր մեղմանալ, բայց հանկարծ մի կլասիկ ցինիկ նորից եր «Ֆրստ» ճչում, միևնույնը կրկնվում եր ավելի դաժան և անճոռնի պատկերներով:

Կար մի աղջիկ, այլանդակ գլուխով, մազերը դզդզված և կեղտոտ, փեշերը վեր քաշած, անվարտիք, ճաքճքած և սևացած սրունքներով: Կանգ եր առնում յուրաքանչյուր անցորդի առաջ, անճոռնի և դիվային ծիծաղում և փեշերն ավելի վեր քաշելով՝ ցինիկորեն ցույց եր տալիս...

Հայրս յերբ տուն գար և մերժեր ճաշել, մենք բոլորս ել իմանում եյինք, վոր պատահել եր այդ աղջկան:

Կար մի ուրիշ խենթ, վոր ամեն որ ընտրում եր մի փողոց և այդ փողոցի մի վորոշ կետից մի ուրիշ վորոշ կետ անընդհատ գնում եր և գալիս, խորը մտածմունքների մեջ ընկղմված, ձեռքերը յետին կապած, բացարձակորեն հանգիստ, յերբեք ուշադրություն չդարձնելով շրջապատի բղավոցներին, միայն յերբեմն կանգ եր առնում, մի կնոջ նայում, շատ թեթև և հեգնական ժպտում և ապա նորից խորասուզվում մտքերի մեջ՝ շարունակելով յերթևեկը գերագույն անդորրությամբ: Այս խենթը բնիկ չեր, վո՛չ վոք չեր իմանում, թե վո՛րտեղից եր յեկել, կարճահասակ եր, գիրուկ, հաստ, կլոր, կարմիր թշերով և չեկ մազերով:

Յեթե նրան հաց տվող լիներ, հանգիստ կերպով ընդունում եր և կանչելով շներին՝ փրթում եր նրանց ամբողջ հացը: Սպասում եր, վոր ուտեն, պրծնեն, ապա հոնքերը կիտում եր, խորասուզվում և սկսում քայլել:

Շատ և բազմատեսակ էյին խենթերը և, գնալով, բազմանում էյին: Վո՛չ վոք չէր նախաձեռնում, վոր հավաքեն, խնամեն: Ձէյին տեսել, չէյին էլ զգում:

Լավ հիշում եմ, յերբ Ամերիկայից մեկը յեկավ և հայտնեց, վոր այնտեղ հավաքում են խենթերին և պալատների նման տներում խնամում, բոլորը զարմացան և ասացին.

— Թռաֆ*) երկիր է եղեր Ամերիկան, հա՛...

Մի որ հայրս ինչ վոր բանից ջղայնացած՝ հայտարարեց—«հիմա կխենթենամ», յես սարսափեցի, անմիջապես պատկերացրի, վոր հայրս էլ կարող եր ընկնել փողոց...

Խենթերը... ինչքա՛ն շատ էյին:

Մեկը կար, վոր յերևութապես խելոք եր, բայց ի՛նչ խենթ—յոթ տարի նա ձեռքերը գրպանից դուրս չէր հանել, բռունցքի նման ծալած, կոխել եր գրպանները: Մի անգամ մի քանի ուժեղ տղամարդիկ հավաքվեցին և բռնի կերպով դուրս բերին ձեռքերը—ամբողջովին բորբոսնած էյին, ամբողջովին բամբակ կապած՝ հողի տակ մնացած դիակի նման: Նրան կերցնում էյին իր յերկու աղջիկները և միակ դժբաղդ վորդին:

Մի ուրիշ խենթ, յուրաքանչյուր որ բարձրանում եր մի բարձր կտուր, նստում եր քիվի վրա, վոտները կախելով ներքև և սպասում եր ընկնել: Վո՛չ վոք չէր կարող մոտենալ—մի գուցե խելապես իրեն գցեր ներքև: Վերջիվերջո մի որ, կորցնելով հավասարակշռությունը, ընկավ յերեք հարկանի կտուրից և տեղնուտեղը սափակացավ: Յես տեսա, վոր նրա ուղեղն ամբողջ դուրս եր թափվել:

Պատահում եր, վոր մի վորևե գժված մարդ՝ ընտանիք և ազգականներ ունենար: Նրանք չէյին թողնում, վոր խենթը դառնար փողոցի սեփականություն, պահում էյին տանը և «խնամում»: Ինչ էյին անում: Կապկպում էյին նրան, մի ուժեղ և անգութ մարդ վարձում, վոր

*) Թռաֆ—տարօրինակ, տարօրինակորեն զվարճալի։

ձգեր դժբաղդին տան ներքնահարկը—փայտնոցը կամ ածխանոցը—և սկսեր փայտով անվերջ ծեծել:

— Բաշխա բիչիմ խելքը գլուխը չի գար,—ասում էյին «խելոքները»:

Յավ արաղով և ուտելիքով հյուրասիրում էյին այդ վարձկանին, վորպեսզի ավելի սիրտ առնի և յեռանդով ծեծի:

— Դուք ընծի ցած աչով մի հայեք, կխելոքցնեմ,—հայտարարում եր վարձկանը և իջնում ներքնահարկը նոր յեռանդով: Ներքնահարկն իջնելուց հետո՝ սկսում եր անասնական բառաչը, վորովհետև փայտ եր, վոր կոտրվում եր դժբաղդ մարդու վոսկորների վրա:

Միակ բժշկական մեթոդը, վոր գոյություն ուներ այդ հի՛ն, հի՛ն յերկրում:

ԺԳ

Մի ամառ, հանկարծ, մեր քաղաքում հայտնվեց մի մարդ—մերկ սրունքներով, բոբիկ, գլխաբաց, աղվեսի մի մորթի հագին, վոր մինչև ծնկները չեր հասնում, ձեռքին յերկար, իր հասակից բարձր մի գավազան, յերկաթե բարակ շղթայով թևից կախ արած մի քաշքուր, մորթը թուխ, ինչպես արաբ կամ հնդիկ, ցանցառ, բայց սիրուն, սրածայր միրուքով, ճակատին խալ, կարմիր և կրքոտ շրթունքներով: Այս մարդը չեր խոսում, միայն ման եր գալիս և փող հավաքում իր քաշքուրով: Շուտով լուր տարածվեց, վոր աստծո հրամանով այս մարդը յոթ տարուց հետո լեզուն պիտի բացվի և աստված վերջին պատգամը պիտի տա մարդկության՝ նրա բերանով:

Յեթե չեր կարող խոսել, ո՞վ, վո՞րտեղից, ի՞նչպես իմացվեց այս մարդու համրության միստերիան— վո՛չ վոք չհարցուփորձեց:

Յեվ այս մարդը, վոր կարծվում եր թե յեկած կլիներ հարավի յերկրներից, դարձավ ընդհանուրի հարգանքի առարկա: Նրա հարգանքն ավելի և ավելի մեծացավ, յերբ տեսան, վոր շահամոլ չե, ինչ վոր չեր տեղավորվում իր փոքրիկ քաշքուրի մեջ, չեր վերցնում, թեկուզ դա լիներ շատ թանկագին իր: Այսպես՝ մարդիկ ստիպված եյին միայն փող տալ—մինչև անգամ վոսկի փող:

Գիշերները նա քնում եր թրքական գերեզմանոցում, մի փոքրիկ վրանի տակ, աղոտ մի լույս պլպլացնելով: Ասում եյին, վոր գիշերներն աղոթում ե և յերբեք չի քնում: Ցերեկը ման եր գալիս, գիշերը չեր քնում, իսկ ո՞վ եր հարց տալիս իրեն, վոր ապա ի՞նչպես ե ապրում:

Յոթ տարի չպիտի խոսեր, յոթ տարի չպիտի քներ, յոթ տարի պիտի աղոթեր միայն—յոթ տարուց հետո մարդկությունը պիտի լսեր աստծո նոր խոսքը:

Ամեն որ նա բարձրանում եր քաղաքի մարմարյա մզկիթի մինարեն, ամբողջ մի ժամ աչքերը հառում եր յերկնքին, ձեռքերը կրծքի վրա ծալած և գավազանը գրկած: Ներքևում մեծ բազմություն եր հավաքվում և դիտում: Ծայր եր առնում առասպելների մի շարան—աստծո հետ ե խոսում, հենց աստված կողքին կանգնած ե, բայց մեղավոր մարդկությունը չի կարող տեսնել:

Շատերը մինչև անգամ ասում եյին, վոր այն, ինչ յերևում ե, դա նրա լոկ պատկերն ե, ինքը թռել ե աստծո մոտ և շուտով կվերադառնա:

Բայց քաղաքում գտնվող մի քանի ժուլիկներ չթողին, վոր յոթ տարուց հետո մարդկությունն արժանանա աստծո նոր պատգամին, և մի գիշեր, գուշակելով, վոր այս մարդու աղվեսի մորթու տակին բավականին խոշոր գումար հավաքված կլինի, հարձակվեցին վրան և կողոպտեցին:

Գողերը չբռնվեցին, բայց նրանց պատմությունը տարածվեց քաղաքում:

Յեվ այդ պատմությունից պարզվեց մի բան—ամենաեյականը—պարզվեց, վոր աստծո հրամանով համրացած մարդը սարսափելի կերպով հայհոյելիս ե յեղել իր վրա հարձակվող գողերին և վոգի ի բռին աշխատելիս ե յեղել— աստծո նվիրված այդ մարդը—չհանձնել փողը: Այն բազմաթիվ մանր փողերը, վոր նա հավաքելիս ե յեղել, վերածել ե վոսկու: Գողերը վո՛չ մի մանր փող նրա մոտ չեյին գտել:

Կողոպտվելու հաջորդ որն իսկ այդ մարդը չերևաց մեր քաղաքում: Այն գնացն եր: Ո՞ւր գնաց, ի՞նչ յեղավ—վո՛չ վոք չիմացավ:

* * *

Սրա կապակցությամբ յես կպատմեմ մի այլ դեպք մի այլ դեմքի մասին:

Ամերիկայից մեր քաղաքն ընկավ մի բնիկ ամերիկացի՝ մր. Ջեյկըր անունով:

Այս մր. Ջեյկըրը մի բողոքական միսիոնար եր, վոր սուրբ հոգի յեր բաժանում:

Վո՛չ ավել, վո՛չ պակաս—սուրբ հոգի յեր բաժանում:

Ի՞նչպես եր անում:—

Հավաքում եր բողոքական հասարակությունը ժողովարանում, անգլերենով քարոզ եր կարդում (մեկը թարգմանում եր), քարոզից հետո, աչքերը փակ, աղո-

թում եր, ձեռքերը տարածած ոդում, աղոթքից հետո մի քանի բոպե խստագույն լռություն եր ազդարարում և ի վերջո հայտարարում.

— Ով վոր սուրբ հոգին ստացավ՝ թող վոտի կանգնի:

Սկզբները քիչ թվով, բայց հետագայում բազմություններ եյին վոտի կանգնում:

Վո՛չ վոք չեր կարող բացատրել, թե ինչ եյին

զգում, յերբ «սուրբ հոգի» եյին ստանում, բայց կանգնում եյին, կանգնում եյին մասսայականորեն:

Սուրբ հոգի առնողներն ինչ վոր փող ունեյին գըրպանները՝ դատարկում եյին մր. Ջեյկըրի գանձարանը: Այդ գանձարանն ստեղծված եր, վորպեսզի հնարավորություն տրվեր մր. Ջեյկըրին սուրբ հոգին տարածելու ամեն տեղ:

Գտնվեցին մի քանի բողոքականներ, վորոնք աշխատեցին դադրեցնել այդ խաղը, բայց աջակցություն չգտան և վերջիվերջո իրենք ել գնացին և ստացան սուրբ հոգին:

Ամբողջ մի ամիս վողջ քաղաքը միայն սուրբ հոգու մասին եր խոսում: Կային բողոքական կլասսիկ կեղծավորներ, վորոնք դադրեցին սուրբ հոգի չառնողների հետ հարաբերություն անելուց: Սուրբ հոգի չառնողներին չեյին բարևում:

Ծայր առան ամուսնալուծումներ, ընտանեկան ամեն կարգի անհամություններ, բաժանումներ (ծնողները սուրբ հոգին առնում եյին, հանկարծ վորդիներն ու աղջիկները համառում եյին առնել, վորդիներն ու աղջիկներն առնում եյին, ծնողները չեյին առնում, յեղբայրներն առնում եյին, քույրերը չեյին առնում, ամուսինն առնում եր, կինը չեր առնում կամ՝ ընդհակառակը):

— Վաղը կերթաս ու կառնես, հընկ մընկ չընես,—պատվիրում եր սուրբ հոգի առած ամուսինը:

Սկսվում եր վեճը և սուրբ հոգի առնող ամուսինը կամ յեղբայրը, հանուն սուրբ հոգու, քաշում եր փայտը կամ փոտնամանի մեկը և սկսում եր ծեծել սուրբ հոգուն դիմադրող կնոջը կամ քրոջը:

Նրանք, վորոնք, սկզբներում, սուրբ հոգի առնողների վրա եյին ծիծաղում, իրենք ել ստացան և սկսեցին չառնողների վրա ծիծաղել:

Սուրբ հոգի առնողներն այլևս խանութները չեյին բաց անում՝ առևտուրով չզբաղվելու համար, մինչև անգամ պարզ, անմեղ արհեստով զբաղվելը մեղք եյին

համարում: Այսպիսով, բավական խանութներ փակ եյին:

Հանկարծ մի առավոտ մի խանութ (վոր մինչև այդ բաց եր) չեր բացվում: Այլևս պարզ եր—խանութի տերը առել եր սուրբ հոգին:

Կողքի խանութպանները, տեսնելով, վոր խանութը չբացվեց, ասում եյին իրար:

— Իշու ձագը սուրբ հոգին առավ...

— Առա՛վ ու առա՛վ...

Սուրբ հոգու կոմեդիան այնքան ընդհանրացավ, վոր մի բողոքական ուրիշ բողոքականի դռնից անցնելիս՝ թխկացնում եր լուսամուտը և հարցնում.

— Մուրադ աղա, առա՞ր:

— Նոր տի առնիմ, ծո, ե՛շ, մեղա՛, մեղա՛, ութն որ ե առեր իմ,—պատասխանում եր Մուրադ աղան:

— Ես դահա չառա:

— Վաղը գնա, ա՛ռ, ամոթ ե, ծո, սարսա՛խ:

Փոքր հորաքույրս, վոր բողոքական մարդու յեր գնացել, մր. Ջեյկըրի ժամանումից յերեք որ հետո սուրբ հոգին առավ—այսպես ասած՝ առաջին առնողներից մեկն եր: Լուր բերին հորս թե՝ «Ցեղսա քորոն սուրբ հոգի յե առեր»:

— Կանչեցե՛ք դա,—պատվիրեց հայրս:

Գնացին, կանչեցին: Չեկավ: Փեսային կանչեցին: Նա յեկավ և հայտնեց.

— Հաջի եֆենդի, կվախնա, վոր դա:

Հայրս նրան պատասխանեց.

— Եդ ի՞նչ ջիվերիս սուրբ հոգին ե առեր, վոր կվախնա,—և մուգ գույնի մի հայհոյանք շպրտեց մր. Ջեյկըրի հասցեյին:

Վերջապես հազիվ մատի վրա համրվելիք մի քանի հոգի մնացին, վորոնք համառորեն չառան սուրբ հոգին: Այս համառողների—ըստ մյուսների՝ անհույս մեղավորների համար— մր. Ջեյկըրը վերջին մի աղոթք արավ և փողերը հավաքած հեռացավ, վերջ տալով կոմեդիայի առաջին գործողության: Նրա գնալուց հետո սկսվեց կոմեդիայի յերկրորդ գործողությունը:

Սուրբ հոգի առնողները հետզհետե սկսեցին դուրս գալ տներից և խանութները բաց անել, թողնելով սուրբ գիրք կարդալը (առնելուց հետո միայն սուրբ գիրք եյին կարդում), վորովհետև տան յեկամուտը պակասեց:

Խանութները բաց անելու հետ միասին, սկսվեցին փողոցային սկանդալները: Ով վոր սուրբ հոգի յեր առել և ահա դուրս եր գալիս գնալու և առևտուրը շարունակելու՝ փողոցում յենթարկվում եր ծաղր ու ծանակի: Ծաղրն ու ծանակը սկսվեց ինքնաբերաբար, բայց լուսավորչական քահանաները վարագույրի յետևից հրահրում եյին: Նրանք այն աստիճան արծարծեցին ծաղրի ու ծանակի խարույկը, վոր հասցրին կատարյալ վողբերգության:

Հենց վոր մի սուրբ հոգի առնող դուրս եր գալիս տնից՝ գնալու և խանութը բաց անելու, բազմությունը հավաքվում եր շուրջը և, ծափ տալով, հրհռալով, ծաղրում եր ու թքում:

— Հը՞, սուրբ հոգին ինտո՞ր եր, կոտոշ ունե՞ր...
— Հը՞, սուրբ հոգին բանիս նմա՞ն եր...
—Ծո՛, երեվի սուրբ հոգին ջիվերուս պես եր...

Այսպես աղաղակում եյին ու ծափ տալիս:

Բայց սուրբ հոգի առնողներից վոմանք այս ծաղրը նմանեցնելով «տիրոջ չարչարանքներուն», մի տեսակ հպարտությամբ տարան:

Որինակի համար՝ յես հիշում եմ, նրանցից մեկն աղաղակում եր ծաղրի ժամանակ՝ աչքերը յերկինք հառած և բազկատարած.

— Տե՛ր Հիսուս Քրիստոս, քու ճամբայեն կերթամ կո՛ր...

Քրիստոսի ճանապարհն այն եր, վոր նրա նման իրենք ել ծաղրվում եյին սուրբ հոգու համար:

Շատերը բավական սպասեցին խանութը բաց անելու, մինչև բազմությունը հոգներ և մոռանար, բայց բազմությունը վո՛չ հոգնեց և վո՛չ ել մոռացավ: Բոլորն ել գիտեյին, թե ով դուրս չի յեկել և յերբ ե մտադիր դուրս գալու:

Յեվ ամենավերջինն ել չազատվեց ծաղրից:

Մի ամիս հետո լուր ստացվեց, վոր մր. Ջեյկըբը Տիգրանակերտից դեպի Մուսուլ գնալիս՝ սպանվել ե անհայտ չարագործների ձեռքով:

Յերբ այս լուրը հորս հայտնեցին՝ ասաց.

—Չարյաց մեծագույնն ի չիք եղավ:

* * *

Բողոքականնե՛ր... Ինչպես եր ստեղծվել բողոքականների համայնքը:

Ով յեկեղեցու մի պաշտոնյայից սրտնեղեր, վարդապետից կամ քահանայից, տիրացուից կամ ժամկոչից, գնում եր ժողովարան, աղոթք եր անում և «դարձի» գալիս: Մի հյուսն կար, վոր գժտվել եր լուսավորչական յեկեղեցու ժամկոչի կնոջից (նրանք հարևաններ եյին) և գնացել, բողոքական դարձել: Անունը Մամբրե եր: Սովորություն եր, վոր յերբ մեկը բողոքական դառնար, նրան պարոն եյին կանչում: Մեկ որից մյուսը Մամբրե աղբարը դարձավ պարոն Մամբրե: Պարոն Մամբրեն ժողովարանում այսպես եր աղոթում— «Տեր,—ասում եր սուտ լացով,— քու սուրբ հոգիիդ գազյաղիով*) մեր սրտերը վառե»:

Գերմանացի մր. Եյմանը, վոր կոլլեջ եր բաց արել մեր քաղաքում և յեռանդուն պրոպականդ եր մղում քրիստոնյաներին քրիստոնյա դարձնելու համար, շատ եր հավանել պարոն Մամբրեյին և, կանչելով իր մոտ, նրան աշխատանք եր տվել բարձր ռոճիկով, նվիրելով նրան նաև իր հնացած շորերը: Հանկարծ մի որ Մամբրեն յերևաց մեր փողոցներում յեվրոպական շորերով, ոսլայված ոձիքով և փողկապով: Յեթե հովմեական տոգա հագներ մեկը, այնքան տարորինակ չպիտի թվար: Շորերը պարտադրեցին նրան, վոր մեծ բեխերը փոքրացնի: Փոքրացրեց:

Պարոն Մամբրեն, ցանկանալով ավելի առաջ գնալ,

*) Գազյաղի—նավթ:

մտածել եր շատ տարորինակ մի բան: Մտածելուց հետո ել (ամենատարորինակը) ցանկացել եր՝ գործադրել:

Մի կիրակի, ժողովարանից հետո, պարոն Մամբրեն ապուշացած կերպարանքով (այդպիսի ապուշ կերպարանք ստանում եյին ժողովարանից դուրս յեկող բողոքականները, իբր թե մաքրվում եյին մեղքերից) մտնում ե մր. Եյմանի առանձնասենյակը, և թախծոտ չեշտով սկսում.

— Մր. Եյման, շա՛տ կը ցա՛վիմ, վո՛ր հա՛յ ծնված եմ:

Մր. Եյմանը, առանց մեկ յերկու ասելու, տեղն ու տեղը թքում ե պարոն Մամբրեյի յերեսին և դուրս վռնդում, իսկ առավոտյան նրա առաջին գործն ե լինում հեռացնել Մամբրեյին աշխատանքից:

Պարոն Մամբրեն բոլորովին այլ բան եր ակնկալում, նա համոզված եր, վոր մր. Եյմանը պիտի չոյի նրա «ցավը» և ավելի առաջ քաշի: Հյուսնը մի քանի շաբաթ ել յեռանդուն աղոթեց ժողովարանում, բայց մր. Եյմանը նրան յետ չվերցրեց: Տեսնելով, վոր բողոքականներից այլևս հույս չկա, պարոն Մամբրեն, հին արհեստավորի շորերը հագած, վերադարձավ լուսավորչական յեկեղեցի: Նրա առաջին անգամ յեկեղեցում յերևալը տեսարան եր—ամբողջ պատարագի տևողության՝ բարձր և անձոռնի հեկեկում եր, աղոթում, կռանում, գետնի կարպետը համբուրում, բարձրաձայն աղաղակելով. «Տե՛ր, մեղա՛, մեղա՛, իշություն ըրի, ներե՛»:

Պատարագից հետո, հանդիսավոր կերպով, Մամբրեն հաշտվեց ժամկոչի և նրա կնոջ հետ, ներողություն խնդրելով: Մր. Եյմանից ստացած շորերը նվերտվեց մի գյուղական վարժապետի, բաց արավ իր նախկին կրպակը, բեխերն ստացան առաջվա պատկառելի ձևը և յերախտագիտությամբ ընդունեց իր նախկին հաճախորդներին:

Յերբեմն, յերբ չար կատակի համար, նրան պարոն Մամբրե եյին ասում՝ Մամբրեն խնդրում եր. «Մը՛ սե՛ք, մարմինս փուշ փուշ կըլլի»:

ԺԴ

Մենք մի ազգական ունեյինք, շատ հեռավոր ազգական, վորին Մանուկ փեսա եյինք անվանում: Ցեվ վո՛չ միայն մենք, այլ վողջ քաղաքը նրան Մանուկ փեսա յեր կանչում:

Մանուկ փեսան չափազանց նիհար, վոսկրոտ, բարձրահասակ, շատ փոքրիկ, կապույտ և խորն ընկած աչքերով մի մարդ եր: Նրա աչքերն այնքան եյին փոքր, վոր հորաքույրս ասում եր—«մախաթով են ծակել»:

Ամեն անգամ յերբ Մանուկ փեսան հայտնվում եր մեր տանը (պետք ե ասել, վոր շատ քիչ եր գալիս), տան հասակավորները խեթ աչքերով եյին նայում և նրանից բացարձակապես ֆիզիկական սարսափ եյին զգում:

Հորաքույրս միշտ ասում եր.

— Գեորպե գեոռը եկավ…

Մանուկ փեսան կարևորություն չեր տալիս այդ խոսքերին և նայվածքներին, ընդհակառակը, քթի տակ մանրիկ ժպտում եր և՝

— Հը՞, ինտո՞ր եք, աղե՞կ եք,—հարցնում եր:

Վո՛չ վոք չեր պատասխանում:

Յերկար լռությունից հետո հորաքույրս թե՝

— Մանուկ փեսա՛…

Մանուկ փեսան անմիջապես ընդհատում եր, վորովհետև հորաքրոջս սկսած տոնից նա գիտեր թե ինչ պետք ե ասի:

— Խոսքդ չեքերով կոտրիմ, մի՛ խոսա…

Ցեվ հորաքույրս լռում եր, չեր ել կարող չլռել, վո-

րովհետև Մանուկ փեսան կարող էր շատ «վրան բաց» սրախոսություն անել: Հորաքրոջս լռելուց հետո՝ Մանուկ փեսան սկսում էր զբաղվել մեզնով— մանուկներով:

Մենք Մանուկ փեսային շատ եյինք սիրում, վորովհետև նա անվախ մարդու համբավ ուներ և մեզ պատմում էր հերոսական պատմություններ:

— Թիփի՛, բո՛ւք-բորան, լերան ծերն ենք, գելերը մեզ շրջապատեցին...

Յեվ այսպես անվերջ պատմություններ, վորոնք մեզ հափշտակում եյին: Յերբ ընդհատում էր, բոլորս միասին՝

— Ամա՛ն, Մանուկ փեսա, վոտքդ պագնինք...

Յեվ նա շարունակում էր յեռանդով և վոգևորությամբ:

Պատմած ժամանակ աչքերը մի քիչ մեծանում եյին, այնքան մեծանում, վոր կապույտը պարզ յերևում էր:

Կամաց-կամաց մեզ համար էլ պարզվեց Մանուկ փեսայի «գեռուպե գեռո» լինելու միստերիան:

Մանուկ փեսան վո՛չ խանութ ուներ և վո՛չ էլ արհեստով էր զբաղվում, բայց ապրում էր բավականին բարեկեցիկ: Յերբ ասում եմ՝ արհեստ չուներ՝ ուզում եմ ասել սովորական արհեստ չուներ: Նրա արհեստը թուրք մեռելներին քաշել դուրս բերելն էր գերեզմանից: Ինչպե՞ս էր անում այդ: Թուրք մեռելները փաթաթված եյին լինում պատանքի (քեֆին) մեջ և այդ քեֆինը սովորաբար լինում էր թանկագին մետաքսից կամ վորևէ թանկագին կերպասից: Նա զբաղվում էր քեֆին ծախելով:

Յերևակայեցեք մի մարդ, վոր գիշերը, մեն մենակ, մտնում է թրքական գերեզմանոցը, մոտենում է նոր թաղված գերեզմանին, բաց է անում, կռանում ներքև, գրկում մեռելին, քաշում, վեր բարձրացնում, ձգում գետնին, քեֆինը քանդում, մեջքին փաթաթում, մեռելը դնում տեղը, վրան ծածկում, այնպես վոր առավոտյան նշմարելի չլինի, ապա մոտենում պարսպին,

բարձրանում և ցատկում փողոց, քայլում տուն և հանգիստ քնում:

Այս գաղտնիքն իմանալուց հետո՝ մեր աչքին Մանուկ փեսան ավելի հերոսական դարձավ, թեև մենք էլ սկսեցինք ֆիզիկական սարսափ զգալ նրանից:

Յերբ նրան խրատում եյին, վոր ձեռք քաշի այդ

արհեստից, գեթ հասակն առնելուց հետո՝ նա պատասխանում էր.

— Շատ ռահաթ գործ ունիմ...

Մանուկ փեսան մի ուրիշ հատկություն էլ ուներ— նա կարող էր ամենաբնական կերպով հաջել: Յեվ այդ հատկությունը նրան շատ անգամ էր փրկել բռնվելուց: Յերբ վոտի ձայն էր առնում գերեզմանը քանդած ժամանակ՝ սկսում էր հաջել և բոլորը փախչում եյին սարսափած: Մինչև անգամ գերեզմանոցի դիմացի աներում ապրող հայերը, յերբ կես գիշերին հաջոց եյին լսում, բոլորը սարսռում եյին, խաչակնքում և փսփսում.

— Մանուկ փեսան գեռ կրանա կոր, վո՛ւյ, մայրիկ աստվածածին...*):

*) Ըստ մահմեդական սովորության՝ մեռելներին գերեզմանափոսում նստեցնում են, առանց հողով ծածկելու, միայն վրան են ծածկում հողով և փայտով: Շները հեշտությամբ կարող եյին մտնել և դիակն ուտել, բայց վոչ վոք չեր մոտենում, վորովհետև շները հարձակվում եյին:

Ցերեկը, յերբ փողոցից անցնում եր հուղարկավոր թափորը, Մանուկ փեսան դիտում եր լուսամուտից, մանրիկ ժպտում և ցինիկորեն ասում․

— Վա՛յ, հաջի Մուստաֆաս մեռեր ե, աստուծո քով կերթա կոր, թող երթա, բարի ճանապարհ, ես մեյ մը չըլըըխցնեմ դե, թող անանկ երթա։

Ցեվ պառկում եր, քնում, վորպեսզի գիշերն աշխույժ զգա իրեն։

* * *

Մանուկ փեսան մի եշ ուներ։ Այդ եշը յերկար տարիներ ծառայել եր նրան, ծերացել եր, այլևս անպետք եր և ուզում եր ծախել։ Շատերն ասում եյին, վոր «ազատ ըրե», բայց Մանուկ փեսան ցանկանում եր ծախել։ Ազատ անելն էլ այն եր, վոր անտերներին թողնում եյին բաց դաշտը, իր համար արածում եր, պառկում, վեր կենում և մի օր էլ սատկում։

Մանուկ փեսան եշը ծախեց։ Բոլորն էլ զարմացան։ Հայրս ասաց․

— Եդ եշն առնողն ինքն ե եշը։

Վաճառքից ութ օր հետո՝ եշը գնողը դիմեց դատարան՝ վաճառքը չեղյալ համարելու համար։ Գնողը դատարանում պատճառաբանեց, վոր եշը գարին չի կարող աղալ, ինչպես ուտում ե, այնպես էլ դուրս ե գալիս, և ուրեմն շուտով պետք ե սատկի։

— Փողոցի հավերուն կե՞ր տի տամ,— ասում եր գնողը։

Դատը լսողները բոլորն էլ կարծեցին, վոր Մանուկ փեսան խրվեց, ի՞նչ կարող եր պատասխանել, բայց Մանուկ փեսան պատասխանեց․

— Իմ ծախածը ջաղաց չե, եշ ե։

Դատարանը գտավ, վոր գնողի պատճառաբանությունն անհիմն ե և վորոշեց իրավունք չտալ վաճառքը չեղյալ համարելու։

ԺԵ

Հին հռովմեական այդ ճանապարհի վրա այլազան և տարօրինակ եր կյանքը—և ամենատարօրինակը Ամերիկայից վերադարձած մարդիկն եյին— ամերիկահայեր,—վորոնք իրենց հետ բերել եյին միայն արտաքին տարազ, մի քանի անգլերեն բառեր և ծամածռված բերաններ։ Վոչ միայն անգլերեն խոսելիս, այլ մինչև անգամ հայերեն խոսելիս՝ նրանք ծամածռում եյին իրենց բերանները։

Օրինակ՝ մեզ շատ ծանոթ Եչ Օհաննեսը, վոր Ամերիկայից վերադարձին չգիտեմ ինչու դառել եր պարոն Հովհաննես, հայերեն խոսելիս, կարծես, մայրենի լեզուն ծաղր եր զգում—ինչ վոր կարծես բերանում մի տաք բան եր լղճորում։

— Ընքան ինկիլիզճե գիտե, վոր փեզեվենկի տղան հայերեն անգամ ինկիլիզճեյի պես կխոսա…— ասում եյին միամիտ տեղացիները։

Ցեվ անգլերեն լեզվի մասին գաղափար կազմելով միայն տգետ ամերիկացի միսիոնարներից և ամերիկահայերից՝ յես ատում եյի այդ լեզուն։ Հետագայում, յերբ ինձ վիճակվեց տիրապետելու անգլերենին և ամերիկյան կրթություն ստանալու՝ համոզվեցի, վոր Շեյքսպիրի, Դիկկենսի և Բայրընի լեզուն խոսելու համար ծամածռություններ հարկավոր չեն ։

Բայց ամերիկահայերի ծամածռությունները տևում եյին միայն մի քանի տարի— հենց վոր Ամերիկայից

բերած հագուստները մաշվում եյին և տեղականով փոխարինվում՝ լեզուն էլ մաշվում եր և փոխարինվում մայրենի լեզվով: «Ջեմ կըրնաաարըր» միմոսական ձևը դառնում եր պարզ և մարդավարի «չեմ կրնար»-ի:

Ամերիկայից վերադարձողները հատկանշական եյին և մի ուրիշ բանով—ունեյին վոսկե ատամներ: Չկար վո՛չ մի ամերիկահայ, վոր վոսկե ատամ չունենար—բացարձակապես:

Յեվ այդ վոսկե ատամը մեզանում բոնտոն եր համարվում: Յեվ վորովհետև նրանք վոսկե ատամ ունեյին՝ կարողացան ձեռք ձգել սիրուն աղջիկներ կնության համար: Նրանց 99 տոկոսը դարձավ արժանավոր միայն վոսկե ատամների համար: Իմ մեծ քույրս զոհ գնաց մի վոսկե ատամնավորի... Բայց յես չեյի ուզենա պատմել այս պատմությունը, դա ինձ մորմոքում ե, այդ հիշողությունն այրում ե իմ սիրտը:

Եշ Ովաննեսը (պարոն Հովհաննեսը) յերկու վոսկե ատամ ուներ վերին ծնոտի առաջամասում: Այդ բոլոր յեկողների մեջ պարոն Հովհաննեսը չկարողացավ աղջիկ գտնել, վորովհետև նախ չափազանց դերագնահատեց իր վոսկե ատամները և սկսեց շատ բարձրերը քիթը խոթել և ապա՝ պարզապես եշ եր:

Եշ Ովաննեսի վերադառնալուց մի քանի տարի հետո՝ նրա դեմքի վրա նոր ծալքեր ավելացան, վորովհետև միշտ ծիծաղում եր՝ իր ատամները ցույց տալու համար: Յերբ ծիծաղում եր՝ վոսկե ատամները շատ լավ յերևում եյին, դրա համար վորդեգրեց միշտ ծիծաղելու անճոռնի մի սովորություն: Միշտ ծիծաղելուց դեմքի վրա առաջացան արհեստական ծալքեր:

— Պարոն Հովհաննես, հա՞ց ես առեր,—հարցնում ե մեկը:

— Հա՛, հաց առեր եմ, հի՛, հի՛, հի՛, հի՛,—ծիծաղում եր անշնորհք կերպով:

— Ի՞նչպես ես, պարոն Հովհաննես:

— Աղեկ եմ, հի՛, հի՛, հի՛,..

Մի շատ պարզ բան—օրինակ՝ մեկն ասում եր, վոր անձրև ե գալիս·

— Հա՛, աղեկ կուգա, հի՛, հի՛, հի՛...

Յեվ այսպես վերջ չուներ այդ անճոռնիությունը:

Եշ Ովաննեսը մեռավ: Ամբողջ յերկու ժամ, ինչ վոր փորացավից, բղավեց, բղավեց և մեռավ:

— Եշը չի կերած խոտն ե կերեր, չի մարսեր,—ասում եյին:

Մեռնելուց հետո շրթունքները փակվել եյին և, բնականաբար, վոսկե ատամները չեյին յերևում: Նրա ազգականները վորոշեցին, վոր թաղմանը վոսկե ատամները անպայման յերևան: Ինչքան շրթունքները բաց եյին անում, նորից փակվում եյին: Ազգականներն ընկան տուրջ մտահոգության մեջ:



Ինչպե՞ս անեյին, վոր վոսկե ատամները յերևային:

— Հըպը ոսկի ատամներն ըլ չերվա՞ն,— հարց եր տալիս մորաքույրը:

Շատերին հարցրին, վո՛չ վոք չկարողացավ մի միջոց ցույց տալ: Վերջապես հանգուցյալի ազգականներից մեկը գտավ ճարը— յերկու լուցկով հեռացրեց շրթունքներն իրարից և լուցկիները ծածկեց բեխերի ծայրերով:

Թաղմանը նրա պառավ մորաքույրը լաց էր լինում և աղաղակում.

— Վա՜յ, ես քու ոսկի ակռաներուդ ղուրբան ըլի՜մ...

Ցեվ էչ Ովաննեսը, շրթունքները բաց, կարծես ծիծաղում էր յերկնքի ջինջ կապույտի դեմ:

* * *

Ամերիկահայերը վերադառնում եյին յերբեմն «կուլտուրական» հիվանդություններով (սիֆիլիս և այլն), և նրանցից վոմանք էլ չեյին մոռանում իրենց նախկին ֆեոդալական սովորությունները:

Մեզ հարևան էր մի ընտանիք—մայր, վորդի և աղջիկ:

Ասում եյին, վոր այդ ընտանիքն ունեցել է և հայր, վոր վաղուց գաղթել էր Ամերիկա: Նրա գնալուց յերկու ամիս հետո յեր ծնվել նրա վորդին՝ Հովսեփը: Հովսեփի հայրը Ամերիկա գնալուց հետո գրել էր մի թե յերկու նամակ և ապա լռել: Մայրը լվացք անելով, ուրիշների դռներն աշխատանք կատարելով՝ մեծացրել էր աղջկան և վորդուն՝ մինչև վերջինները դպրոցն ավարտելով՝ ուսուցիչներ եյին դառել և ազատել իրենց մորը ֆիզիկական տառապանքից:

Նրանք ապրում եյին չափազանց համեստ, բայց յերջանկությամբ արևված մի կյանք:

Մի որ այս ընտանիքում հայտնվեց մի մարդ—կռացած մեջքով, սպիտակած մազերով, նիհար, վոսկրացած, անվերջ հազով:

Աղջիկը և վորդին չեյին ճանաչել այդ մարդուն, բայց մայրն ասել էր նրանց, վոր այդ մարդը ձեր հայրն է:

Քույր և յեղբայր ընդունեցին նրան սառնասրտությամբ, բայց պատշաճ հարգանքով, թեև ամբողջ 18 տարի նա տեր չեր յեղել իր զավակներին և կնոջը, մատնելով նրանց թշվառության:

Զանցավ մի քանի որ, մի առավոտ մեր թաղում տարածվեց մի ահավոր լուր—«Հովսեփը սպանել է հորը»: Իսկապես մի քանի րոպեյում ստուգվեց լուրը: Հովսեփը սպանել էր հորը յեղերական մահով՝ խողխողել էր նրան, գլուխը պատին տալով և ջարդելով:

Վորքան վոր լուրը ստուգվեց, բայց անհավատալի յեր թվում Հովսեփին ճանաչողների համար, վորովհետև Հովսեփը վերին աստիճանի բարի, խելոք և հանդիստ բնավորությամբ մի յերիտասարդ էր: Նա վոչ թե հորը, այլև մի աքլորի անգամ չեր կարող սպանել:

Հովսեփին տարան բանտ, և մի ամիս հետո տեղի ունեցավ դատավարությունը:

Բայց մինչև դատավարությունը՝ շատ բան պարզվեց և գրեթե ամբողջ քաղաքը վոտի կանգնեց՝ Հովսեփին պաշտպանելու: Հավաքվեցին հանրագրություններ և դատարանին մատուցվեցին բազմաթիվ խնդրագրեր, մի քանի փաստաբաններ ձրի տրամադրեցին իրենց ծառայությունը, բայց Հովսեփը մերժեց փաստաբաններին՝ ասելով, վոր ինքը պետք է պաշտպանի իրեն:

Վոճիրը տեղի յեր ունեցել հետևյալ պայմաններում: Հովսեփի հայրը, պարոն Ջոնը (Ամերիկայում Հովհաննեսը դառել էր Ջոն) վերադարձի առաջին իսկ որը սկսում է կշտամբել կնոջը, վոր իբր թե իր բացակայության (18 տարի) նա անբարոյական կյանք է վարել, յեղել է ինչ վոր (բոլորովին անհայտ) մարդկանց հետ: Հովսեփը և քույրը միջամտել են, վոր իրենց մայրը յեղել է շատ պատվավոր մի կին, գտնվել է թշվառ և անոգնական մոր բարոյական բարձրության վրա, և մինչև անգամ յեթե նա չի յեղել այդպիսին, պարոն Ջոնն իրավունք չունի դատապարտելու կնոջը, քանի վոր ինքը յերկու զավակները թողել է նրա վզին և հեռացել՝ առանց վորևէ կապ պահպանելու, կապ չի պահպանել վոչ միայն դրամական օգնություն չուղարկելով, այլև գլացել է մի «չոր նամակ»:

Բայց պարոն Ջոնը համառել է, ինչ վոր տեղեկություններ է ունեցել և ուզում է պատժել կնոջը: Ամբողջ

յերկու–յերեք որ աղջիկը և տղան ջանացել են համոզել համառ և անամոթ հորը, բայց համառ և անամոթ հայրը քաշել է յերկաթե հարթուկը, նետել է կնոջը՝ գլուխը ջախջախելու համար, բայց բարեբաղդաբար դիպել է վոտի մատին:

Այս յեղելությունից հետո էլ՝ զավակները չեն կորցրել իրենց և շարունակել են հորդորել, բայց պարոն Ջոնն այնքան է առաջ գնացել, վոր քաշել է Ամերիկայից հետը բերած ատրճանա՛կը...

Հովսեփը կծկել է հորն իր ուժեղ թևերի մեջ, ձեռքից խլել է ատրճանակը և յերկու ժամ ծեծելով, գլուխը խփելով պատին՝ սպանել է կյանքումն առաջին անգամ հանդիպած համառ և անամոթ հորը:

Այս բոլորը պարզվելուց հետո՝ վողջ հասարակական կարծիքը զինվեց սպանվողի դեմ՝ պաշտպանելու մի անմեղ կնոջ և մի անմեղ վոճրագործի:

Դատարանում Հովսեփը միայն պատմեց իր թշվառ մոր պատմությունը: Այդ պատմությունն այնքան սրտառուչ և ցնցող եր, վոր արցունքներ կորզեց թե դատավորներից և թե հանդիսականներից, պատմեց թե ինչպես մայրը գիշեր և ցերեկ լվացք է արել, այդ լվացքից մոր փափկացած մատներից արյուն է կաթկթել, պատմեց թե քանի–քանի հարուստ և յերիտասարդ մարդիկ նրա ձեռքը խնդրել են և նա մերժել է, վորպեսզի իր զավակները չճաշակեն խորթ հոր դաժանությունները, և ահա, այս բոլորից հետո՝ ինչ վոր մի անծանոթ մարդ, ինչ վոր մի պարոն Ջոն, յեկել է իրենց տունը՝ յերջանկության բաժակը լցնելու դառնությամբ:

Թրքական դատարանն ազատ արձակեց Հովսեփին:

Յերբ Հովսեփը դատարանից տուն յեկավ՝ մայրը գրկեց նրան, վողողեց արցունքներով և ասաց.

— Ի՞նչ կըլլեր, մարդավարի ապրեր մըզի հետ:

Հովսեփն այլևս չուզեց մնալ հին քաղաքում, վերցրեց մորն ու քրոջը և հեռացավ, գնաց ուրիշ քաղաք, ազատվելու համար այն շրջապատից, վոր նրան միշտ հիշեցնում եր կատարված ահավոր տրագեդիան:

ԺԶ

Բաց արի «Արևելյան Մամուլ» շաբաթաթերթը, վոր հրատարակվում եր Զմյուռնիայում, բաց արի հենց պոստի պատուհանի առաջ, վորտեղից մենք ստանում եյինք մեր նամակներն ու թերթերը (նամակները տուն բերելու սովորություն չկար) և կարդացի իմ անունը մի վոտանավորի տակ: Ինձ թվաց, մինչև հիմա էլ ինձ թվում է, վոր իմ այդ ստորագրությունը տպված եր վոսկյա տառերով: Ինձ թվաց նաև, վոր իմ վոտները կտրվեցին գետնից, մի սավառնում զգացի, ինչ վոր թռիչք:

Յես վաղուց եյի հափշտակվել բանաստեղծությամբ, կարդում եյի և գրում մեր դպրոցի ձեռագիր և խմորատիպ թերթերում, ինչպես էլ խմբագրել եյի մեկ յերկու ձեռագիր ամսաթերթ, բայց դեռ չէյի տպադրվել: Մայրս, յերբ տեսնում եր ինձ իմ փոքրիկ սենյակում գիշերները կարդալիս և գրելիս, ասում եր, «Ելի՛ր, պառկե՛, յավրուս, մեր ճինսեն Պողոս–Պետրոս չելլար»: Պողոս–Պետրոս ասելով՝ գրող ուզում եր ասել: Այդ վոտանավորի տպագրվելուց հետո յես չհպարտացա, միայն մի քիչ և մի առժամանակ, չգիտեմ ինչու՝ լրջացա, միայն մայրիկիս ասացի. «Տեսա՞ր, կըսեյիր քի մեր ճինսեն Պողոս–Պետրոս չելլար, ելավ»: Իհարկե, մայրս չեր կարող գնահատել իմ գրվածքները, բայց խորագույն հարգանք ունենալով դեպի տպագրված տառը, ժպտաց և համբուրեց ինձ:

Իմ փոքրիկ սենյակը․․․Այդ սենյակը գտնվում էր յերկրորդ և յերրորդ հարկի մեջտեղում, առանձին սանդուխով, փոքրիկ, շա՜տ փոքրիկ սենյակ էր, լիքը գրքերով (բացառապես վոտանավոր) և պատկերներով։ Յերկու փոքրիկ լուսամուտները նայում եյին յերկրորդ հարկի կտուրի վրա, ամբողջ հորիզոնն էր դիմացի հարևանի թթենու գագաթը և տերևների միջից յերևացող կապույտը։ Այդ փոքրիկ սենյակում յես գրել եմ իմ առաջին տպագրված վոտանավորը, այդ սենյակում կարդացել եմ Դուրյանը և լաց յեղել, հուսկ ապա կարդացել եմ Մեծարենցը։

Մեծարենցը գավառական պատանեկության պաշտամունքի առարկան էր։ Մենք ատելությամբ հետևում եյինք նրա դեմ սկսված պայքարը թեթևսոլիկ, անարժեք գրողների կողմից, նամակներ եյինք գրում Միսաքին գոտեպնդելու համար։ Յես ստացա «Նոր Տաղեր»-ը Միսաքից նվեր։ Այդ նվերից հետո՝ ճիշտն ասած, հպարտ եյի զգում ինձ։ Ժամերով նայում եյի Միսաքի լուսանկարին և հափշտակվում, ժամերով կրկնում— «Ու կը փոթի ծվակն հոգվույս մեղմավար»։ Շատ եյի ուզում նրան նմանվել մորուք թողնելով, բայց, ավա՜ղ, դեռևս աղվամազ անգամ չեյի շոշափում յերեսիս վրա։ Ցանկացա, վոր իմ առաջին գիրքս տպվի «Ծիածան»-ի նման, միևնույն թղթով, ձևով, չափով, միևնույն տպարանից։ Այդպես էլ յեղավ։ Բայց, ելի ավա՜ղ, վո՛չ մի տպավորություն չթողեց, այն ժամանակ միայն յես զգացի, վոր գոյություն ունի ինչ վոր ներքին մի բան, վոր արտացոլվում է տպագրության մեջ, գոյություն ունի ինչ վոր մի բան, վոր Դուրյանն ուներ, Մեծարենցն ուներ, բայց յես չունեյի։ Բանաստեղծություններ իմ առաջին գրքույկը ինձ համար մի արժեք ունի— նվիրված է Միսաք Մեծարենցի գերեզմանին։ Նվերն անարժեք էր, բայց այն ժամանակվա իմ ամբողջ սիրտն էր։

Տարիներ հետո, յերբ Պոլսում յես կռացա Միսաքի ցուրտ շիրիմը համբուրելու, ինձ թվաց, վոր Միսաքը

խոսեց ինձ հետ, խոսեց արևի համար տածած բուռն կարոտով։

Գույների այս հնաշխարհիկ յերգիչը քնում էր անգույն մի տարածության մեջ։

Միսա՛ք, արդյո՞ք վոչ մի կապույտի վրա չեն հառում քո աչքերը։

Այժմ յես մեծացել եմ, դարձել եմ չափահաս, դու մնացիր պատանի։ Այժմ, իմ չափահասի ձեռքերով և չափահասի խորին գուրգուրանքով, շոյում եմ քո պատանի, չքնաղ գլուխը և արցունքներս վազում են քո յերգերի վրա։

Յերբ մրսում եմ այս աշխարհում, մե՛ծ պատանի, գրկում եմ քո յերգերը և ահա արևը, քո յերգած արևը, սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ կաթիլ։

ԺԷ

Մենք ունեյինք և Թուրք հարևաններ:

Շեմսին, մեր Թուրք հարևանի վորդին եր, վորի հետ մենք հասակակից եյինք, գրեթե միասին եյինք մեծացել: Մեծացել եյինք յերկու յեղբոր պես—իրար վեգ եյինք տվել, տնից վերցրած քաղցրավենիներ եյինք հյուրասիրել իրարու, միասին լողացել և միասին կմչտել նրա մեծ քրոջը—իրենից յերկու տարով մեծ—լացրել նրան միասին:

Սանիեն, նրա քույրը, կարծես յեթերից եր հինված, այնքան թեթև, այնքան սպիտակ և վոսկեգույն եր, հակառակ իր յեղբոր թուխ մորթին, սև մազերին, հոնքերին և մանավանդ սևասև աչքերին:

Նրանց պարտեզում կար մի մեծ ակացիայի ծառ: Յես նրան շատ եյի նմանեցնում ակացիայի սպիտակ ծաղիկին:

Սանիեն մի քիչ քթից եր խոսում—ինչ վոր ընկել եր փոքրիկ յեղած ժամանակ և վնասվել—բայց ինձ չափազանց դուր եր գալիս այդ քթի միջից խոսելը, այնքան եր դուր գալիս, վոր ուզում եյի բոլոր աղջիկներն ել քթից խոսեյին: Սանիեն առաջին աղջիկն եր, վորի մարմնի ամենափափուկ տեղերին դպել եյին իմ մատները, հաճույք եյի զգացել և կարծում եյի, վոր իսկական կինը պետք է քթից խոսի, վորպեսզի ինձ հաճույք պատճառի:

Շեմսիի համար այդպես չեր, նա անընդհատ ծաղրում եր Սանիեյին, վոր քթից եր խոսում: Յեվ Սանիեն ինձ մոտենում եր անսահման ջերմությամբ, զգալով, վոր, ընդհակառակը, ինձ դուր եր գալիս իր ծաղրի առարկա պակասությունը, և թողնում եր, վոր իմ ձեռքերս ազատորեն պտտցնեմ իր մարմնի բոլոր մասերի վրա:

Իսկ այդ մարմինն ինչքա՛ն մասեր ուներ...

Ամեն անգամ յես նրա մարմնի մեջ գտնում եյի ինձ համար բոլորովին անծանոթ մի վայր, ավելի և ավելի փափուկ և սպիտակ, ավելի սարսուռ և հոտավետ:

Նման հեռավոր և անծանոթ յերկրի, նման մթին և Թավշյա Թավուտների՝ յես ամեն վայրկյան գտնում եյի մի նոր և նորագույն բարձունք կամ խորություն, մի նոր և անսովոր սարսուռ: Յերբ մի նոր խորշ կամ մի նոր ծալք, կամ մի բարձունք եյի գտնում, ինձ թվում եր, վոր ե՛լ նորը չկա, հասել և տիրել եմ արդեն անծանոթ և գլխիչ յերկրամասի բոլոր կետերին:

Վոչ:

Ելի նոր ծալքեր, ելի մի փոքրիկ ուռուցք, ելի մի Թավշյա, սպիտակ, փոքրիկ, բայց անհո՛ւն մի տարածություն...

Գծեր, վոր վազում են, կլորություններ, վոր ալիքավորվում են և բարձրանում: Հետևում եմ մի գծի—գնում է, դառնում, վոլորվում, Թավալվում և հանկարծ անեանում մի սպիտակ և հղկված մարմարյա դաշտում: Գնում եմ անծանոթից ավելի և ավելի անծանոթը, ահա պետք է հասնե՞մ...

Ինձ թվում է, վոր ահա պետք է պարզեմ ամբողջ մթին անծանոթը... Պիտի լինի առավոտ, պիտի հոսի արեգակի կաթը աշխարհի վրա, բայց Սանիեն չկա, վազել է պարտեզի կեռասենիների տակ, ծիծաղում է...

Պոկել եյի առասպելական ծաղիկի հազարավոր թերթերը, բայց դեռևս պետք է պոկեյի հազար հազարավոր թերթեր՝ հասնելու համար ծաղիկի հոգու հոգուն:

Ծիծաղում է Սանիեն:
Կարկաչում է յերկինքներից հոսող կապույտ առո՜ւն...

* * *

Բայց յերբեմն յես և Շամսին կռվում եյինք իրար հետ: Կռվում եյինք առանց պատճառի:

Նա ինձ հանկարծ անվանում եր «կյավուր*)», իսկ յես անմիջապես նրան անվանում եյի «իթ»*):

Այս բառերը մենք սովորել եյինք մեր տներից և դպրոցներից: Բոլոր Թուրքերը հայերին կյավուր եյին անվանում, և բոլոր հայերը Թուրքերին՝ իթ:

Հորս մոտ գալիս եյին Թուրքեր, արժանանում եյին մեծագույն հյուրասիրության, բայց յերբ գնում եյին, սիրալիր և հարգալից վողջույններով բաժանվում, հայրս նրանց յետևից մրթմրթում եր «իթլեր»:

Իհարկե, յերբ հայրս եր դուրս գալիս մի չափազանց հարգալից հյուրասիրությունից՝ նրա յետևից Թուրքերը մրթմրթում եյին— կյավուր:

Կյավուր և իթ անհավատ և շուն—չեյին կարող ապրել իրար հետ:

Վորևէ Թուրք, յերբ ինձ կյավուր եր անվանում, յես ինքնաբերաբար իթ եյի անվանում փոխադարձ, բացի Սանիեյից:

Սանիեն ակացիայի ծաղիկն եր, վոր բուրում եր գարնանային զով գիշերում:

Յերբ ձերբակալված և շղթայակապ մի հայու կամ մի խումբ հայերի անցկացնում եյին փողոցից դեպի բանտ, հայերը գլխիկոր անցնում եյին, իսկ Թուրքերը կանգնած, հրճվում եյին, խնդությամբ լցվում:

Իսկ յերբ մի Թրքական դագաղ եր անցնում փողոցից, հայերը, աչքերը դեպի յերկինք հառած, մրմնջում եյին «Փա՜ռք քեզ աստված»: Ուրախանում եյին, վոր մի Թուրք պակասել է:

---

*) Անհավատ:
**) Շուն:

Ինչո՞ւ յեր այդպես—յես չեյի ըմբռնել, և առանց հարցուփորձի, իմ մեջ խորացավ ատելություն դեպի «շները», և Շեմսիի մեջ աճեց ատելություն դեպի «կյավուրները»:

Սանիեն անհետացավ վանդակապատ լուսամուտների յետև, մի դաժան ամպ յեկավ և ծածկեց արծաթյա լուսինը, և յես չկարողացա պարզել բուրավետ, զգլխիչ և ծաղկավետ անծանոթը, ինձ անծանոթ մնացին անհունորեն Թագուն ծալքեր, գծեր, Թավշյա տարածություններ, յես չկարողացավ տիրել ամբողջ մարմարյա դաշտին:

Սանիեն անցնում եր մեր դրան առաջից՝ փաթաթված մի մանիշակագույն ամպով, իմ աչքերը մխրճվում եյին նրա չադրայից ներս և Թափառում անծանոթ յերկրի աստղաբորբ Թագստոցներում:

* * *

Ամեն առավոտ և ամեն յերեկո վանդակապատ լուսամուտից մի աչք է նայում ու մի ձեռք է յերկարում դուրս և մի ծաղիկ նետում վոտներիս տակ:

Վանդակապատ լուսամուտը մեր դռնից մի քանի դուռ ներքևում է, պատկանում է մի Թուրք կրոնավորի:

Ուրբաթ օրերը նա վո՛չ մի քրիստոնյայի չի բարևում և այդ օրը վո՛չ մի քրիստոնյայի բարևին չի պատասխանում:

Բայց ուրբաթ օրն էլ միևնույն ձեռքը, փափուկ, ինչպես առավոտի հասմիկը, յերկարում է դուրս, մի ծաղիկ նետում և քաշվում ներս:

Վանդակապատ լուսամուտից լսվում է նրա մեղմ ծիծաղը, ուրախության զսպված ճիչը:

Թուրք կրոնավորի յերրորդ կինն է, պատանի մի աղջիկ, բանտարկված վանդակների մեջ:

Իմ մեջ բոցավառվում է մի կարոտ, ուզում եմ տեսնել նրան, խոսել հետը:

Վերցնում եմ նետած ծաղիկը, տանում եմ տուն, հոտոտում եմ անվերջ: Այդ ծաղիկից անցնում է իմ հոգուն մի անիմանալի դող, խայտանքով լեցուն մի սարսուռ:

Կրոնավորը վաթսունն անց է, կռացած մեջքով, չար, դեղին աչքերով: Ածիլում է ցցված այտոսկրները, միրուքը կլորում, հինայում: Ամեն դուրս գալուն խըստիվ պատվիրում է մյուս կանանց—հսկել Բահրիեյին, չթողնել լուսամուտի մոտ գնալ, ճանճ չպետք է անցնի տնից ներս:

Բայց Բահրիեն, գարունքից կրակված, միջոց է գտնում վոչ թե լուսամուտին մոտենալու, այլև ձեռքը դուրս հանելու ծաղիկը նետելու և շշնջալու.

— Վաղը պարտեզն իջի՛ր, քաֆթանները գնալու յեն,—լսեցի մի որ լուսամուտի յետևից:

Այդ ձայնը կարկաչեց իմ ականջին, զարթեցրեց իմ մեջ կինը...

Լսեցի ու անցա, բայց կարծես նա պոկեց սիրտս և լուսամուտի նեղ վանդակներից քաշեց ներս:

Հեռացա, բայց ձայնը շարունակեց հնչել իմ հոգում, ավելի և ավելի ուժգին:

Կարծես արևն եր ճչում:

Կանգ առա մի ծառի շվաքի տակ, արևը ծաղիկներ է հյուսել գետնի վրա, տեսնում եմ Բահրիեյին այդ հյուսվածքի մեջ, հովը շնկշնկում է տերևների մեջ—Բահրիեն է խոսում.

— Վաղը պարտեզն իջիր...

Գիշերը կանգնեցի կտուրի վրա, ակացիայի ճյուղերը կռացել են, լուսինը ճիշտ մեր կտուրի վրա, Բահրիեյի դեմքն եմ տեսնում լուսնի վրա—խոշոր, սև աչքերով, մազը կարճ կտրած, թափվել է ճակատի վրա: Ժպտում է:

Առավոտյան բարձրացա մեր պարտեզի պատի վրա, ցատկեցի հարևանի պարտեզը, շորերս թրջվեցին առավոտի ցողից: Պետք է յերեք պարտեզից անցնել, Բահրիեյի պարտեզը մտնելու համար:

Բարձրացա նրանց պարտեզի պատի վրա: Դողում եմ, բայց ինձ թվում է, վոր կարող եմ թռչել:

Բահրիեն տեսավ ինձ: Վազեց:

Յես ներքևումն եմ, ծաղկած նռնենու տակ, քիչ հեռուն գտնվող յեղրևանին ծածկում է ինձ: Բահրիեն յերևաց, կանգ առավ, հևում է, դողում, ձեռքը դրած ուռուած կրծքի վրա: Գրկեցի նրան, հարբեցի նրա բուրումից, այրվեցին շրթունքներս:

— Գնանք,—ասում է,—ներս գնանք:

Կրոնավորը գիշերով գնացել է հին քաղաքն իր յերկու կանանցով, ինչ վոր ժառանգական դատ կա, դրսի դուռը փակել են Բահրիեյի վրա, վոչ մի կասկած չկա, վոր նա կարող է դուրս գալ տնից:

Ձեռքս բռնած՝ Բահրիեն տարավ ինձ ներս, ննջարանը:

Փաթաթվում է, լաց լինում, ժպտում, համբու-

բում: Անկողինը դեռևս չի չինած, նոր է դուրս թռել միջից: Գրկեցի թարմ, պատանի աղջկան, թավալվեցինք անկողնու վրա: Հարբեցուցիչ է կնոջ բուրումը:

Այրեց ինձ կինն առաջին անգամ իմ կյանքում:

Վախը և առաջին ուրախությունը պաշարեցին ինձ, շղթայեցին և ընկղմվեցի առաջին հանցանքի քաղցրության մեջ...:

Երգեցին բոլորը, երբոր ճչացին խայտանքից:

— Բահրիե՛...

Անշարժ պառկած է, լռությամբ ապրում է մի քանի վայրկյանի դարավոր բերկրանքը:

— Գնա՛, շուտ հեռացի՛ր:

Սկսում է լաց լինել:

— Երեկոյան պիտի գան,—ասում է:

Նրա արցունքները խառնվում են յերջանկության կապույտ կաթիլներին:

Երևի ցցվում է նրա դեմ ծերունին—դեղին աչքերով:

Գալիս է մինչև ծաղկած նռնենին: Պոկեցի մի կարմիր ծաղիկ, խրեցի նրա կրծքի մեջ, բռնեցի ձեռքը, համբուրում եմ...

Բարձրանում եմ պատի վրա, լսում եմ նրա լացը և ուրախության հունչը: Բահրիեն կանգ է առնում մութ կանաչ յեղրևանու հովանու տակ, կարոտագին նայում:

Ցատկում եմ մյուս պարտեզը և հավիտենապես բաժանվում առաջին կնոջից:

* * *

Հաջորդ օրը յես հանդիպեցի Վերոնիկային, Քրիստինեյի հորեղբոր աղջկան: Վերոնիկան յերկնագեղ աղջիկ եր, խարտյաշ աչքերով, յեղնիկի նման թեթև և վարդի գույնով: Ամեն անգամ, յերբ յես նրան հանդիպում եյի, մերկանում եր իմ հոգին նրա առաջ, բայց այս անգամ իմ հոգին ծածկվել եր վարդագույն ամոթի

քողով: Ես չկարողացա նայել նրա աչքերի մեջ: Բռնեցի ձեռքը, համբուրում եմ ու լաց լինում: Ուզում եմ խոստովանել, բայց հոգիս չի մերկանում, յես ինքս կանգնած եմ իմ հոգու փակ դռների առաջ:

— Մայրիկդ հիվա՞նդ է,—անմեղորեն հարցնում է Վերոնիկան:

— Վո՛չ, մայրիկս հիվանդ չե:

Վո՛չ մի կերպ նա չի կարող գուշակել: Նա ման է գալիս դեռևս անմեղության կապույտ բլուրների վրա: Իհարկե, նրա կրծքում ևս շշնջում է բնությունը ինչ վոր դյութիչ, կախարդական յերգ, բայց հեռու յե իմ հանցանքը գուշակելուց: Վերոնիկան յերբեք, յերբեք չեր կարող պատկերացնել, վոր մի կին, մի ծաղկատի կին, բաց է արել իր մարմնի թաքուն գանձերը իմ առաջ վո՛չ միայն առանց ամաչելու, այլ բոցբոքալից կարոտով, կարոտովը գիշերը բացվող և լուսաբացի շողերին սպասող ծաղիկին:

Գնում ենք պարտեզի խորքը: Ծաղիկներ են ճզմվում մեր վոտների տակ, իսկ ծառներից մրգեր են կախվել: Վորոշում եմ, վոր յերբ հասնենք բարձր թթենուն, խոստովանեմ իմ հանցանքը, բայց յերբ հասնում ենք թթենուն, Վերոնիկան սկսում է վազել և աղաղակել.—«Ինձի բռնե՛»: Վազում եմ, չեմ ուզում շուտ բռնել, վերջապես բռնում եմ և մեր շրթունքները, անիմանալի ինչ վոր մղումից, փարվում են իրար: Բոլոր տերևները, թվում է, ծափ են տալիս, մրգերը յերգում են, իսկ պարտեզը, իբրև վոսկյա ծնծղա, թրթռում է:

— Վերո՛ն,—լսվում է ցածր:

Դառնում ենք: Քրիստինե: Մոտենում ենք: Քրիստինեն ամբողջ մարմնով դողում է: Հազիվ շշնջում է.

— Բենոն կուգա:

— Թո՛ղ գա,—ասում է Վերոնիկան և թևերը վեր բարձրացնելով, միրգ է քաղում: Նրա ստինքները կարծես ուզում են յերկինք թռչել:

Բենոն Վերոնիկայի յեղբայրն եր և իմ դասընկերը: Նրա մոտենալուց չեր, վոր Քրիստինեն դողում եր, նա դողում եր մեր համբույրից:

Բենոն մոտեցավ։ Միասին բարձրացանք թթենին։ Թութն այրվել է արևից, ցամաքել, քաղցրացել։

Վերոնիկայի գլխի վրա ես փշրվեց յերկնքի փիրուզը, փչեց անապատի մահաշունչ խորշակը և նրա մարմինը ծածկվեց ավազների տակ։

Միայն առավոտյան աստղը մի քանի կաթիլ արցունք թողեց նրա վրա, ապա յերեկոն իջավ արյունալից աչքերով։

* * *

Առավոտ։ Գորշ, մռայլ յերկինք, բայց ձյունն ամբողջ գիշերը թափվել է, ծածկել յերկիրը շուշաններով։

Պայուսակը կռնատակիս դուրս եմ գալիս տնից վազելու—դպրոց։ Շները վողջունում են իմ առավոտը։

Տեսնում եմ մարդիկ քայլում են արագ, լո՛ւռ, ահաբեկված աչքերով։ Մի կին է կանգնած առաջին փողոցի անկյունում, նրա աչքերում անդնդախոր լռություն կա։

Ընդհանուր լռություն է տիրում, կարծես ձյունը մի վիթխարի դագաղի սպիտակ սավանն է։ Բնազդորեն զգում եմ, վոր մի բան կա, վորը ինձ ահ է ներշնչում, այդ ահն աճում է, ինչքան առաջ են շարժվում քայլերս։

Մի տան լուսամուտի վարագույրը խորհրդավոր կերպով քաշում են ներսից, կարծես չեն ցանկանում, վոր օրվա լույսը թափանցի ներս։ Մեկը դուռը բաց է անում, յերկյուղալից աչքերով նայում է փողոցի վեր ու վար և փակում։

Հանդիպում եմ Գրիգոր աղային, դանդաղաշարժ մի մարդ, բայց աճապարում է։

— Ո՞ւր կերթաս,—հարցնում է։

— Դպրոց,—պատասխանում եմ։

Ուզում է մի բան ասել, բայց ձեռքը թափ է տալիս և անցնում։ Կարծես վազում է, յեզան նման այդ դանդաղաշարժ մարդը, կարծես փախչում է վերահաս վըտանգից։

Մի խումբ մարդիկ, կուչ յեկած, բայց արագ քայլերով աճապարում են քաղաքի մեծ հրապարակից։ Ուզում եմ մի բան հարցնել, բայց վո՛չ վոք գլուխը վեր չի բարձրացնում։ Արագ անցնում են։

Խանութները փակ են։ Վո՛չ կիրակի յե, վո՛չ ել ուրբաթ։ Մեկ-մեկ կիսաբաց խանութներ կան։ Ներս եմ նայում փեղկերից։

Մարդիկ նստած են անկյունները, կծկված, չեն խոսում, միայն ծխում են։

Վո՛չ վոք, վո՛չ վոք չի խոսում, նայում են ինձ մեկ-մեկ, ցավագին ժպտում։

Վորքան մոտենում եմ մեծ հրապարակին, այնքան խորանում է լռությունը։

Մի կին ահաբեկված դուրս է գալիս, չսանրած մազերով, գրեթե գիշերային շորերով, բռնում է տասը տարեկան մի մանկան ուսից և աճապարանքով քաշում ներս, դուռը փակում։

Հասնում եմ հրապարակը։

Հրապարակի մեջտեղում, ընդհանուր ձյունի սպիտակության մեջ, մի սև կույտ։ Չորս զինվոր փայլփլացող սվիներով, կանգնել են այդ սև կույտի բոլորտիքը, հատ-հատ մարդիկ, կծկված և ահաբեկված, մոտենում են, դիտում, աչքերը փակում և անցնում լո՛ւռ։

Մոտենում եմ։

Տեսնում եմ առանց մարմնի մի գլուխ։

Ձյան վրա արյունը սառել է, սևացել։ Գլուխը պառկած է, քնելու նման։

Դառնում եմ մյուս կողմը— թևերը ձյան մեջ խրըված մի մարդ— առանց գլխի։

Սառած մնացել եմ, վոտքերս չեն շարժվում։

Զինվորներից մեկը հրամայում է։

— Հեռացի՛ր։

Հեռանում եմ։

Առավոտյան, մինաշաղին, սուլթանական բռնակալությունը կտրել է յերկու հեղափոխականի գլուխ։

Մյուսը քաղաքի վերևի հրապարակումն է։

Առաջին անգամ տեսնում եմ չար բռնակալության պատկերը, զարհուրելի պատկեր։

Տխրեց իմ մանկան հոգին։

Ուզում եմ տուն դառնալ, բայց հրապարակի վերևում բարձրանում է մի աղմուկ։ Բազմություն։ Վազում եմ։

— Ֆուադ Բե՛յը, Ֆուադ Բե՛յը...

Ֆուադ Բեյը գեղեցիկ գլխով, խարտյաշ, յերազուն աչքերով մի Թուրք է, յերիտասարդ, լայնաճակատ, նրբակազմ, բայց առնական, հագնում է չերքեզի չորեր, քայլում է դանդաղ և հպարտ։ Ֆուադ Բեյը Պոլսից աքսորված Թուրք հեղափոխականներից մեկն եր, վոր աղմուկ եր բարձրացրել հեղափոխականների գլխատման համար։

Ահա բարձրացավ նա մի խանութի քարե աստիճանների վրա և խոսում է հավաքված բազմության։ Նա այլևս այն յերազուն աչքերը չունի, մոլեգին մի նայվածք, վսեմորեն վայրենացած, փափախը ձեռին, նրա խարտյաշ մազերը թափված են լայն ճակատի վրա։ Հազիվ կարողանում եմ լսել և հասկանալ մի քանի բառ—անկցի՛, և այլն։ Վրա են հասնում բռնակալության հավատարիմ վոստիկանները, պաշարում են Ֆուադ Բեյին, հրում, կապում ձեռքերը և քշում, տանում։

Բազմությունը, ահաբեկված, զարհուրած, ցրվում է։

Իջնում է նորից լռությունը՝ ծա՛նր, ծա՛նր։

Դառնում եմ տուն։ Բոլոր լուսամուտների վարագույրները քաշված են։

Ներս եմ մտնում։

Վո՛չ վոք չի խոսում։

Փաթաթվում եմ մորս։

Նա լո՛ւռ շոյում է գլուխս։

Խեղդում է ինձ այդ լռությունը։

Ուզում եմ ճչալ, բայց շղթայված եմ լռությամբ։ Ամբողջ քաղաքը դարձել է մի գերեզման։

Սրտիս մեջ յերբեմն լսվում է թնդյուն, խուլ արձագանքում և մարում։

Կտրված գլո՛ւխ... Չե՞ վոր միայն վոչխարի գլուխն են կտրում։

Ո՞վ է կտրել այդ գլուխները։

— Ահմեդ Ջավուշը, Ահմեդ Ջավուշը... շշնջում են։

Ահմեդ Ջավուշը դառնում է իմ աչքին այն առասպելական հրեշը, վորի մասին շատ եյի լսել, բայց յերբեք չեյի տեսել և չեյի էլ կարող պատկերացնել։

* * *

Մի անձրևոտ գիշեր դաշունահար սպանվեց մեր դպրոցի տեսուչ Հակոբ Սիմոնյանն իր տան առաջը գտնված փշենու ծառի տակ։

Առավոտյան լուրը կայծակի պես տարածվեց— Թուրքերը դաշույնի հարվածներով սպանել են Հակոբ Սիմոնյանին, Թուրքե՛րը, շնե՛րը...

Լուրն ինչքան տարածվում եր, ատելությունն այնքան խորանում եր և փրփրում։

Քաղաքի մի քանի փողոցներում արդեն ընդհարումներ եյին տեղի ունեցել հայի և Թուրքի միջև։ Թուրքերը անցնելիս՝ հայերը հայհոյել եյին— նրանց կրոնը, Մուհամմեդին և սկսել եր կռիվը։

Ամբողջ որն առաջնորդարանում ժողով եր տեղի ունենում, ուզում եյին հեռագրել Պոլիս, պատրիարքին՝ բողոքելու տեղի ունեցած վոճրագործության դեմ։ Քաղաքը պաշարվեց զինվորներով, ամեն մի փողոցի անկյունում զինված վոստիկաններ եյին կանգնած և արգելում եյին անցքը և անցնողներին ձերբակալում։ Ձերբակալում եյին միայն հայերին։ Տատերը, խուսափելու

համար ձերբակալությունից, սպիտակ ապարոշ եյին կապում իրենց ֆեսի շուրջը և դուրս գնում: Ոստիկանները, տեսնելով ապարոշը և կարծելով մոլլաներ՝ ազատ անցք եյին տալիս: Մինչև յերեկո քաղաքը լցվեց «մոլլաներով»:

Յերեք որ շարունակվեց այս դրությունը և գնալով դարձավ մի մութ մղձավանջ: Դիակը մնաց իր բնակարանում, հարազատներով շրջապատված:

Հնարավորություն չկար թաղելու:

Յերեք որ հետո կատարվեց թաղումը և ձերբակալվածներն ազատ արձակվեցին, վորպեսզի մասնակցեն թաղման: Բազմահազար մասսա յեր հավաքվել թաղմանը, յեկել եյին մարդիկ և հեռավոր գյուղերից: Թաղումը տեղի ունեցավ առանց վորևե ծայրահեղությունների, բոլորն ել հանգստացել եյին, գլուխները կախ արել, բոլորն ել յերևում եյին մի տեսակ ամոթահար:

Ինչո՞ւ:

Պարզվել եր, վոր Հակոբ Սիմոնյանին սպանողը Թուրք չի յեղել, այլ մի յերիտասարդ հայ, այն ել տեսչի սաներից մեկը, վոր յերկու տարի առաջ ավարտել եր և զբաղվում եր ուսուցչությամբ:

Ինչո՞ւ յեր սպանել Հակոբը՝ Հակոբ Սիմոնյանին:

Սպանողի անունն ել Հակոբ եր:

Հակոբ Սիմոնյանն ունեցել եր մի ազգականուհի, սիրուն մի աղջիկ, վորին վոճրագործը սիրահարված եր յեղել:

Աղջկա ծնողները տեսչից խորհուրդ են հարցրել իր աշակերտի մասին, վորպեսզի վերջնականապես վորոշեն աղջկա ճակատագիրը:

— Անմիտ և խենթ տղային մեկն ե,—պատասխանել եր տեսուչը:

Ծնողներն իրենց աղջկան համոզելու համար՝ հայտնում են նրան ազգական տեսչի, իբրև քաղաքում ամենամեծ մտավորականի կարծիքը, աղջիկն ել, իր հերթին, հայտնում ե Հակոբին տեսչի այդ կարծիքը՝ բացատրելու համար այն դժվարությունները, վորոնք ծառացել են իր դեմ՝ նրա հետ կապվելու ճանապարհին:

Յեվ ահա Հակոբը, անմիտ և խենթ, կտրել ե տեսչի առաջը կես գիշերին և դաշունահար արել տեղնուտեղը:

Քաղաքի ամենավերջին Թուրքը մազաչափ մասնակցություն չեր ունեցել այս վոճրագործության մեջ: Հայերը, ամոթահար, լռեցին, բայց Թուրքերն աշխատեցին չմոռանալ այն:

* * *

Այս դեպքից մի ամիս անց՝ քաղաքի ամենակատաղի Թուրքերից մեկի, Ահմեդ Ջավուշի կինը խեղդամահ գտնվեց իր սեփական անկողնում:

Ահմեդ Ջավուշը մունետիկ եր, բարձր և խռպոտ ձայնով:

Յեթե կառավարության հարկ լիներ մի վորևե հայտարարություն անել՝ կանչում եր Ահմեդ Ջավուշին և նրան եր հանձնարարում անել այդ հայտարարությունը: Հանկարծ ղողանջում եր Ահմեդ Ջավուշի ձայնը—..... չանսացողները կբարձրանան կախաղա՜ն...:Նրա հայտարարությունները միշտ վերջանում եյին պատժի գերագույն չափի անողորմ հայտարարությամբ:

Յեվ հանկարծ, կես գիշերին, մեր թաղում լսվեց Ահմեդ Ջավուշի ձայնը—«Հայերը կնոջս խեղդեցի՜ն ու փախա՜ն, փախա՜ն...»— այս բառերից հետո լսվեց մի կատաղի մռնչոց, կարծես մի գազան եր վողբում: Ձայնը լսվում եր կտուրից, նա բարձրացել եր կտուրը, պտույտ եր գալիս իր առանցքի վրա և գոռում, ձեռները վեր բարձրացնելով և ճոճելով ողում— հայերը կնոջս խեղդեցին ու փախա՜ն...

Կես գիշերին բոլորը նստեցին իրենց անկողինների մեջ, քնից զարթնած և սարսափած, խաչակնքեցին և լռեցին՝ սպասելով թե ի՞նչ աղետ պիտի պատահեր առավոտյան:

Բայց աղետը չսպասեց առավոտյան, յեկավ հասավ կես գիշերին։

Ահմեդ Ջավուշի տունը լցվեց վոստիկաններով և Թուրքերով։

Հայերը յեկել եյին, մտել տունը, Ահմեդ Ջավուշին կապել, բերանը բամբակով փակել և յերբ ճգնել եր իրեն ազատել, ծեծել եյին, կնոջը խեղդամահ արել անկողնում և փախել—այս եր Ահմեդ Ջավուշի պատմությունը վոստիկաններին և Թուրքերին։

Հայերն անգամ հավատում եյին այս պատմության, վորովհետև վրեժխնդրություն եյին կարծում։ Ամիսներ առաջ Ջավուշն եր յեղել, վոր մսագործի յաթաղանով կտրել եր յերկու հայ հեղափոխականների գլուխները. հրապարակով, միակ մարդը, վոր համաձայնել եր դահճի դեր կատարել, գլուխները կտրելուց հետո եւ ափով վերցրել եր արյունը, քսել միրուքին և կտրված գլուխներից մի քայլ հեռու չոքել և աղոթել ալլահին։

Կես գիշերին սկսվեցին ձերբակալումները և տեվեցին մինչև առավոտ։ Առավոտյան բանտը լցվեց հայերով։ Մինչև բանտ հասցնելը՝ ծեծում եյին, վիրավորում, թքում, անպատվում։

Դեպքի յերեկոյան Ջավուշը կնոջն ասել եր, վոր գնում ե գյուղ։ Շատ անգամ եր նա գյուղ գնում։ Գնացել եր չուկա ձի վարձելու։ Խոստացել եյին ձիապանները, բայց սպասեցրել։ Ահմեդ Ջավուշը մինչև կես գիշեր սպասել եր ձիուն, չեր ստացել և հուսահատ տուն եր վերադարձել կես գիշերին, տեսել եր մի ջահել Թուրք իր տանը, կինն եւ նրա գրկում։ Ջավուշը, կատաղած, ջահել Թուրքին խեղդել եր և նետել հորը, կնոջը խեղդել եր և թողել անկողնում, բարձրացել կտուրը և սկսել եր վոռնալ—հայերը կնոջս խեղդեցին ու փախա՜ն...

Ահա այսպես եր պատահել դեպքը։

Ջահել Թուրքի դիակը հանեցին հորից, ձերբակալեցին Ահմեդ Ջավուշին։ Հորը նետված Թուրքի ծնողները հարուստ եյին և ազդեցիկ, հետապնդեցին արդա-

րադատությունը և Ահմեդ Ջավուշին աքսորեցին Գոնյա, արգելելով նրան վերադառնալ։

Բոլոր ձերբակալված հայերին միասին ազատ չարձակեցին, այլ մեկ-մեկ, կամաց-կամաց, ամենավերջինին ամենավերջին որն եւ հարցաքննելով Ահմեդ Ջավուշի վոճիրի կապակցությամբ։

* * *

Մի Թուրք մոտենում եր մի հայ խանութպանի և հավանելով մի ապրանք՝ արժեքն եր հարցնում.

— Արշինը տասը ղուրուշ,— պատասխանում եր հայ խանութպանը։

— Հինգով տուր, առաջարկում եր Թուրքը։

— Չեմ կրնար տալ, ընծի արդեն ութը ղուրուշ մալ ե եղեր։

Թուրքը պահանջում եր, վոր հինգով տա, հայը չեր տալիս, Թուրքը հեռանում եր անելությամբ, ատամները կրճտացնելով։

Անցնում եր մեկ-յերկու որ և ահա փողոցում մի իրարանցում— Թուրքերը ծեծում են ինչ վոր հայու։

Արշինը հինգ ղուրուշով ապրանք չտվող հայ խանութպանն ե ծեծ ուտողը։ Թուրքն ելի յեր հանդիպել նրան փողոցում։ Թուրքը հարցրել եր։

— Հինգ ղուրուշով չե՞ս տար, կյա՛վուր։

— Վո՛չ։

Յեվ Թուրքն սկսել եր բղավել.

— Դինիմե սեոկտի*)... հասե՛ք, յես խաղաղ անցնում եյի՝ Մուհամեդին հայհոյեց, սուրբ կրոնը հայհոյե՜ց...

Ահա ամբոխը կտրտում եր հայ խանութպանի քիթըն ու բերանը, իսկ հայ խանութպանն ամեն մի հարվածին պատասխանում եր.

---

*) Կրոնիս հայհոյեց։

—Հինգ ղուրուշով չեմ տար, ամա ձրի կուտամ, տարե՛ք:

Վո՛չ վոք չեր հարց տալիս, թե ինչո՞ւ ծեծ ուտող մարդն այդ խոսքերն է աղաղակում, ի՞նչ կապ ունեն այդ խոսքերը սուրբ կրոնի հետ:

* * *

Պատահում եր ուրիշ դեպք:

Մի քանի հայ, ամայի մի վայրում, հանդիպում են մի Թուրքի, բոլորովին անծանոթ:

— Հայդե՛, ծո՛, աղեկ բռնեցինք...

Մոտենում եյին Թուրքին, խոսակցության բռնվում, անարգական խոսքեր ասում, Թուրքը պատասխանում եր փոխադարձ անարգական խոսքերով.

— Ծո՛, դուն վո՞ր չունն ես, վոր եդպես կպատասխանես, հավկըլե*), ծո՛:

Ձեռաց սպանում եյին, գցում մի փոս և հեռանում:

Մի քանի որից գտնում եյին դիակը և սկսում եյին բռնակալությունները:

* * *

Վոսկերիչ Տիգրանը մի այգի ուներ քաղաքի սպանանոցի մոտը: Յես գնացել եյի մի ազգականի այգին, վոր գտնվում եր վոսկերիչ Տիգրանի այգու կից:

Կեսորին մի Թուրք մտավ այգին մի կողով չալակած և խաղող ուզեց: Տիգրանը չուզեց տալ, բայց մայրը միջամտեց:

— Տո՛ւր, չուն է, կը դուշմըննա:

Տիգրանը տվեց նրան խաղող, բայց վոչ կողովը

---

*) Հավկըլել—կուլ տալ

լցվելու չափ: Թուրքը պահանջեց, վոր ամբողջ կողովը լցնի:

— Կողովը լցնեմ, չես կարող չալակել, ծանր է,— ասաց Տիգրանը կատակելով և հասկացնելով, վոր ավելին չի ցանկանում տալ:

Թուրքը պահանջեց, վոր անպայման կողովը լցնի: Մայրն ելի միջամտեց, բայց Տիգրանը զայրացավ և մերժեց:

— Ադքանը վոր ձրի տվի, հերիք է,—հայտարարեց Տիգրանը: Թուրքն ելի պահանջեց: Նրանք կպան իրար:

Տիգրանը նիհար և թուլակազմ մի մարդ եր, իսկ Թուրքը՝ ուժեղ և հաղթանդամ: Տիգրանը պարտվեց, կուշտ ծեծ կերավ և մի ատամն ել վրա տվեց: Վո՛չ վոք չմիջամտեց:

— Շուն է, կերթա հազար ու մեկ խառնակչություն կենե,—ասին բոլորը և թույլ տվին, վոր Տիգրանը ծեծն ուտե:

Հինգ որ հետո Տիգրանին կանչել եյին դատի:

Յես գնացել եյի դատարան այդ դատը տեսնելու, հակառակ մորս պատվերին, վոր այդպիսի տեղեր չգնամ:

Թուրքը դատարան ներկայացավ՝ ճակատը սպիտակ թաշկինակով կապած: Իբր թե Տիգրանը խփել եր քարով նրա ճակատին և ջարդել: Թուրքը ներկայացրեց դատարանին բժշկի ռապորտը վերքի մասին: Տիգրանին յերկու ամիս բանտ վճռեցին և ծեծելով տարան բանտ, իսկ Տիգրանը դատարանում միայն մի բան եր խընդրում.

— Քանդեցե՛ք թաշկինակը և տեսե՛ք թե՝ վերք կա՞:

Դատարանը գտավ, վոր կառավարական բժշկի ռապորտը կա և բավական է:

Յերբ Տիգրանին տարան բանտ և մենք ել դուրս յեկանք, յես իմ այս աչքերով տեսա, վոր Թուրքն իջավ փողոց և հանդիստ սրտով քանդեց ճակատի թաշկինակը և դրավ գրպանը—վոչ մի վերքի հետք, մինչև անգամ ճանկռտուկի հետք չկար ճակատի վրա:

* * *

Մի օր, ցերեկով, մի սարսափելի լուր տարածվեց— մի հայ սափրիչ ածիլվող մի Թուրքի վիզն է կտրել:

Լուրը տարածվեց կայծակի արագությամբ: Ամեն մարդ ջանաց անմիջապես խանութը փակել և տուն գնալ: Տասնևհինգ րոպեյում քաղաքի շուկան ստացավ կիրակնորյա կերպարանք—դատարկվեց:

Ի՞նչ էր պատահել:

Հայ սափրիչը Թուրքին ածիլելիս, սափրիչին մի ծանոթ հայ, ներս է մտնում և նրա ականջին շշնջում.

— Դուրսը Թուրքն ու հայն իրար են խառնվեր, դուն ի՞նչ կենես հոս:

Այդ յեղել էր պարզ մի կատակ:

Սափրիչը մի վայրկյան մտածելով, վոր դուրսն արդեն սկսել են, իր առաջ կա կենդանի պատեհություն, յավ է ձեռաց ոգտվել այդ պատեհությունից և կես քնի մեջ ածիլվող Թուրքի վիզը կտրում է և ընկնում դուրս ածելիով խառնվելու դրսում սկսած պայքարին: Տեսնում է, վոր դրսում ամեն ինչ խաղաղ է և ահաբեկված զարհուրելի հեռանկարից՝ ձին նստում է և փախչում քաղաքից դուրս:

Ցերեկոյան սափրիչի կնոջը վոստիկանները տանում էյին բանտ ծեծելով և ստիպելով.

—Ամուսնուդ թագստոցն ա՛սա:

* * *

Հռչակվեց օսմանյան սահմանադրությունը:

Համբույրներ, գիրկընդխառնումներ, վողջագուրումներ, սիրո և յեղբայրության լիրիքական զեղումներ:

Բաց արին բանտի դռները, դուրս յեկան քաղաքական բանտարկյալները, վորոնց մեջ և իմ յերկու ուսուցիչները:

Կառավարական շենքի առաջ կատարվեց ազատության հանդես, դուրս յեկան և խոսեցին Թուրք հեղափոխականներ Կանունը Եսասի*) մասին:

Առաջին անգամն էր, վոր յես տեսնում էյի Թուրք հեղափոխականներ— մի՞թե Թուրքը յերբ և իցե կարող էր հեղափոխական լինել— այսպես էյին ինձ ասել, այդպես էլ հավատացած էյի:

Այդ հանդեսից էյի վերադառնում, հոգնած, փոշեթաթախ, քաղցած և բերկրանքով լեցուն:

Փողոցում հանդիպեց ինձ Շեմսին:

Յերկար ժամանակ էր մենք իրար չէյինք բարևում: Նա իմ հորս էր կյավուր անվանել, յես էլ իր հորը՝ իթ անվանել: Մենք շատ էյինք այդ ածականներն ասել իրարու և հաշտվել, բայց այս անգամ մենք վիրավորել էյինք մեր ծնողներին:

Մանավանդ յես դաշունահար վիրավորվել էյի նրա խոսքից, վորովհետև այն ժամանակ, յերբ Շեմսին հայհոյեց հորս՝ նա գերեզմանում հող էր դառնում...

Շեմսին ինձ նայեց աչքի պոչովը:

Յես էլ:

Ժպտեցա:

Նա էլ:

Յես չեմ կարող ասել թե՝ ինչպես մեր վոտները շարժվեցին և մոտեցան իրար և մեր թևերը փաթաթվեցին իրարու:

Շեմսին ինձ քաշեց տարավ իրենց տունը: Ոտարոտի թվաց այդ հին տունը, վաղուց էր չէյի տեսել: Շեմսին ինձ առաջնորդեց ներս, վոտնակոխելով տան հարեմական սովորությունները: Համբուրեցի նրա մոր ձեռքը, դարձա և տեսա Սանիեյին, վոր կանգնած ժպտում էր: Իմ և նրա ձեռքերը յերկարեցին իրար, ինչպես մարդու սեփական ձեռքերը, յերբ սիրտը ցանկանում է ծափահարել:

Շատ վաղուց էր յես Սանիեյին չէյի տեսել առանց մանիշակագույն ամպի:

*) Կանունը Եսասի—սահմանադրություն:

Նա մի քիչ, շատ քիչ, կորցրել եր իր յեթերայնությունը, բայց դարձել եր արյունալի:

Յերբ յես ձեռքն ուժգին սեղմեցի, կարմրեց, շըրթունքները դողացին և ինչ վոր շշնջաց մորը դառնալով: Այդ շշուկի մեջ այնքան կանացիություն կար, վոր յես նրան անմիջապես պատկերացրի մերկ... ահա նա լողանում ե ավազանում և ավազանի սառը ջուրը սառ-չում ե նրա մարմնի արևային ջերմությունից:

* * *

Համբույրներն ու գիրկընդխառնումները վոչինչ չոգնեցին, վորովհետև մի քանի որ հետո իսկ, «իմաստուն» հայեր շշնջացին ուրիշ ականջների՝

— Զի՛ խաբվիք:

Յեվ «իմաստուն» թուրքեր ևս շշնջացին.

— Զգո՛ւյշ, հայերը կուզեն մեր յերկիրը իշխեն և վերացնեն կրոնը:

Կարծես ժամանակը յետ դարձավ:

* * *

Յերբ մենք փոքր եյինք, մի խաղ եյինք խաղում, վոր կոչվում եր «հայ և թուրք»: Դա պարզ մի խաղ եր. —մեջտեղը մի քարակույտ, վոր ամրոց եր կոչվում, մանուկները բաժանվում եյին յերկու մասի՝ ամրոցը գրավելու: Բաժանված խմբերից մեկը կոչվում եր՝ Հայ, իսկ մյուսը՝ թուրք:

— Տո՛, թուրքերը մտան...

— Հայերը բերդին կը մոտենան, տվե՛ք գլխներուն:

Յեվ սա համարվում եր անմեղ խաղ:

Այդ խաղը շարունակվեց մինչև իմպերիալիստական պատերազմը: Այդ պատերազմում խաղացվեց նույն խաղը միայն այն տարբերությամբ, վոր այս անգամ

կողմերն իսկական հայեր և թուրքեր եյին, խաղում եյին լուրջ և իրական հողի վրա, անսահման ատելությամբ բոցավառված:

Վո՛չ վոք, բացարձակապես վո՛չ վոք մեզ չեր ասում թե՝ մի՛ խաղաք այդ խաղը: Յերբ մենք խաղում եյինք, մեծերը, բեղերով մարդիկ, շատ լուրջ և իմաստուն մարդկանց համբավ ունեցող մարդիկ, դիտում եյին այդ խաղը և ժպտում: Յեվ առհասարակ դիտողները հրճվում եյին յերբ «թուրքերը» պարտվում եյին: Խաղի պափոսն այնքան եր խորանում, վոր «հայերը», «թուրքերին» խաղի ժամանակ կանչում եյին այն անարգական ածականներով, ինչ վոր իրական կյանքում, խաղից դուրս: Յերբ տաքանում եյինք՝ սկսում եյինք աղաղակել.

— Վուռո՛ւն իթլերե...

— Կյավուրլար կիրդիլեր...*)

Խաղն սկսելու համար մենք միշտ կանգնած եյինք լինում մի դժվարության առաջ— վո՛չ վոք չեր ցանկանում «թուրք» լինել: Ստիպված եյինք լինում վիճակ գցել: Ով վոր «հայ» եր քաշում՝ անսահման ուրախանում եր, իսկ «թուրք» քաշողները տխրում եյին, ակամա մասնակցում խաղին, պարզապես մանկական խաղի կարգապահության կարգով:

Մենք մեծանում եյինք այս վոգով:

Պիպերի համար փոխանակ ասելու «կծու է», ասում եյինք «տաճիկ է»:

Մեր բարբառում տաճկըճող կամ թրքաճող, կը նշանակեր՝ գայրանալ, վայրենանալ:

— Համբերանքս հատավ, տաճկըցա.— ասում եյինք:

Յեվ գալիք սերունդները կը պատմեն մի զարմանալի հեքիաթ—

«Լինում ե, չի լինում, մի փոքրաթիվ և հին ժողովուրդ ե լինում, վոր ապրում եր Վանա ծովից մինչև Միջերկրականը, Բաղդադից մինչև Բյուզանդիոնը: Լի-

*) —Զարկեք շներին.—կյավուրները մտան.

նում է այդ հին ժողովուրդը հողագործ, աղքատ արհեստավոր, մտավորական, վաճառական, կալվածատեր, բանկիր, պետական բարձր պաշտոնատար, փողոցների կեղտն հավաքող, ծառա, ճորտ և այլն: Այդ ժողովրդին սիրաբորբոք սիրում են իր հարուստ ցեղակիցները նրա սահմաններից դուրս, սիրաբորբոք սիրում են նրանց և արևմտյան պետությունների մինիստրները, վորովհետև այդ ժողովուրդն ուներ սև ու սիրուն աչքեր և տարածում էր կուլտուրա վողջ խավար արևելքում: Սիրաբորբոք սիրուց մղված՝ իր հարուստ ցեղակիցները և արևմտյան մինիստրները հրում են այդ ժողովրդին դեպի կռիվ իր հարևանների դեմ, հարևաններ, վորոնք տարբեր էյին կրոնով, արյունով և կուլտուրայով, ունեյին սուրեր և զրահ, զորք, ռազմատորմիղ և գերակշիռ թիվ: Լինում է, չի լինում, մեծ պատերազմ է լինում: Վողջ աշխարհը բռնում է վառոդի ծուխը և արյան գետեր են հոսում: Հին այդ ժողովրդի ականջին գոռում են մինիստրները և հարուստ ցեղակիցները.

—«Յեկել է ազատության ժամը, խփի՛ր քո հարևանին, խփի՛ր նրա մահիկին քո խաչով»: Հին այդ ժողովրդի սև և սիրուն աչքերը փայլում են ազատության տենչից, սկսվում է անհավասար կռիվ, զարկում են, զարկվում և հին այդ ժողովուրդից մնում է միայն մի փշուր իբրև կոշմարային հիշատակ:

Ապա գերագույն ու վսեմ ցինիզմով հռհռում են մինիստրները և հարուստ ցեղակիցները վոսկորների և մոխիրների վրա...

Յեվ յերկնքից ընկնում է յերեք խնձոր...

ԺԸ

Այդ աշխարհում մի սերունդ կար, վոր մեծացել էր բաղնիքների յետևում դիզված կայծեր պարունակող մոխրակույտերի մեջ:

Այս սերունդը թուրքերեն լեզվով կոչվում էր քյուլլխան բեյի— մոխրակույտերի իշխան,— վորոնց ծնունդը հար և նման էր մեզանից 1930 տարի առաջ ծնըված Նազովրեցի Հիսուսի ծնունդին—անհայր, վորովհետև մեր դարում չեր ճարվի մի դուրգար Հովսեփ, վոր կնության առներ մի կույս—յերեխան գրկում: Այդ կույսերը տանում, ճգում էյին իրենց վոտ յելած մանուկները բաղնիքների յետևում դիզված մոխրակույտերի մեջ, և նրանք մեծանում էյին առանց Հովսեփի և առանց «սուրբ կույս» մոր:

Ջմեռները նրանք բաց էին անում մոխիրները, մտնում մեջը, պառկում, մոխիրը քաշում վրաները և քնում՝ ազատվելով անգութ և անկարեկից ցրտից:

Մոխրակույտերի այս իշխաններն ապրում էին կիսամերկ, մեջքերի գոներին ալքտալով, ապտակ ուտելով:

Ճաշում էին աղբակույտերում, ծմերուկի, սեխի, խնձորի կեղևներով, կատուների ճանկերից միս կտորներ գողանալով, մսագործի խանութներից՝ փոչխարի մի տոտիկ կամ մի գլուխ, բազարում հավկիթներ էին թռցնում, թաղերում հարուստների փոքրիկ յերեխաների ձեռքից կորզում էին կարկանդակ և մրգեր:

Կեսօրին հավաքվում էին զորանոցի յետևը և ոգտվում թափված խարավանայից*): Հարձակվում էին գործում գյուղից քաղաք յեկող իշաբեռների, սայլերի վրա, ծեծվելով, քիթ ու բերան ջարդոտելով, ձեռք էին բերում մի քանի ափ ցորեն կամ ալյուր, հարձակվում էին գործում մանավանդ ճակնդեղի բեռների վրա, վորովհետև կարող էին ճակնդեղները խաշել բաղնիքի նոր դուրս թափված այրող մոխրի մեջ և ուտել:

Պետական, կրոնական, հասարակական և բարեգործական վո՛չ մի կազմակերպություն գոյություն չուներ, վոր մտածեր այս «իշխանների» մասին:

Մեռածներին թաղում էին իրենք, մոխրակույտներից մի քիչ հեռու, մի քանի գլուխ ջարդելով նրա ցնցոտիների բաժանման պայքարում:

Տարին մի անգամ բաղնիքի տերը, համաձայն քաղաքային օրենքի՝ պարտական էր մաքրել ամբողջ մոխրակույտը: Այդ մաքրության ընթացքում՝ տասնյակ դիակներ էին դուրս գալիս:

Շատերը հենց քնել էին և չեյին զարթել:

*) Զինվորական ապուր:

* * *

Մոխրակույտերի իշխաններից մեկն էր Ալին, նրանց ամենից գեղեցիկ հերոսը, բարձրահասակ, սիրուն կազմվածքով և ուժեղ:

Ալին 25 տարեկան էր, յերբ հայրս կանչեց իր մոտ և նշանակեց նրան մեր ագարակի պահապան: Մեր ագարակն ավերողները մոխրակույտի իշխաններն էին: Ալիի պաշտոնի գլուխն անցնելուց հետո՝ վո՛չ մի «իշխան» չմտավ մեր ագարակը, միայն Ալին իր սեփական խմբին յերբեմն մատակարարում էր մեր ագարակից մրգեղեն և բանջարեղեն:

Հայրս գոհ էր Ալիի պաշտպանությունից: Ագարակը միանգամայն փրկվեց փչանալուց:

Ալին հավատարիմ էր, անկեղծ և հանդուգն: Նա կռվի էր բռնվում վոստիկանների հետ և հաղթում:

Մեր ագարակը մտնելուց հետո՝ նա փոխեց իր շորերը, կյանքում յերրորդ անգամը լինելով՝ լողացավ, ածիլվեց, մազերը խուզեց, լայն, յերկար և կանաչ գոտի կապեց մեջքին և նրա մեջ խրեց դանակը և մարդ ծեծելու փայտի կամ գավազանի չափ հաստ և յերկար մուշտուկը:

Այս կերպարանափոխությունից հետո էլ մարդիկ չմոռացան նրա սոցիալական ծագումը և ամեն առիթին նրա յերեսին շպրտում էին նախկին արհամարհական խոսքը.

— Քյոլխան բեյի...

Մի որ Ալին յեկավ հորս մոտ, ամաչելով կանգնեց և ասաց.

— Հաջի եֆենդի, յես մտածում եմ ուրիշ քաղաք գնալ, այստեղ բոլորն էլ գիտեն, վոր քյուլխան բեյի յեմ: Ամաչելով իր ծագումից, կյանքումը լաց չեղած այս բիրտ մարդը, լաց յեղավ, թափեց այրող արցունք, վոր մինչև այն ժամանակ անծանոթ էր նրա կոպերին: Նա լաց էր յեղել միայն փայտի հարվածներից և վոստիկանների հանկարծակի հասցրած մտրակներից:

— Ականջ մի՛ կախեր, Ալի՛,—ասաց հայրս,—մի քանի տարիեն ամեն մարդ կմոռանա քու քյուլխան բեյի ըլլելդ, մարդ կը դառնաս,—և նրա ձեռքը դրավ մի քանի մեջիդ արծաթ դրամ:

Ալին փող չէր պահում իր մոտ, հորից առած փողը պահ էր տալիս իմ պառավ հորաքրոջս: Նա, ուտելուց և հագնելուց բացի, վո՛չ մի պահանջ չուներ—ուտում էր մեզ մոտ, հագնում էր հորս գնած չուխան, պառավ հորաքույրս էլ մատակարարում էր նրան ծխախոտ—հորս Տրապիզոնի պահեստից:

Ալին մտահոգված էր իր խմբի ընկերներին մի-մի պաշտոն գտնելով: Մի քանիսին սպասավոր դարձրեց, շնորհիվ մեր տան միջոցով ձեռք բերած իր ծանոթությունների, մի քանիսին կառապանի պաշտոնի բարձրացրեց, մի քանիսին՝ ձի պահող, իսկ մնացյալներն էլ մարդ սպանեցին և փախան սարն ու դառան ահ ու սարսափ ազդող բանդիտներ:

Խոսում էյին, վոր Ալիի բանդիտ ընկերները մեկ-մեկ իջնում են սարից և հյուրընկալվում մեր ագարակում Ալիի կողմից, բայց մենք յերբեք չէյինք տեսել:

Քաղաքային իշխանությունը մի քանի անգամ գաղտնի վոստիկաններ պահեց մեր ագարակում՝ բռնելու Ալիի ընկեր բանդիտներին,—բայց բոլոր փորձերն անցան անհաջող: Մի փոքրիկ նշան պարսպի դռան վրա բավական էր, վոր սարից իջնող մարդիկ չմտնեյին ագարակը: Բայց վորպեսզի իզուր չանցներ սարից քաղաք իջնելը՝ կողոպտում եյին հանդիպած մարդուն և հեռանում:

Մայրս միշտ մտահոգված էր, վոր մի՛ գուցե, մի որ էլ հայրս պատահեր նրանց և կողոպտվեր:

— Գիշերները չո՛ւտ եկուր ագարակեն,—ասում էր մայրս,—որ մ'ըլ քեզ կը կողոպտեն, գոնե սահաթըդ և փարաներդ հետդ մի՛ տաներ:

— Ականջ մի՛ կախեր, կնի՛կ,—պատասխանում էր հայրս,—ընծի կը ճանչնան, եղպես ապուր չեն ուտեր:

Ցեվ մի որ էլ այդ ապուրը կերան, հայրս տուն յե-

կավ կողոպտված: Մայրս հիշեցրեց նրան իր նախազգուշացումը:

— Շատ մութ էր, աղջի, ձենս էլ չճանչցան,—պատասխանեց հայրս:

— Ենքան մութ էր, վոր չճանչցա՞ն:

— Ցեթե ճանչնային, եդ ապուրը չէյին ուտեր:

Հայրս կես գիշերին մարդ ուղարկեց մեր ագարակը և Ալիին կանչել տվեց:

Ալին շնչասպառ յեկավ: Հայրս պատմեց նրան յեղելությունը: Ալին տխրեց, դուրս յեկավ տնից առանց մի բան ասելու:

Առավոտյան կանուխ անծանոթ մարդիկ մեր լուսամուտից ներս նետեցին կողոպտված ժամացույցը, վեբարկուն, փողերը և մի շարք դոկումենտներ:

Ալին կեսօրից առաջ տուն յեկավ, կանգնեց հորս առաջ ամոթահար՝

— Հաջի եֆենդի, չեն ճանչցեր,—ասաց:

— Անոթի մարդիկ են,—պատասխանեց հայրս,—չեմ մեղադրեր:

Ալին հավատարմությամբ և հերոսությամբ պաշտպանեց մեր ագարակը ամեն 8 և 10 օրը մեկ անգամ արյուն թափելով մի թիփի և կամ աննշան մի տերևի համար:

Մի որ Ալին տնկվեց հորս դիմաց՝ ինչ վոր մտքերով պաշարված: Աչքերը փայլում էյին, կարծես մի բան էր գտել և ուզում էր հորս հայտնել, բայց ամաչում էր ու քաշվում:

— Ի՞նչ կա, Ալի,—հարցրեց հայրս:

— Հաջի եֆենդի, բան մը պիտի ըսեմ, ամա կամչնամ, վախենամ վրաս խնդաս:

— Ըսէ՛, մի՛ վախնար, յեթե խնդալու յե, կը խնդանք, ինչո՞ւ կը քաշվիս:

Ալին կմկմալով, բայց խորապես համոզված շեշտով, սկսեց.

— Հաջի եֆենդի, վորոշեցի բոլիկ վոտքով Մեքքե երթամ, հաջի ըլլամ ու ետ գամ: Ուխտ եմ դրեր, կուզեմ կատարել:

— Շատ աղեկ բան ես մտքիդ դրեր, Ալի՛, գնա՛, բայց ինչո՞ւ բոբիկ ոտքով:

— Բոբիկ ոտքով, որպեսզի միտքս դրած մուրազս կատարվի:

— Շատ աղեկ, շատ աղեկ,—յեղրակացրեց հայրս:

Ալին մի բան էլ ուներ ասելու, ավելի շուտ այս բանի համար էր, որ նա սկզբից ամաչում և քաշվում էր:

— Հաջի եֆենդի, յես քու ոտքիդ ղուրբան ըլլիմ,—պաղատեց Ալին:

Հայրս հասկացավ:

— Ըսե՛, Ալի՛, յես քըզի շատ բան եմ պարտական:

Ալին համարձակվեց:

— Հաջի եֆենդի, յերկու ոսկի տաս ինձ, ճանապարհին անոթի չմեռնիմ,— կմկմաց:

—Յերկու ոսկի քիչ է,—պատասխանեց հայրս,— քըզի տասնյեվհինգ ոսկի կուտամ:

Ալին կռացավ և հորս վերարկույի քղանցքները համբուրեց:

Հաջորդ օրն իսկ Ալին հայտարարեց իր ուխտագնացությունը: Իսլամական սովորության համաձայն պետք է նվերներով ճամբու դնեյին Ալին իր իսլամ կրոնակիցները:

Հաջորդ օրը, յերբ հայրս Ալիի բուռը համրեց տասնևհինգ ոսկին՝ մորս կրոնական զգացումներին դիպավ: Նա ասաց.

— Յեթե հայ քրիստոնյա մը Յերուսաղեմ գնա՝ չես տար:

— Յես իմ գործս գիտեմ,—պատասխանեց հայրս՝ մորս,—Ալին թող յետ գա, յես հարյուրներ կվաստակեմ:

Մի քանի օրից յերբ Ալին ճանապարհ ընկավ, ցնցոտիներ հագած, բոբիկ և ձեռին մի յերկար և անտաշ գավազան՝ իր իսլամ կրոնակիցներից շատ քչերը ողջերթ մաղթեցին նրան: Նվեր-դրեթե չստացավ: Նրա սոցիալական ծագումը հաղթեց կրոնական զգացումներին և ընդհանուր հավատքին:

Ալին նորից համբուրեց հորս վերարկույի քղանցքները և համառ, հանդուգն ու վճռական տոնով ասաց.

— Հաջի եֆենդի, աշխարհքին խերը պիտի անիծեմ:

Հայրս Ալիի ճակատից համբուրեց և գաղտագողի մի ոսկի ևս դնելով նրա ափի մեջ, ասաց.

— Յերուսաղեմեն վոր անցնիս՝ էնտեղ մի ջրհոր կա, Հակովբա ջրհորը, ուր մեր Քրիստոսը հանդիպավ Սամարացի կնոջ, էդ ջրհորին վրա, իմ հոգու համար, մի մոմ վառե՛:

— Մի քանի հատ կը վառեմ, հաջի եֆենդի, անհոգ ըլլիս,—յեղավ Ալիի վերջին խոսքը և ճանապարհ ընկավ դեպի Մեքքե:

* * *

Ալին գնաց, անցավ յերկու տարի, նրանից վո՛չ մի լուր:

— «Գնաց մի քաղաք, տված դրամդ դրամագլուխ շինեց և բացեց մի խանութ և կապրի իր համար»; ասում եյին շատերը հորս:

Հայրս համառորեն պնդում էր.

— Ալին վերջը վերջը կուգա, դուք կը տեսնեք:

Մեր քաղաքից մի քանի թուրքեր վերադարձան Մեքքեյից:

Հայրս հարց ու փորձ արավ:

—Յես տեսա նրան Յերուսաղեմում,—ասաց նրանցից մեկը,—նա դեռ ևս ուշ կգա, ոտով էր գնում:

Իսլամ ուխտավորները տարածեցին ամբողջ քաղաքում Ալիի ջերմեռանդությունը, նրա կրոնական կրակը: Նա այդ զոհաբերությամբ պիտի սրբեր սոցիալական իր ամբողջ «բասիրը», իր ծագման ամբողջ «կեղտը»:

*
* *

Երեք տարի անցնելուց հետո՝ մի օր մեր քաղաքի պատերի վրա յաֆտաներ*) փակցրին, որ Ալին գալիս է Մեքքեյից բոբիկ ոտքերով, հոգնած և ուժասպառ, և ամեն իսլամի պարտականությունն է դիմավորել և հոտոտել նրանից իսլամներին խոստացված դրախտը:

Լուր տարածվեց, որ Ալին գալիս է մարգարեյից ստացված չտեսնված շնորհով: Այդ շնորհին արժանացել էր նա բոբիկ ոտքերով մինչև Մեքքե քայլած լինելու համար, այրելով իր ճակատը և ոտներն արաբական կիզիչ արևի տակ և ավազների վրա:

Երկու օրից Ալին բեյ հռչակեցին—Ալի բեյ: Այս տիտղոսը նա ստացավ ինքնաբուխ կերպով հավատացյալ ժողովրդից, իր ժամանումից առաջ:

Ամեն մի հավատացյալ իսլամ պատրաստվեց դիմավորել նրան նվերներով:

*
* *

Ամառ է: Դաշտի ողն ալիքավորվում է միջօրեյի տապից, այրվում է հողը, մի դաժան և անկարեկիր արև վառում է դաշտի ցորենները:

Բազմահազար ժողովուրդ լցված է փոշեթաթախ ճանապարհին, յերկու—յերեք մղոն գետնին փռված արևելյան գորգերը կորցրել են իրենց կախարդական գույները փոշուց:

Հեռվից նշմարվում է մի կետ: Մոտենում է: Ճանաչելի յե դառնում. Ալին է— գլխին մի կանաչ ապարոշ, հագին յերկար և կանաչ արա, ձեռքին նույն յերկար և անտաշ գավազանը, կուրծքը բաց, բոբիկ, նա բաց է արել նաև իր արությունը, որի վրա, մարգարեյի հաճությամբ դրոշմված է հաջին, ահա այն շնոր-

*) Հայտարարություն, աֆիշ

հը, որին նա արժանացել է ի փոխարեն իր բոբիկ և ցընցոտիապատ ուխտագնացության:

Խռնվում է ժողովուրդը նրա շուրջը լուռ և անձկագին աճապարանքով, սկսում են յերկյուղածությամբ համբուրել մարգարեյի շնորհին արժանացած նրա առության խորհրդանշանը՝ հաղորդակից լինելով իսլամական դրախտի շնչին: Ամեն համբուրող, նրա քղանցքներին և գավազանին դիպչող ամեն մի մարդ մատուցանում է իր նվերը բոբիկ ընտրյալին:

Վոմանք բերում են ձիեր իբրև նվեր, վոմանք նվիրում են իրենց կալվածների մի մասը, մի ամբողջ խանութ, հայտարարում են իրենց նվերները համբուրելիս, բերում են մետաքսներ, արծաթներ, ոսկիներ, բերում են կահկարասիներ, խալիչաներ, սփռոցներ, խունի խումաչ անկողիններ, մահճակալ, վառարան, հագուստեղեններ: Նվերների համար պատրաստված կառքերը լցվում են և շարքը քանի գնում՝ յերկարում է:

Ալին լուռ է, փոշեթաթախ և դողահար:

Մտնում է քաղաք:

Տանիքները լիքն են հետաքրքրվող ժողովուրդով, յուսամուտների վանդակների յետև ծակում են աչքերը կանանց, մարմրում են սրտերն իսլամ մայրերի իրենց փոքրիկ աղջիկներին ընծայաբերելու մարգարեյի ընտրյալին:

Ալին լուռ է: Փոշին և քրտինքն ակոսներ են փորել նրա ճակատի վրա և քունքերից վար: Քայլում է դանդաղ, պարտասուն:

Հասնում է քաղաքի մեջիդը, չոքում է դրան շեմքին, համբուրում է մաշված մարմարը, աղոթում է յերեսը դեպի հարավ, մտնում է ներս, ելի աղոթում:

Ալիին առաջնորդում են մեջիդի կողմից իրեն նվիրված մի գավառական պալատ՝ ուր հասնելիս նա ցանկություն է հայտնում քնել:

Հայրս նրա մոտ չգնաց, բայց կես գիշերին Ալին մարդ էր ուղարկել հորս և խնդրել նրանից «շնորհ բերել» իր մոտ:

Երբ հայրս մտնում է Ալիի սենյակը՝ նա վոտքի յէ կանգնում, վազում և համբուրում նրան:

— Հաջի եֆենդի, քու շնորհիվ աշխարքին խերն անիծեցի,— ասում է նա:

Բաժանվելուց առաջ Ալի բեյը ստիպում է հորս յետ վերցնել իր տված փողը: Հայրս կտրականապես հրաժարվում է:

— Ես իմ հոգու համար եմ տվել,— ասում է հայրս:

Ալի բեյը խոստանում է մինչև անգամ իր կյանքի գնովն ոգնել հորս իր նեղությունների մեջ: Հայրս շնորհակալություն է հայտնում:

* * *

Մի ամսից հետո Ալին Նպարեղենի խանութ բաց արեց, վորի մեջ կշեռք և չափ չկար, վորովհետև հաճախորդներին ապրանք չէր ծախում:

Նա նստում էր խանութում, մետաքս, խունկի խումաշ բարձերով շրջապատված, մարգարեական կանաչ աբան հագին, մի արշին յերկար մուշտուկը բերնին, կանաչ ապարոշով: Անցնող հարուստներին նա հրավիրում էր խանութը:

— Ձեր տունն ի՞նչ ուղարկեմ,—հարց էր տալիս:

Հարուստները նրանից խնդրում էյին ուղարկել խանութի ապրանքի ամեն տեսակից և գնում էյին մետաքսե բարձերի վրա մի քանի դեղին վոսկի:

Ալի բեյն ապրում էր անխմանալի ճոխության, շռայլության և շվայտության մեջ, ապրում էր նա ժամանակակից հազար ու մեկ գիշերները:

Իրար յետևից նա կնության առավ 8 աղջիկ, բոլորն էլ 12 տարեկան:

Նա շատ աշխատեց իր ընկերներին սարից քաղաք բերել, խոստացավ նրանց փող, տուն, խանութ և պաշտպանություն, բայց նրանք չհամաձայնվեցին թողնել սարը և քաղաք իջնել:

Մի որ քաղաքում իրարանցում էր: Ալին ապտակել էր մի կատաղած համբավ ունեցող վոստիկանապետի: Ալին տեսել էր վոր վոստիկանապետը ձգել էր իր մտրակի տակ մի քյուլխան բեյի և ծեծում էր: Քյուլխան բեյին ճչում էր մտրակի հարվածների տակ այնպես, ինչ-



պես հարյուրավոր անգամներ ճչացել էր Ալին ինքը. Նա նախ մտածել էր անտարբեր անցնել, բայց ճիչը նրան պարտադրել էր յետ դառնալ և մի ապտակ իջեցնել վոստիկանապետին:

— Քյուլխան բեյին կը պաշտպանե,— ասում էյին

բոլորը գաղտնի, անկյուններում, չհամարձակվելով հրապարակով դեմ գնալ մարգարեյի ընտրյալին:

Մոխրակույտերի բոլոր իշխաններն որական յերեք անգամ խռնվում եյին Ալի բեյի տան դռան առաջ: Ալին նստում եր լուսամուտի յետև, ամբոխից աննշմարելի, մինչև սպասավորները յուրաքանչյուր անգամին 50—ական ոխա հաց եյին փրթում: Ստեղծվում եր մի դաժան տեսարան, «իշխանները», իրար եյին բզկտում մի կտոր ավելի կորզելու համար, քաշքշում եյին իրար, տասնյակներ թափվում եյին իրար վրա, ճխլտելով տակի մնացածներին: Յեվ վերջ ի վերջո մնում եյին ամենաթշվառները, վորոնց ձեռքը մի փշուր անգամ չեր անցնում: Ալին նրանց կանչում եր ներս և իր ձեռքով բոլորին եյ մեկ—մեկ բաժին տալիս և ուղարկում:

Ալին մի որ ասել եր հորս.

— Մոխիրներու մեջ պառկելն ենպես եմ կարոտցե՛ր...

Մետաքսների, խալամ հուրիների և վոսկիների մըթնոլորտում տենչում եր յերբեմն անցյալ կյանքը: Հրամայում եր իր սպասավորներից մեկին՝ կապել կարմիր և կեղտոտ գոգնոց, դրսի թուրք ղայֆեճիների նման, և թրքական մի սուրճ բերել, խմելուց հետո խնդրում եր սպասավորից, վոր փող չունի վճարելու, պետք է ապառիկ գրի: Սպասավորը սենյակի դռան յետև ածուխով մի գիծ եր քաշում իբրև սուրճի պարտք, այնպես, ինչպես դրսի մարդիկ անում եյին ղայֆեխանաներում:

Ալին մեծ բավականություն եր զգում այս սուտ ղայֆախանա հաճախելուց:

— Բոշայից փաշա դուրս չի գա,—ասում եր հայրս:

Ալիի Մեքքեյից վերադարձից հետո՝ հայրս նրա միջոցով գլուխ բերեց զանազան գործեր—յետ առավ գրավված հողեր, իր բարեկամներին և ազգականներին բանտից հանել տվեց, մինչև անգամ արտոնություն ստացավ ընդարձակելու հայոց գերեզմանոցը, մի հարց, վորի համար մի ամբողջ սերունդ չարչարվել եր, մինչև անգամ Պոլիս, Սուլթանի մոտ, պատգամավորություն եր գնացել և մերժված վերադարձել...

ԺԹ

Մենք մի հարևան ունեյինք, վոր աղավնի եր խաղացնում—աղվընիր խաղցնող Ակոբը: Մոտավորապես հարյուր թև աղավնի ուներ նա:

Աղվընիկ խաղցնելը համարվում եր ամենաստոր զբաղմունքը:

Ծերերն ասում եյին, «Աղվընիկն անմեղ է, բայց մահ է»:

Մինչև անգամ, յերբ աղավնի եյին տեսնում յերազում-սարսափում եյին նրանք:

Ամեն անգամ, յերբ մայրս տեսնում եր աղավնին մեր կտուրի վրա իջած—ահով եր բռնվում:

— Աղվընիկը տներին (կտուր) վրե է նստեր,—ասում եր և խաչակնքում դողահար:

Հին այդ յերկրում վորևե մեկին անարգելու համար «աղվընիկ խաղցնող» եյին կանչում, յեթե մինչև անգամ աղավնիների հետ կապ եյ չունենար:

Դպրոցում մեր կրոնի վարժապետը դաս չիմացող աշակերտի յերեսին թքում եր և բղավում.

— Դասդ չես գիտեր, աղվը՛նիկ խաղցնող:

Մենք կարող եյինք գանգատել դպրոցի տեսչին, վոր խոսակցության ընթացքում մի աշակերտ մի ուրիշ աշակերտի «աղվընիկ խաղցնող» ածականով է վորակել: Սա ավելի ստոր հայհոյանք եր համարվում, քան մոր հայհոյելը:

Իսկ իսկական աղվընիկ խաղցնողին մատով էյին ցույց տալիս, ինչպես պոռնիկին և գողին:

Վոչ միայն աղվընիկ խաղցնողին աղջիկ չէյին տալիս և աղվընիկ խաղցնողի տղին, այլ նաև աղջկան չե-

յին ուզում: Վորոնում էյին մինչև անգամ թե՝ տղի կամ աղջկա «ճինսին» մեջ աղվընիկ խաղցնող եղե՞լ է թե չէ:

Ցեթե մեկն ու մեկ ասեր թե՝

— Կըսեն քի՝ աղջկա (կամ տղի) մորը հորեղբոր փեսի ախպարն աղվընիկ խաղցնող է եղեր:

Ցեվ յեզրակացությունը պարզ էր— անմիջապես նշանը (յեթե մինչև անգամ տվել էյին) յետ էյին ուղարկում, խնամիական բոլոր կապերը խզում:

Բայց մենք՝ մանուկներս՝ սիրում էյինք աղավնիները, իսկ աղվընիկ խաղցնողները մեր աչքում հերոսներ էյին:

Մանուկների համար այդ բոլորն անհասկանալի, այդ բոլորը տարօրինակ, այդ բոլորն ապշեցնող էյին:

Ջե՞ վոր յեկեղեցում վոսկյա աղավնու բերանից են կաթեցնում մեռոնը—թևաբաց վոսկյա աղավնու:

Աղավնին գովաբանվում էր, իբրև անմեղության նշան, բոլոր յերգերում:

Մանկությունն անմեղություն է:

Ցեվ մենք սիրում էյինք աղավնիներին:

Մենք մի փոքրիկ մարմարյա արձան ունեյինք: Դա մի մերկ, սիրուն աղջիկ էր՝ աջ ուսին մի աղավնի թառած:

Այդ արձանը հայրս Ստամբուլից էր բերել: Դրված էր իր սենյակում, ընկուզե փայտից շինված պատվանդանի վրա, յետևում թավշյա սև ֆոն:

Վորքան վոր մայրս սարսափում էր աղավնուց, բայց էլի լավ բաները նմանեցնում էր աղավնու:

Ցերբ մեծ յեղբորս յերեխա յեր ծնվում, գրկում էր, սիրում, վեր–վեր թռցնում և ասում.

— Ջագո՛ւկս, աղվընիկի կըլմանիս:

Իսկ յերբ բաղնիսում մի սիրուն, ջահել աղջիկ էր տեսնում, ասում էր.

— Լուսինկայի պես մարմին ունի, թամամ ճերմակ աղվընիկ:

Ցես հրճվում էյի, վոր մայրս այդպես բարձր էր գնահատում աղավնիները, տխրում էյի, վոր սարսափից խաչակնքում էր:

Ինձ այրում էր մի տենչանք—ուզում էյի, վոր

ծնողներ չունենայի, լինեյի վորբ, բոլորովին ազատ և դառնայի աղվընիկ խաղցնող:

Հրդեհում եր ինձ այդ ցանկությունը:

Յես ամեն որ բարձրանում եյի կտուրը, վորպեսզի դիտեմ Ակոբի աղավնիները:

Կտուր եյի բարձրանում գաղտնի, վոր վոչ վոք չիմանա: Ամոթ եր մեր ընտանիքի վորևե անդամի համար, թեկուզ ինձ նման աննշան անդամի համար, բարձրանալ կտուրը դիտելու աղվընիկ խաղցնող Ակոբին, ամոթ եր հրճվել աղավնիների թռիչքով: Բայց յես, անդիմադրելի մղումով, բարձրանում եյի և դիտում:

Նրանք գլխկոնծի եյին տալիս մաքուր, ջինջ, կապույտ ոդում:

Հրճվում եյի յես խելագարի նման: Յերբեմն պահվում եյի կտուրի լողտուրի յետև, վորպեսզի աղավնիները չվախենան, իջնեն մեր կտուրի վրա և յես կարողանամ, թերևս, բռնել նրանցից մեկն ու մեկը, դպցնել մատներս փետուրներին: Վոչ մի անգամ ել չեր հաջողվում այդ:

Լողտուրի յետևում պահված՝ յես տեսնում եյի, վոր նրանցից մի քանիսն իջան մեր կտուրի քիվի վրա: Յես միայն տասը քայլ հեռու յեմ նրանցից, դիտում եմ ագահությամբ, այնպես զգույշ, շունչս փորս գցած, վորպեսզի շուտ չթռչեն:

Յես յերազումս տեսնում եյի Ակոբի աղավնիները: Իջել են նրանք գլխիս, ուսերիս, թևերիս: Լսում եմ նրանց մրմունջը:

Սկսում եմ ցատկել, պարել:

Նրանցից վոչ մեկը չի փախչում, բռնում եմ, շոյում, սիրում, գգվում, համբուրում, դնում ծոցիս մեջ:

Հանկարծ զգում եմ, վոր յերազ ե, բայց շարունակվում ե յերազը, աղավնիները գլխիս վրա յեն, ուսերիս, ծոցումս:

Զարթնում եմ, ամեն ինչ չքանում ե, միայն դեռևս, կարծես, շարունակում եմ լսել նրանց մրմունջը:

Յերկար շարունակվում ե սպիտակ աղավնիների յերազի անիմանալի խայտանքը:

Յես չեյի կարողանում հասկանալ թե՝ ինչո՞ւ արհամարում եյին աղավնիները, ինչո՞ւ եյին անարգում, անպատվում աղվընիկ խաղցնողներին, մանավանդ աղվընիկ խաղցնող Ակոբին:

* * *

Յերեկո յե: Արևը դեռ չի թաղվել հեռավոր սարերի յետևը, քիչ տեղացող անձրևը մաքրել ե յերկրի դեմքը:

Պայծառ լույս ե: Լուսամուտների ապակիները փածկլտում են:

Ակոբը բարձրացավ կտուրը, բաց արեց աղավնիների դռնակը:

Աղավնիները թռան դուրս ուրախ համերգով:

Վոմանք սպիտակ են, կաթնագույն: Թռչելիս մի բմբուլ ե պոկվում, որորվելով ընկնում գետին, մանուկները վազում են, իրար ձեռքից խլում, ձեռք բերողը ամրացնում ե գտակին: Վոմանք ժայռային մուգ-կապույտ գույն ունեն, վոմանք՝ տեղ-տեղ սպիտակ, մուգ գույնով, լուսնկայի կաթնային սկավառակի վրա մուգ գույնի թղթի կտորներ փակցվածի նման, վոմանք՝ ծխախառն բոցի գույնով, արևմարի վերջին շողերի նման, վոմանք՝ դեղնագույն կարմիր, կարծես աշնան տերևներ են հագել:

Ոդում յերբ կաթնագույնները հանդիպում են բամբակի կույտերի նման սպիտակ ամպերի ֆոնին, ել չեն յերևում, կարծես հալչում են, իսկ յերբ ամպերը մթին եյին լինում՝ մոխրագույններն եյին անեանում, կարծես լուծվում մթին ամպերում:

Ահա մի զույգ, կրծքները կլորաձև կանաչին ե տալիս, բայց յերբ մի ակնթարթ փոխվում են դիրքերը, կանաչը կորչում ե և մանիշակագույնին ե տալիս:

Նազանքով և մրմունջներով կտուրի վրա քայլում է մի ուրիշ խումբ, ամբողջովին շագանակագույն— սուրճի և շաքարի փոշու խառնուրդ—երբ թռչում են, պոչերն աղեղնաձև բացած՝ քչքչում են, վիզերը հարատև շարժման մեջ, ջրի նման շարժուն—այնքան թեթև, դարձդարձիկ ու լույծ՝ ալիքի վրա նետված գնդակի նման:

Յեվ աղավնիները մահ եյին, չար, սև՛ մահ:

Յես յերբեք չեյի կարող հասկանալ մթին այս առեղծվածը:

«Աղվընիկ խաղցուց, տունը մոխիր դարձավ»— ասում եյին հին մի աղվընիկ խաղցնողի մասին:

***

Աղվընիկ խաղցնողները մշտական կռվի մեջ եյին: Յերբ նրանք տեսնում եյին աղավնիներ ոդում ճախրելիս՝ բաց եյին թողնում իրենց լավագույն աղավնին, վորպեսզի գնա, նրանցից մեկն ու մեկին քաշի, բերի:

Իրար ձեռքից աղավնիներ եյին խլում—սա յեր աղվընիկ խաղցնելու հմայքը:

Աղավնին չափազանց դարպասող թռչուն է, դյութող ու դյութվող:

Սեռն աղավնու ամենաուժեղ բնազդն է:

Տաքացած տափակ կտուրի վրա, յերբ արևի շողը կաթկթում է հեղուկի նման, կտուցներն այրվում են սիրուց, քչքչում են, թավլտում, կտուցներն ընկղմում իրենց փետուրների մեջ, կտցահարում են մարմինները խայտանքից հարբած, մոտենում են իրար, սիրուց կրակված, քվլրտվում են, կտուցները զարնում իրար, թըռնում իրար վրա:

Աղվընիկ խաղցնողը տեսնում եր, վոր մի կտուրից համարձակ ոդը բարձրացավ մի մարի (եգ):

Գեղեցիկ է: Փոփոխակի մանիշակագույն և կանաչ կուրծքը փափռում է արևի շողերի տակ:

Հանում է մի դարպասող պապի (արու), «ճինս» աղավնի, տասնյակ հաղթանակներ տարած:

Պապին գնում եր, ոդում դարձդարձիկ շարժումներ գործում, դառնում եր, անվերջ դառնում, մինչև հմայեր մյուսին, քաշեր, բերեր իր բույնը:

Աղավնիների այդ պայքարի ժամանակ յերկու աղավնիների տերերը, տարբեր կտուրների վրա, բռնվում եյին անսահման անձկությամբ: Նրանք սրտատրոփ սպասում եյին վախճանին, ներքևից ընտանի սուլոցներ բաց թողնելով վոգևորելու և քաջալերելու իրենց պայքարող աղավնիներին:

Մինչև պայքարի վախճանը՝ նրանք ապրում եյին կես հոգևարք: Մութը պատում եր նրան, վորի աղավնին—հմայված մյուսից—գնում եր նրա յետևից:

Դրանից սկսվում եր մահացու թշնամությունը— մինչև արյուն, մինչև մահ:

Պարտված աղավնու տերը զգում եր իրան ցեխի մեջ տրորված, անպատված: Նրա համար ավելի նախընտրելի յեր, վոր կնոջը բռնեյին բոզության մեջ, խայտառակվեր ամբողջ քաղաքում, քան թե պարտվեր աղավնիների պայքարում:

Թշնամությունը տևում եր սերունդից սերունդ, չեր մոռացվում ահավոր անպատվությունը:

Յեվ հաճախ պարտված աղավնու տերը, չհամբերելով, վոր մի որ անցնի և պատահարը դառնա պատմություն, գալիս, կանգնում եր հաղթանակող աղավնու տիրոջ տան շեմքին:

Փայլում եր դանակը:

Հավաքվում եր աղվընիկ խաղցնողների և աղավնու սիրահարների խումբը, բաժանվում յերկու մասի:

— Խարդախությամբ տարավ աղվընիկս,—գոչում եր պարտվողը:

Ի՞նչ խարդախություն կարող եր լինել անմեղ թըռչունների սիրային պայքարում, այն ել ոդում:

— Յետ տի տաս աղվընիկս, չե նե... և ցույց եր տալիս դանակը:

Հաղթանակող աղավնու տերը, շողացնելով մի ուրիշ դանակ, հայտարարում էր.

— Ուր կուզես նե՝ գնա, չիմ տար, երիկ մարդ ես՝ դիմացի՛ր:

Դանակները զարկվում էին իրար, նրանց զիլ և սուր զնգոցը ճեղքում էր օդը—իրարանցում, խռնվում, քաշքշոց, շորերի պատառոտում, կանանց և յերեխաների լաց և...հոսում էր արյունը մեկն ու մեկից:

Եթե պարտվող աղավնու տերն էր արյուն թափողը, ամիսներով նրան չէր կարելի տեսնել քաղաքի փողոցներում: Նա փակվում էր տանը, լուսամուտների վարագույրները քաշում:

—Կնկանը վարտիկն է մտեր, դուրս չելլեր,—ասում էին նրա հակառակորդները:

Իսկ յեթե հաղթանակող աղավնու տերն էր արյուն թափողը, վերքը կապելուց հետո՝ դուրս էր գալիս փողոց, գլուխը բարձր բռնած, ֆեսը հասցրած մինչև հոնքերը և ծոցն առաջ—ամենագոռոզ և ամենալկտի ֆես գնելու ձևը—քայլում էր վոչ վոքին չբարևելով, վոչ վոքի յերեսին մտիկ չտալով: Ռազմի դաշտից վերադարձած արյունարբու հերոսի նման:

Ահա թե ինչու ծերերն ասում էին, վոր աղվընիկն անմեղ է, բայց մահ է, աղավնու կաթնագույն թևերի տակ արյուն կար և մահ:

Բայց այդ զարհուրանքից և արյունից հետո էլ՝ իմ հոգին ձգտում էր դեպի աղավնիները:

Երբ փողոցում դանակներն էին շողում և ատելությամբ զարկվում իրար, վերևում, պաղպաջուն և կապույտ յերկնքում, աղավնիները շարունակում էին ճախրել և դառնալ իրենց անմեղության պարը:

Ի՞նչ կապ ունեին աղավնիները մարդկանց պատվի, դիրքի և չարության հետ: Նրանք ճախրում էին արևի շողերի ծովում, շողերի հեշտագին ալիքներում, ի՞նչ փույթ թե ներքևում մարդիկ արյուն էին թափում և թափված արյան հանցանքը փաթաթում իրենց սպիտակ և անմեղ վզերին: Մեկը հմայվում էր մյուսից,

հանձնվում էր նրան, հետևում էր, գալիս, իջնում էր նրա տաքուկ բույնը, գիշերն ամբողջ քչքչում—կտուցը կտուցին զարկում, հարբում սիրուց և առավոտյան, արևի շողերի տակ, շարունակում սիրո անմեղ խաղը:

***

Մեր հարևան աղվընիկ խաղցնող Ակոբն արհեստով սափրիչ էր:

Նա այդ արհեստին որվա քիչ ժամանակն էր նվիրում: Նա գրեթե միշտ կտուրի վրա յեր, աղավնիներն էր թռցնում, յետ կանչում, նորից բաց թողնում, հետևում յուրաքանչյուր աղավնու թռիչքին, հետևում սրտատրոփ և հափշտակված:

Ակոբը թեև լավ ածիլող, մաքրասեր սափրիչ էր, բայց սակավաթիվ հաճախորդներ ուներ, վորովհետև հաճախորդ վաստակելու ջանք չէր թափում:

Մենք, մանուկներս, գնում էինք նրա կրպակը: Ակոբը գործի վրա յէ, սապնել է հաճախորդի յերեսը, սպիտակ փրփուրով լցրել, միայն քիթն ու աչքերն են ազատ: Ակոբը հենց փորձում է ածելին սրել կաշվի վրա, վորպեսզի սկսի սափրել, մենք սկսում ենք խոսել քաղաքում մի վորևէ անուն հանած աղավնու մասին:

— Կըսեն քի՝ Պետրոսի չիլը յերկու ձագ հաներ է,—ասում է մեզանից մեկը և գաղտագողի ժպտում:

Մենք միայն իրար հետ ենք խոսում և իբր թե սպասում ենք մազերնիս խուզելու, բայց Ակոբը չի դիմանում, թողնում է հաճախորդին և մոտենում մեզ.

— Ուրկե՞ լսեցիք, վո՞վ ըսավ,— հարցնում է անձկագին:

— Մինասն ըսավ:

— Չէ՛, ջանը՛մ:

— Հա, իրավ է, յերկու ձագ:

— Մինասը սուտ կը խոսա...

Հաճախորդը գոռում է, յերեսի օճառի փրփուրները

Հետզհետե սրմքում են: Քթի տակը, ոճառի պղպջակների պայթելուց՝ քորվում է:
— Ածի՛լե երթամ, բե՛ ջանըմ:
— Ցատ մի խոսա՛, եստեղ գործ ունիմ,— պատասխանում է Ակոբը և շարունակում վիճել չարաճճի մանուկների հետ աղվընիկ խաղցնող Պեյրոսի չիլ աղավնու մասին:
— Ծո՛, չո՛ւտ ըսե, վո՞վ ըսավ, քեզի կըսիմ,—նորից հարցնում է Ակոբը մտահոգ:
— Աչվըներովս տեսանք:
Ակոբը տխրում է: Դա նշանակում է, վոր Պեյրոսը չուտով առավելություն է ձեռք բերելու: Պեյրոսի չիլը Դիարբեքիրից են բերել, համարվում է փոքր Ասիայի ամենաազնիվ ճինսերից մեկը, յերկնքից կարող է քաշել տանել վորևե աղավնի և նա աճել է յերկուսով:
Մութը պատում է Ակոբին:
— Չիլի անունը մենծ է, ամա աղքան չէ,—հարում է Ակոբն իրան մխիթարելու համար, բայց թախիծը թանձրանում է նրա աչքերում:
Հաճախորդը զայրանում է:
— Տ' ածիլե՞ս թե չէ,— և հայհոյում է:
Ակոբի աչքերը թարս ու թուրս են նայում, հաճախորդը վախենում է այդ աչքերից—Ակոբը, հանկարծ, կարող է փոխել ածելին իսկական դերը: Ակոբը մոտենում է հաճախորդին—ածելին ձեռքը:
— Ի՞նչ կուզես,—հարցնում է հանդիստ, բայց սարսափելի յե այդ հանդիստ տոնը, վորովհետև դա զայրույթի բարձրագույն կետն է:
Հաճախորդը մեղմանում է և աղաչական հարում.
—Կուզիմ քի, ածելես երթամ:
Ակոբը քաշում է սրբիչը, մաքրում հաճախորդի յերեսի ոճառը և՝
— Վերջացավ, յալլա՛...
Հաճախորդը վեր է կենում նստարանից, փեսը դնում և հեռանում յեզրակացնելով, վոր ազատվեց ստույգ վտանգից:

— Ուրիշ գործ չունիմ դե՝ իրեն յերեսը տ'ածիլիմ,—մրթմրթում է Ակոբը հաճախորդի յետևից:
Մենք էլ հեռանում եյինք, Ակոբին թողնելով լուռ տանջանքում: Իսկ նա մի սիգարա յեր փաթաթում, քաշում արագ-արագ, փակում կրպակը, գնում տուն, ճանապարհին աչքերը յերկնքին, տեսնելու համար թե՝ ո՞ւմ աղավնիներն են ճախրում յերկնքում:
Ակոբը տուն գնալուց հետո՝ բարձրանում եր կտուրը, դուրս բերում իր աղավնիները, մոռանում Պեյրոսի Չիլը, ինքն էլ ունի փոքր ասիական հուշակ վայելողներ:
Բռնում եր վոմանց, գլխները կոխում բերանը (դա նրա սիրելու ձևն եր) և բաց թողնում:
Կտուրի վրա, Ակոբի գլխավերևը, զրնգում եյին աղավնիների թևաբաղխումները: Ամեն մի թևաբաղխման՝ Ակոբը ներքևից հափշտակությամբ բացականչում եր.
— Ո՛խ, թևերուդ ղուրբան, ո՛խ...

* * *

Մի օր, մի պարտված աղավնու տեր կանգնեց Ակոբի դռանը, հետն առած կողմնակիցներին (գրեթե բոլորն էլ Ակոբի աղավնիներից դաղված աղվընիկ խաղցնողներ):
Յեկավ, կանգնեց և գոռաց.
— Դո՛ւրս եկուր:
Յերբ Ակոբի կինը լսեց գոռոցը և փոքրիկ լուսամուտից տեսավ փողոցում կազնած աղվընիկ խաղցնողներին, մանավանդ յերբ տեսավ փայլփլացող դանակը, գլխաբաց, նիհար, մոմի նման դժգույն ձեռքերը պարզած՝ վազեց դեպի կտուր տանող սանդուղը:
Այդ ժամանակ Ակոբը, դանդաղ, ծանր քայլերով, իջնում եր կտուրից: Դեմքն ամբողջովին այլափոխված եր, շրթունքները դողում եյին զայրույթից:

կինն ընկավ ամուսնու վոտը․

— Վոտքդ պագնիմ, մ՚երթա։

Բայց Ակոբը հավի նման շպրտեց կնոջը։

— Երիկ մարդ իմ, շատ մի՛ խոսա։

Նա լուռ առաջացավ դեպի պահարանը, վորի բանալին միայն իր մոտ եր լինում։ Բանալին ծակը խրելու հետ միասին՝ կինն ընկավ սալահատակին ուշագնաց։

Ակոբը բաց արավ պահարանը, դուրս բերեց հին, պապենական դանակը քաշեց պատյանից, համբուրեց սառը պողպատը, նորից դրեց պատյանը և գնաց դուրս։ Աղջիկը տանը չեր, կինը մնաց սալահատակին ընկած։

Ակոբի դռան առաջ յերևնալը և դանակը բոցի նման շողացնելը բավական յեղավ, վոր հակառակորդները նահանջեն, վորովհետև մինչև այդ Ակոբի կողմնակիցներն ել հավաքվեցին։

Քիչ անց վո՛չ վոք չմնաց Ակոբի դռանը, այն ժամանակ Ակոբն ամոթ չզգաց ներս գնալու։

Ակոբը տեսավ կնոջն ընկած գետին, բարձրացրեց նրան, մի քիչ ջուր սրսկեց յերեսին և յերբ կինն ուշքի յեկավ, ասաց․

— Հեչ ջիգեր չունիս, կնիկ, մեղք վոր ի՛մ կնիկս ես։

*
* *

Բայց Ակոբի կնոջ սիրտն ուրիշ վերք եր կրծում, նա դանակից վախեցողը չեր, շատ եր տեսել, տեսել եր և ամուսնու արյուն թափելը, շատ անգամներ եր նրա վերքը կապել։

Կինը մտածում եր այն բանի մասին, վոր աղջիկը մեծացել եր և յեթե ամուսինը ձեռք չքաշեր աղվընիկ խաղցնելուց՝ սիրուն աղջիկը տանն եր մնալու։

Առհասարակ յերբ աղավնի խաղցնողները հասակնին առնում եյին, թողնում եյին աղավնիները։

Մինչև անգամ չատերը թողնում եյին ամուսնությունից անմիջապես հետո։ Բայց վոչ մի հույսի նշույլ չեր յերևում, վոր Ակոբը թողնի աղավնիները և խաղաղ զբաղվի իր արհեստով։

—Վազ անցիր աղվընիկներեն, ա՜յ մարդ,— աղաչում, պաղատում եր կինը,—աղջիկ զավակ ունիս, տունը կը մնա, մեղք ե։

Ակոբը ցնցվում եր, մարմինը փուշ-փուշ լինում, յերբ կինն աղջիկ զավակի խոսքն եր մեջ գցում։ Նրա հոգու առաջ տնկվում եյին կաթնագույն աղավնիները և կաթնագույն և սև մազերով աղջիկը և չեր կարողանում ազատվել մեկն ու մեկից, մռայլվում եր, տանջվում, թախիծը, թանձր, մթին մշուշի նման իջնում եր ճակատի վրա, և չգտնելով վոչ մի յելք՝ ապտակում եր կնոջը և գոռում․

— Կենե սկսար վռվռալ, հերիք ե, մաչեցիր։

Կանչում եր աղջկան, դիտում նրա հասակը, ձմեռուկի կտերի նման սև աչքերը, նստեցնում ծնկանը, շոյում մազերը և արցունքոտ աչքերով շշնջում․

— Գըզըմ, չինար բոյլի գըզըմ... *)

Արցունքները չեյին թողնում, վոր շարունակի, վեր եր կենում, բարձրանում կտուրը, բաց թողնում աղավնիները դեպի պաղպաջուն և կապույտ յերկինքը, մոռանում աշխարհն ու իր չար ոբենքները։

Ցերբ ողում գրնգում եյին աղավնիների թևերը, մռայլը փարատվում եր Ակոբի աչքերից, ճակատի թախիծը սրբվում և նրա ամբողջ դեմքը փայլում եր անձրևից լցված կանաչի նման։

Բայց կինը հանգիստ չեր տալիս նրան, կրկնում եր անդադար․

— Աղջիկ զավակ ունիս, հողը դիր, ազատվի։

Բայց Ակոբն ինչպե՞ս ազատվեր աղավնիներից։

Աղավնիների ամեն մի բմբուլը կապված եր նրա հոգու հետ։

Որվա ամեն մի րոպեյին, ինչ ել վոր աներ, քնած

*) Աղջիկս, չինար հասակով աղջիկս։

թե արթուն, նա ապրում էր աղավնիների հետ, լսում էր նրանց մրմունջը:

Փողոցում քայլելիս, հանկարծ մի թռչուն էր թռչում նրա գլխի վրայից:

Ակոբը ցնցվում էր և աչքերը հառում վեր:

—Յես կարծեցի քի՝ աղվընիկ է,—ասում էր Ակոբը և ժպտում:

* * *

Թափվեց տիեզերքի ձյունը նրա գլխի վրա: Դարձավ ալեխառն—նման իր մոխրագույն աղավնիներին—բայց նա հոգով մնաց մանուկ, ինչքան հասակն առավ, ավելի և ավելի մանկացավ:

Օրերով խանութը չէր բաց անում, վորովհետև կարող էր հաճախորդին վշտացնել:

Ածիլած ժամանակն աչքը լուսամուտից դուրս էր:

Յերբ օդում աղավնիներ էր տեսնում, թողնում էր հաճախորդին, գալիս կանգնում էր դռան առաջ, ածելին ձեռքը, սպիտակ խալաթը հագին, մոռանում էր, վոր հաճախորդը սպասում է:

Յերբ աղվընիկ խաղցնողն ամուրի չէր լինում, մարդիկ նրա մորը, կամ յեթե մեծ քույր ուներ՝ մեծ քրոջը, իսկ յեթե վորևէ հարազատ չունենար՝ իրեն էին հայհոյում:

Յերբ կին ունենար՝ կնոջն էին հայհոյում, իսկ յեթե մեծ աղջիկ ունենար՝ աղջկան էին հայհոյում, մոռանալով բոլոր մյուսներին:

Ակոբի աղջիկը մեծացել էր, մազերը հասել էին մինչև սրունքները, լցվել էին նրա կրծքերը, թշերն ու շրթունքները նռան նման կարմրել:

Եվ մոռացան նրա կնոջը և սկսեցին հայհոյել աղջկան:

— Վա՛յ յես քու աղջկանդ…

Ակոբի կինն ավելի ընկավ ամուսնու յետևից.

— Ա՛յ մարդ, քիչ մի մտմտա, մեղք է աղջիկդ: Աստված, աղջիկ զավակ չունենայի, մուրայի ու ապրեյի:

Մոր համար մեծ, անլուծելի պրոբլեմ էր— հասած աղջիկը տանը:

Իհարկե, աղջկան ուզողներ կային, բայց բոլորն աղվընիկ խաղցնողներ էին:

Թե Ակոբը և թե նրա կինը յերդվել էին, վոր իրենց աղջկան աղվընիկ խաղցնողի չտային:

— Վո՞ւյ, ձունը մազվի գլխիս, աղջիկս աղվընիկ խաղցնողի՞ն տամ:

Անդուլ ու անդադար կինը կրկնում էր.

— Աղվընիկները թող կըսիմ, հերիք է, սաղ քաղաքն աղջիկ զավկիդ կը քֆրե:

Ակոբն ի՞նչ կարող էր անել, ի՞նչպես կարող էր փակել վողջ քաղաքի բերանը.

— Յես ըլ բյուդունին կնիկներն ու աղջիկները…— փոխադարձ հայհոյում էր Ակոբը և իրան մխիթարում:

Ժամանակի ընթացքում Ակոբն ինք էլ զգաց, վոր փոխադարձ հայհոյանքը վոչնչով չէր կարող թեթևացնել աղջկա զազրելի բեռը:

Արդեն խեղճ աղջկան հասել էր կյանքի խոշորագույն հարվածը—կիսատ էր թողել դպրոցը, վորովհետև մինչև անգամ ուսուցիչները նրան «աղվընիկ խաղցնողի աղջիկ» էին կանչում:

Հենց վոր դասը մի քիչ վատ իմանար, ասում էին.

— Հը՞, հարդ աղվընիկ կը խաղցնե՞:

Ի՞նչ կապ կար աղվընիկ խաղցնելու և դասի մեջև, բայց ասում էին, անդադար կրկնում:

Ակոբը միտք արավ, միտք արավ և գտավ ճարը:

Մորուք թողեց:

Առհասարակ կռվի ժամանակ, յերբ կռվողը մորուք էր ունենում՝ կնոջը կամ մորը չէին հայհոյում, հայհոյում էին մորուքին:

Ակոբն էլ մորուք թողեց, վոր մորուքին հայհոյեն:

Կինը չհասկացավ մորուք թողնելու նպատակը:

Մինչև անգամ ծաղրում եր ամուսնու մորուքը:

— Գլխուս տերտեր դարձավ,—ասում եր:

Նա ելի հետապնդում եր, վոր իբրև հայր մտածի աղջիկ զավակի բախտի և պատվի մասին:

— Ի՞նչ տ՛ենես աղջիկդ, տանը թթո՞ւ տի դնես,— մի օր հարց տվեց կինը:

Ակոբը պատասխանեց.

— Շատ մի վռվռա, իշդե մորուք թողուցի:

Իհարկե, մորուքն ել չօգնեց, վոր մարդիկ մոռանային անմեղ աղջկան, նրանք չարունակեցին հայհոյել, յերբ տեսնում եյին հորը կտուրի վրա աղվընիկ թռցնելիս.

— Վա՛յ քու աղջկանդ...

Ակոբն իջնում եր կտուրից, տեսնում եր աղջկան աղի արցունքներ թափելիս—հարցնում եր.

— Աղվընիկս, ինչո՞ւ կուլաս:

— Նորեն քփրեցին,— պատասխանում եր աղջիկն արցունքների միջից:

Ակոբը բռնում եր մորուքը, հոգոց քաշում և հեռանում:

* * *

Տան յեկամուտը հետզհետե պակսեց: Խանութից վո՛չ մի հույս չկար: Շաբաթվան մեկ յերկու օրը հազիվ եր բաց անում, միայն պատահական հաճախորդներ ընդունում:

Ակոբը վորոշեց զոհել իր սրտի կեսը:

Հինգ կարմիր վոսկով նա ծախեց իր լավագույն ճինս աղավնիներից մի զույգ:

Այդ մի զույգ աղավնին նրա ամբողջ սիրտն եր, բայց վորովհետև նրանցից ձագ եր ունեցել—հաշվում եր սրտի կեսը:

Ակոբը յերբ վոսկիներն առավ և ծոցից դուրս բերեց թանկագին աղավնիները, հանձնեց նոր տիրոջը, նրա

աչքերից արցունքի կաթիլներ ընկան աղավնիների փետուրների վրա:

Բայց արցունքները սրբեց, ուրախության մի ալիք վողողեց նրա յերեսը: Հինգ վոսկին բավական եր մի տարի ապրելու համար, և պարտավոր չեր խանութը բաց անելու և հաճախորդների «քթի հոտը քաշելու»:

Յերբ նա տուն յեկավ, աղջիկը դիմավորեց նրան:

Ակոբը, հանկարծ, ուրախությունից բացականչեց.

— Աղվընի՛կս, ճերմա՛կ աղվընիկս:

Նրանք փաթաթվեցին իրար:

Մի քանի անգամ Ակոբը վորոշեց ծախել աղավնիները, վոչնչացնել տուն-տեղ, գնալ մի ուրիշ քաղաք, թերևս մի ուրիշ յերկիր, վորպեսզի մարդիկ չիմանային թե ինքը յեղել ե աղվընիկ խաղցնող: Աղջիկը մեծանում եր և տանն եր մնում:

Վորքան վոր վորոշում եր ծախել, բայց սարսափում եր այդ հեռապատկերից:

Գիշերները, կես քուն, կես արթուն, նրան այնպես եր թվում, վոր ինչ վոր մարդիկ յեկան, սարսափելի դեմքով մարդիկ, բարձրացան կտուրը, բայց արին աղավնիների դռնակը և տանում են աղավնիները, տանում են, տանում:

— Զիմ տար, մի տանիք,—գոռում եր Ակոբը քնի մեջ, վորից ահաբեկվում եյին կինը և աղջիկը:

Վեր եր ցատկում այսահարի նման, վոտաբոբիկ բարձրանում կտուրը, բաց անում աղավնիների դռնակը, մտիկ տալիս նրանց մրմունջին, հանգստանում և իջնում ներքև:

Վերջապես Ակոբը վորոշեց վո՛չ թե ծախել թռչունները, այլ մորթել վոչնչացնել:

Ակոբը չեր կարող հաշտվել այն մտքի հետ, վոր աղավնիներն ապրեյին, լինեյին վողջ, թռչեյին, մրմնջեյին և իրը չլինեյին:

Մի յերեկո Ակոբը հայտնվեց կտուրի վրա:

Յերկար ժամանակ եր նա կտուրը չեր բարձրացել:

Աղջկա վիճակը տանջում եր նրան:

Յերանի յեր տալիս, վոր աղջիկը չլիներ, ինքն ազատ լիներ:

Ինքը և աղավնիները ... դա կլիներ դրախտային կյանք, կյանքի բաժակը կլիներ քաղցրությամբ լեփ—լեցուն:

Բայց աղջիկը կար և այրում եր իր հորը:

Կտուր բարձրանալիս՝ աղջիկը տեսավ հորը:

Նրա դեմքը պարզապես զարհուրելի յեր, ավելի զարհուրելի, քան յերբ դանակը վերցնում եր և փողոց դուրս գալիս կռվի:

Աղջկան այնպես թվաց, վոր հայրը նիհարել, չափազանց ծերացել ե:

Աղջիկը վազեց անմիջապես մորը մոտ:

Չկարողանալով վոչինչ ասել, փաթաթվեց նրան և սկսեց հեկեկալ:

— Ինչո՞ւ կուլաս, կինե՞ քֆրեցին:

Աղջիկը հազիվ կարողացավ արտասանել.

— Հայրիկը...

Մայրը վազեց դեպի կտուրը:

Իսկ Ակոբը բարձրացավ կտուրը, բաց արավ աղավնիների դռնակը: Աղավնիները դուրս թռան:

Նրանց համերգը տարածվեց ոդում:

Շատերը թռեցին Ակոբի վրա—կարծես կարոտել եյին:

Ակոբը լուռ կանգնեց պահ մի, հետո դարձավ հեռավոր սարերի յետև մայր մտնող արևին, հանեց ֆեսը, բռնեց աղավնիներից մեկը, քաշեց դանակը...

Թռցրեց աղավնիներից մեկի գլուխը:

Արյունը ժայթքեց նրա կրծքի սպիտակ շապկի վրա:

Ձեռքերը դողում եյին:

Բռնեց յերկրորդ աղավնին, բայց ձեռքերը թուլացան, դանակն ընկավ գետին:

Այդ ժամանակն եր, վոր կինը բարձրացավ կտուրը, տեսավ արյունոտ դանակը գետնին, ամուսնու արյունոտ կուրծքը և նրա սարսափահար աչքերը:

Կինը չնշմարեց մորթված աղավնին, վոր ընկած եր մի

քանի քայլ հեռու և կարծեց, վոր Ակոբը դանակով վիրավորել ե իրան:

Կտուրի վրա բարձրացավ աղիողորմ ճիչ:

Աղջիկը վազեց վեր, փաթաթվեց մեկ մորը, մեկ՝ հորը:

Կնոջ ճչից յես վազեցի մեր կտուրը:

Շատերն եյին հավաքվել թե փողոցում, թե կտուրների վրա:

Դիտողները չիմացան թե ինչ եր կատարվում: Նրանք կարծեցին թե աղվընիկ խաղցնող Ակոբը կնոջն եր ծեծում և աղջիկն աշխատում եր մորն ազատել հոր ձեռքից:

Յեվ ելի հայհոյեցին անմեղ աղջկան:

— Վա՜յ յես քու աղջկանդ...

Իսկ աղվընիկ խաղցնողը, արցունքոտ աչքերով, սեղմեց իր մեկ հատիկ աղջկան աղավնու արյունով ներկված իր կրծքին և շշնջաց.

— Իմ ճերմակ աղվընիկս... իմ բյուզուն աղվընիկներս քըզի ղուրբան կենիմ...

Ներքևում այդ ալեխառն գլխով մանուկը լաց եր լինում, թափում եր կոպերն այրող արցունքներ:

Իսկ յերկնքից մաղվում եր մանիշակագույն մոխիր աշխարհի վրա:

Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի

Վերջին, վերջին անգամ իմ քայլերս ուղղվում են դեպի գերեզմանատուն, վերջին այցը տալու իմ հոր շիրմին:

Ինչքա՜ն է աճել այն թթենին, վոր տնկել ենք մենք նրա շիրմի գլխավերևում:

Ուզում եմ խոսել հորս հետ: Նա կանգնած է իմ առաջ իր բարձր հասակով: Տխուր է, տխո՜ւր ինչպես մի մենավոր ծառ ամայի հովտում: Լռություն, անսահմա՜ն լռություն...

Նայում եմ թթենուն, աչքերս խորասուզվում են դեպի նրա արմատները, վորոնք բյուրավոր մազմզուկներով մտել են հորս գանկի մեջ և կերել ամբողջ ուղեղը, ահա բերանից ու աչքերից ներս են խուժում ծարավ թելիկները դեպի գանկի խոռոչը:

Թթի այն հատիկը, վոր լեցուն է քաղցրությամբ, վերցրել է իր հյութը հորս գանկից և սրտից...

Թթենին—նա իմ հայրն է ճյուղավորված և կանաչած: Քամին յերգում է նրա տերևների մեջ: Վո՛չ թե հայրս է լսում այդ յերգը, այլ ինքն է յերգում իր տերևներով: Թթենու ստվերները դրկում են ինձ— հորս թևերն են փաթաթվում ինձ ու բարձրացնում վեր:

Հա՛յր, դու գրկում ես ինձ մահվան ջերմաջերմ քո թևերով և քամին յերգում է:

Յես լսել եմ քամու այդ յերգը, լսել եմ իմ սրտում, յերբ կարոտով, կարոտով, կարոտով յերազել եմ քեզ, հա՛յր, դա քո արյան յերգն է, վոր կարկաչում է իմ յերակներում, դա այն յերգն է, վոր արևն է յերգում, յերգում է յուրաքանչյուր փոքրիկ խոտ, յերգում է լուսնի ամեն մի արծաթյա շող, վոր թափառում է մեր պարտեզի վարդերի կածաններում:

Յե՛րգ, յերգ անվերջանալի և հավիտենապես սարսուռ, յերգ, վոր կաթում է յերկնքի մանիշակների բաժակներից, կաթում է արևագույն հողի մեջ և նորից բարձրանում վեր իբրև ծաղիկ և իբրև տերև, յերգ, վոր վազում է գարնան հեղեղների հետ, գետի ալիքներով, յերգ, վոր փռվում է անսահման ծովերի վրա իբրև կապույտ անդորր:

Համբուրում եմ շիրիմը, փաթաթվում եմ թթենու բունին— ահա փաթաթվում եմ հորս մեջքին:

Քամին յերգում է, թթենու տերևները սվսվում են:

Անվախճան յերգ, անվախճան կյանք, անվախճան մահ, անվերջ թախիծ և անվերջ խնդությո՜ւն...

* * *

Վերջին անգամ յերևում է քաղաքն իբրև վոսկյա մի ծառ լեռների կապույտ ծոցում:

Ճամբորդությո՜ւն...

Կառքը սլանում է հին հռոմեական ճանապարհով դեպի ծովը, դեպի Բյուզանդիոն և Հռոմ:

Առավոտ: Ձիերի սմբակները կայծեր են արձակում:

Գիշեր: Ձիերն ուտում են, իսկ մենք՝ հոգնած աստղերը դիտելուց՝ խորասուզվում ենք և քնի քնարն օրորում է մեր հոգնածությունը:

Մի առավոտ տեսնում եմ ծովը: Ո՞ւր է ծովը և ո՞ւր է յերկինքը: Սահմանագծերը գրկել են իրար:

Ծո՜վը... Հիշեցի հպարտությամբ, վոր հայրս ինձ կանչում էր—«իմ ծովաչվի տղաս»:

Յերկու գիշեր և ահա կը գտնեմ ինձ Պոլսում— իմ յերազների քաղաքը:

Ցես կուզեյի, վոր Պոլիսը լիներ այնպես, ինչպես յերազել եմ: Թերևս ավելի չքնաղ եր, քան իմ յերազածը: Ավելի չքնաղը յես չեյի ցանկանա: Ցես ձգտում եյի իմ յերազին:

* * *

Այդ հին յերկրում արևը ճչում ե մրգի հատիկներով, հողը շնչում ե անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավոտներ և իջնում են հրաթև վերջալույսեր, բարձրանում և կապույտում լողանում ե մի արծաթյա թաս՝ մեջը լիքը նոր կթած կաթով, տիեզերանում ե գիշերն աստղահնչուն, ծառերը սլանում են դեպի յերկինք և բոլոր ծաղիկները սարսռում են և շշնջում:

Այժմ յես կուզեյի հանգչեցնել իմ հոգնած գլուխն այդ յերկնքի կապույտ մարմարին և լսել այն յերգը, վոր հեղեղում են ծառերը, առվակներն ու աստղերը:



Պատ. խմբ՝ Ցե. Զարենց
Տեխ. խմբ՝ Տ. Խաչվանքյան
Սրբագրիչներ՝ Օննիկ Գասպարջյան և Ա. Հալայան

Հրատ. 2635, Գլավլիտ 8205 (բ), Պատվեր 1614, Տիրաժ 3000
Պետհրատի Տպարան, Յերեվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0339912

891.99
ր — 71